



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



241

---

b-20

1 2 1 2







244  
b-20

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԶՈՐՍ ԳՐԻՒ ՎՐԱՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

Տ. ՅՈՎՃԱՆՆՈՒ Վ. ՃԱՄԳԱԶԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

---

1855

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՊԱՐԿՈՍՅԱՆ ԿՆՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՊԱՐԿՈՍՅԱՆ ԿՆՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՊԱՐԿՈՍՅԱՆ ԿՆՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՊԱՐԿՈՍՅԱՆ ԿՆՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՊԱՐԿՈՍՅԱՆ ԿՆՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

14324



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՊԱՐԿՈՍՅԱՆ ԿՆՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՊԱՐԿՈՍՅԱՆ ԿՆՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

## ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ՄԸ ԲՈԼՈՐ ԳՐԻՒՆ ՎՐԱՅ

**Ի**նչպէս որ Քրիստոնեայ անունը Քրիստոսին վերաբերեալ սեփական անուն մըն է, որ կանչուելով մարդուս վրան՝ իրեն հետևող ըլլալը կիմացընէ, անանկ ալ թէ որ քրիստոնէի մը մտածմունքները, դատմունքները, Քրիստոսի մտքին ու սրտին վայել ու համաձայն բաներ ըլլան, կրնայ ըսուիլ Քրիստոնէական կամ Քրիստոսավայել խորհրդածութիւններ ու մտածութիւններ մը. այսինքն այնպիսի մտքեր, հոգիներ, խմաստներ, զորն որ Քրիստոսին միտքը, սիրտն ու լեզուն մտածեր,

դատեր ու խօսեր է : Աս նկատմունքով ի-  
մին հոս անդ աս չորս հատորի բաժնած  
գրքիս ընթացքին մէջ որոնք իրենք իրենց  
մէյմէկ առանձին գիրքեր կրնան համ-  
րուիլ՝ գրելու նխութեբուս ու ընելու խօսքե-  
բուս , որ հին ու նոր Ատակէն , աս է Աս-  
տուածաշնչին մէջէն , ասկէ անկէ քաղած  
տաճ՝ համառօտ դուրցուածներուն կամ  
թէ ըսեմ սկզբունքներուն վրայ կը նկարա-  
գրեմ ու կը խորհրդածեմ . թէ որ անոնց  
ամենուն մէկանց՝ Քրիստոնեական խորհրդ-  
դածոքիւններ մը անուն տամ , կարծեմ  
թէ շատ ճիշդ ու սրտաշաճ անուն մը տուած  
կըլլամ . իմացընելով որ աս իմին բրած մը-  
տածմունքներս , դատմունքներս իմինս  
չեն , հապա բուն Քրիստոսի մտքին տուն  
տուած , սրտէն բղխած ու բերնէն ելած մըտ-  
քեր , իմաստներ ու դիւտեր են . որոնց մէջ  
ես ուրիշ մաս մը չունիմ , բայց եթէ անոնց  
մէջ ծածկուած , սկարունակուած Քրիստո-  
սի վայել գերազանց հոգիները , բարձր աղ-  
նուական մտածմունքները , ու ներքին սուրբ  
խորհուրդները կենդանի գուներու քա-



չուածքով մը ուղելով նկարել՝ երևան ըրեր  
կը յայտնեմ, ու իմին ընթերցողներու ա-  
ջին կը դնեմ, որ հոգևոր գուարձութեամբ  
մը ու երկնային մխիթարութենով կը գեղու  
կը դմայլեցընէ անոնց հոգին՝ Քրիստոսի  
հոգւոյն ան գերազանց ու աստուածային  
խորհուրդներուն վրայով, որ ինչպէս դան-  
ձարան մը աստուածեղէն իմաստութեան,  
աղբիւր մը շնորհաց լիութեան, ու վառա-  
րան մը աստուածսիրութեան՝ անհատ-  
նում կը թափէ իրմէ մարդու վրայ ան  
ամէն երկնաւոր հարստութիւնները, բա-  
րութիւնները, ու շնորհքները :

Ասանկ մէկ քիչ ծանօթութիւն մը տա-  
լէն ետքը առաջիկայ դրբիս վրայով, տեղը  
կու դայ ըսելու որ աւետարանական սկզբ-  
բունքները ու իմաստները՝ զորոնք հոս տեղ  
իրբև սլատուիրանաց սուրբ տախտակ մը  
ձևացուցեր եմ, ամէն քրիստոնէին որ և  
իցէ կարգէ ու վիճակէ, որոնց յարմար մը-  
տածեր եմ աս գիրքը, աչքերնուն առջևը  
դրած՝ յիշեցընեմ ան յիշատակաց արժանի  
խօսքը, զորն որ Աստուած երբեմն իր հա-

ւատարիմ ծառային Մովսեսին իր օրինաց  
տախտակը ձեռքը տալուն ըսեր էր. «Եւ  
խողասցես 'ի դոսա'ի տուէ և 'ի զիշերի, զի  
իմասցիս առնել զամենայն զրեալսն 'ի դմա».  
աս է. անանկ մտմտա, քննէ, որոճա, միտք  
բանեցուր աս զրուածներուն, որ կարենաս  
անոնց բուն ներսը խորունկը հասնիլ, թա-  
փանցել ու ան խօսքերուն բուն ուժը, հո-  
ղին հասկընալ, որպէս զի զիտնաս իմա-  
նաս ինչ ըրածդ ու ինչ ընելիքդ, ու ըլլաս  
«Ոչ միայն լսելիք բանին, այլ և առնելիք»:  
Նոյնպէս հոս տեղ յարմար կու գայ յիշե-  
ցընել իմին ընթերցողիս՝ Պօղոս առաքեա-  
լին ան զեղեցիկ խօսքը, որ իր սիրելի աշ-  
կերտին Տիմոթէոսին կը գրէ իր թղթե-  
րուն վերջերը. «Յայդ խորհեաց և 'ի դոյն  
կանխես ջիր» . իբր թէ ըսել կուզէ, մինակ  
սանկ կարդար մի անցնիր, հապա այնպիսի  
հանդարտ ու բանուկ մտքով կեցիր դադրիւր  
զրուածներուն մէջ ու վարքիդ վրայ մտա-  
զրութենով տեղն 'ի տեղ փորձերը բանե-  
ցուր, ինչուան որ Քրիստոնեայ անունիդ  
հետ՝ միանգամայն Քրիստոս ինքն ալ նկա-



րուած մը տեսնուի վրայ . « Մինչև նկարեացի 'ի ձեզ Քրիստոս » . բոլոր վարքիդ վարմունքիդ վրայ , ամէն շարժմունքներուդ , խօսքերուդ մէջ , Քրիստոսին վարքը , հոգին , մտածմունքը փայլի , ինչպէս թէ քեզի տեսնողը Քրիստոսը յիշէ միտք բերէ , ու անոր հետևող ըլլալդ ճանչնայ իմանայ :

Բայց քեզի դառնալով , ով սիրելի Ս. զգոյիմ հայրենի , որուն ամէն իժիր երախտապարտ կը խոստովանիմ դիս , ու ամէն կարելի կերպով ինչուան որ շունչը բերանս է՝ ըստ Ս. ստուծոյ բարւոյն ու հոգևոր օգտին աշխատելու պարտաւոր եմ , առ ընդունէ իբրև յետին ծառայ ու անարժան պաշտօնեայէ մը Ս. ստուծոյ աս զիրքը՝ Քրիստոնեակաև խորհրդածոչիւններ կանչուած , որ ինչպէս առաջնապտուղ նուէր մը ճակտիս քրտինքին աշխատութեանը՝ կընծայեմ քեզի . սփռիիր մխիթարուիր ասով մէկ շատ հոգևոր ու մարմնաւոր վիշտերուդ ու տրամութիւններուդ մէջ՝ որոնց ներքև կը ճնշես կը հեծես . ասիկայ քեզի

ըլլայ առ ձեռն պատրաստ մէկ հողևոր զը-  
ւարճութեանց ու մխիթարութեան զիրք մը,  
որուն պահ պահ կարդացմունքովը՝ նեաես  
թոթվես վրայէդ ամէն աւելորդ մտմտուք-  
ներուդ բնուր, Սատուծոյ ձեռքը յանձնելով  
ամէն վիճակդ, բաղդդ. ու բարի կատարա-  
ծի յուսով աստուածային պատուոյն ու փա-  
ռացը ժրաջան դատիս աշխատիս, ինչուան  
որ աս արցունքի աքսորանքի ձորը՝ բուն,  
ճշմարիտ, հարազատ հայրենիքիդ հետ փո-  
խես, մահկանացու կեանքիդ քաղուածքին  
նպատակին երթաս հասնիս:

ՔՐԻՍՏՈՍԱՆ ՄԱՆՄԱՐ

ԵՄՈՒՅ ԿԱՐՅԱԿԻՆ

ՔԱՆՎԱԿԱՆ ԿՈՒՆԻՍՏԱՆԻ

ՔՐԻՍՏՈՍՆԷՍԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ



ԳԻՐՔ Ա.

ՎԵՆԵՑԻԱ

Ի ԿՈՒՆԻՍՏԱՆԻ ԿԱՆՎԱԿԱՆ ԿՈՒՆԻՍՏԱՆԻ

ԻՏՅԱ



# ԵՐԿՈՏԱՍԱՆ ՍԱՂՄՈՍ

ԴԱԻԻԹ ՄԱՐԳԱՐԷԻՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՀԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՏԵՍՈՆ ՅՈՎՀԱՆՆՈՒՎ. ՃԱՄՊԱԶԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1855

ՄԱՍԻՍ ԿԱՍՏԱՆԻ

ՎԱՐՎԱՐԻՍ ԳԻՒՄԻ

ԿԱՆՏԱՆԻ ԿԱՍՏԱՆԻ

ԿԱՍՏԱՆԻ ԿԱՍՏԱՆԻ

ԿԱՍՏԱՆԻ ԿԱՍՏԱՆԻ



ԿԱՍՏԱՆԻ

ԿԱՍՏԱՆԻ ԿԱՍՏԱՆԻ

1852

ՅՍՈՍՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Երբոր մանուկ տղայ էի, առջի անգամ սուրբ Մարգարէին Սաղմոսին դիրքը առջև բացած դրին ու ձեռքս տուին, որ կարդամ սորվմ: Բայց ահա ես ինչուան հիմա կեանքիս կէսը հասած՝ աս միջակ հասակիս մէջ մէկ շատ սերտելովս զանոնք հազիւ թէ քանի մը հատը անոնցմէ կրցայ հասկընալ խելք հասցընել, ինչպէս որ հիմա հասեղը զանոնք թոթովելով ու կասելով մը հեգելու հարցաքննութե՛հ հանգէտին կը մանամ: Վասն զի իրաւցընէ Գաւիթի մը սկէս սրատես հոգեատես մարգարէի մը ան ներքին ներաշնչութեան հոգւովը դրած հոգեկնց Սաղմոսարանին ո՞վ կրնայ ներքինը մանալ, ու ան ծածուկ բանուկ խորին բարձր սուրբ իմաստներուն թափանցել անցնիլ: Ահա անիկայ մէկ ներքին սրբութիւն սրբոցի մը կը նմանի՝ խոնարհութեան ու լուութեան վարս:



դուրներով վրայէ վրայ ներսէն դրսէն դոցուած  
փակուած , որուն մէջը մտնալը ամենուն չէ , թող  
թէ ինձի պէս անոր առաքինութիւններէն բոլո-  
րովին վերջացեալի մը . հասպա ի՞նչպէս անոր սըր-  
տին սեղանին վրայէն ասպաշխարութե՛ք ու մահա-  
ցուցմունքի վարդերով ծաղիկներով պահուած  
դոցուած զոհերուն անուշ բուրմունքները դուրս  
հանեմ , ծաւալեմ : Անիկայ մէկ թագաւորական  
դանձարան մըն է . սուրբ կրօնքին անգին ծանրա-  
գին հարստութիւններով ու հին ու նոր կտակին  
աստուածային սրբազան սուղ աւանդներով լե-  
ցուն , բայց ամէնը Սուրբ Հոգւոյն իմաստութեա-  
նը քօղով սրբով ծածկուած , որոնց նայելու տես-  
նալու՝ սուր ու բանուկ աչքեր պէտք կըլան ,  
ուրիշք զուրկ եմ ես բողբոլին , հասպա ընտօր  
քննեմ զննեմ զմայլիմ ան անգիւտ գեղեցիու-  
թիւններու վրայ ու ուրիշներուն ալ լեցուն բե-  
րանով մը պատմելովս , կամ ճարտար գրչով մը  
կենդանի նկարագրելովս՝ զմայլեցընեմ : Անիկայ  
ցանկալի ու փափաքելի Բեթղէհէմի զովարար  
կենդանի ջրոյն ականակիտ աղբււր մըն է , որ ի-  
րեն ամէն ծարաւի սրաստիով մօտեցողները կը զո-  
վացընէ , կը լեցընէ , դոհ կընէ , կը մխիթարէ , ա-  
մէն մէկուն ուղածին կրցածին տանելուն չափ :  
Ես որ թէպէտ անոր զուարճալի ականը մօտենա-  
լու բաղդին հանգիստեր եմ , բայց ահա որչափ ջու-



ըր շատ, նոյնչափ իմին ձեռքի ամանս պղտիկ, տա-  
նելու կարողութիւնս տկար, ընտո՞ր պարպեմ տա-  
նիմ՝ զանիկայ ու ուրիշ ծարուածներուն խմցը-  
նեմ: Դաւիթին Սաղմոսարան քնարը ամենուն  
ձեռքը ամէն ատեն հոգևոր զուարճութիւններու  
ու երկնային մխիթարութիւններու բազմալի գիրք  
մըն է, որ մտադրութենով կարգացողներուն ու  
անուշ երգիչներուն բերանը մանանայի պէս զա-  
նազան համերու փոխուելով՝ տեսակ տեսակ  
անունդներ կու տայ անոնց մտքին ու սրտին մէջ:  
Վասն զի ահա մենծ ու պղտիկ, աղքատ ու հա-  
րուստ, առողջ ու հիւանդ, արդար ու մեղաւոր,  
ամէնը անիկայ իր ձեռքը առնելուն ու բանալուն՝  
իր ցաւերուն յարմար ու արամադրութեանը հա-  
մաձայն համեմատ մէյմէկ տեսակ երկնային սուրբ  
մխիթարութեան ու անուշութեան համտես կըլ-  
լայ, իր ներքին ախտերուն վերքերուն զովարար  
լուացմունքներ ու մեղմացուցիչ օժմունքներ կը  
գտնայ, կիմանայ, կը փորձէ վրան, ան սուրբ հո-  
գելից սրտառուչ խօսքերուն կարգացմունքով ու  
մտածմունքովը, որոնք Դաւիթը ատեն ատեն իր  
կեանքին ընթացքին զանազան կացութիւններուն  
մէջ, եփուն հասուն խելքով փորձով ու միշտ Աս-  
տուծոյ հարցընելով՝ կրտէ ու կը գրէ իր սաղմոս-  
ներուն յիշատակարանին մէջ, ինչպէս մէյմէկ բա-  
նաստեղծական երգեր ձեացընելով զանիկայ իր

կեանքին պատմութեանը, պահ մը իր մարդարէա-  
կան տեսանող հոգւոյն ներշնչութենովը, չեղա-  
ծը եղածի պէս, դալիբը եկածի պէս նկարագրե-  
լով. պահ մը իր բանաստեղծական աշխոյժին սաստ-  
կութենովը անզգայ արարածներուն լեզու ու խօ-  
սել տալով, երբեմն իր մտքին բարձր թւոյցով ու  
սրտին սաստիկ վառումովը՝ ինչպէս ամուրէ մը  
խօսելով որոտալով, ու պահ պահ ալ աստուած-  
սիրութեան բոցը առնելուն՝ երբ անոր սրտին մէջ  
կենդանի հաւատքը ու յոյսը առ Աստուած կրս-  
կսի շարժիլ ու դործել, իբր թէ ինք իրմէ դուրս ե-  
լած յափշտակած՝ աններքին հեծութիւններուն,  
հառաչանքներուն երկնասլաց նետին հետ մեկ-  
տեղ երկինք ելլալով թռչելով, որոնց վաղելու  
հասնելու համար ոտքերը բաւական չեն ըլլար  
միայն, հապա թևեր ալ պէտք է թռչելու: Բայց  
որովհետև արդէն տկարութիւնս խոստովանեցայ,  
քանի որ չեմ՝ կրնար ան բարձրերը թռած՝ անոր  
մօտիկ ելլալ հասնել ու ոչ ալ անոր սրտին մէջ  
ինչած մտած ան գեղեցիկ ներքին տեսարաննե-  
րուն զմայլել ու զմայլեցընել, ուստի ահա հոս  
տեղ անոր քանի մը Սաղմոսներուն վրայ է միայն  
իմին ընելու խորհրդածութիւններս, որոնք ինչ-  
պէս թէ դուրսէն մը միայն անոր վառվռուն կուրծ-  
քին զարկուածներուն անկաճ դրած՝ ըսէի գրէի,  
կատարեալներուն ու իմաստուններուն թող տա-

լով՝ որ իրենց սրատեսու թիւններով աւելի անոնց  
խորունկը մանան՝ միշտնոր նոր գիւտեր գտնալով  
ու գեղեցիկ մտածութիւններ ընելով անոր մար-  
գարէական Սաղմոսներուն վրայ :


Բայց ասոր մէջն ալ մէկ յարմար ու վայելուչ  
կարգ մը պահելու համար, իմին ընթերցողնե-  
րուս հաճոյական՝ մեր Հայոց եկեղեցւոյն սովո-  
րութեանը համեմատ երկոտասան Տէր ողոր-  
մեային տեղ, կամ երկոտասան գուբղայի (սաղ-  
մոս) մաքով, Դաւիթին Սաղմոսներէն տասուեր-  
կու տուն միայն կընարեմ ինծի առջևի ընելու  
խորհրդածութիւններուս, ան սովորական տաս-  
ուերկու Սաղմոսներուն աղօթքը քաղելու մըտ-  
քով, որոնք կրնան ձայնաւոր ու միանգամայն մը-  
տաւոր աղօթքի տեղ գործածուիլ ու բանեցու-  
ցուիլ ջերմեռանդ ու հոգեսէր ընթերցողներէն :



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to the bleed-through effect and the age of the paper. It appears to be a list or a series of entries, possibly related to a historical record or a collection of items.









# ԵՐԿՈՏԱՍԱՆ ՍԱՂՄՈՍ

## ԴԱԻԹ ՄԱՐԳԱՐԷԻՆ

### ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ



### ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ա.

«Ո՛վ է մարդ, զի յիշես դո՛ւ զնա. կամ որդի մարդոյ, թէ այց ինչ արասցես դո՛ւ նմա».

ՍԱՂՄ. Ը. Ծ:

Սաղմոսարան ձեռքս, աչքս ինձի, ու միտքս առ Աստուած առջի անդամ՝ զարմանքով մը հարցընելու, «Ո՛վ է մարդ» մարդուն ինչ, կամ որսլիսի բան ըլլալուն չզիտնալս կիմացընեմ. ու մէկ ուրիշ անգամ մըն ալ «Ո՛վ է որդի մարդոյ» ըսելովս՝ մարդուն ինչ, կամ ընտր բան ըլլալը զիտնալուս իմաց կու տամ: «Ո՛վ է մարդ».

14324



մարդէն դուրս եղած բաներուն քիչէն շատէն գիտութիւն ունիմ, բայց մարդուն ինչ ըլլալուն որ ես եմ, խելքս չէ հասեր: Թէ որ մարդուն վրայ մենձ մենձ դադափարներ մտածութիւններ ընեմ ու գերադանց բարձրութեան մը վերցընելով, վերերը փնտռեմ դանիկայ, բայց ահա կը նայիմ որ անիկայ եղծանելի, ապականելի մարմին մըն է, հողէ կաւէ շաղած դանդուած, ու նորէն նոյն հողի նիւթ ըլլալու պատրաստուած. ինչպէս սկիզբը հողէն, հողով, նոյնպէս վերջը հողին, 'ի հող. մէկ ապականութեան տկար անօթ մը, մէկ գետնի չնչին թառամելի բոյս խոտ մը՝ առտուանց բուսած ծաղկած, ու իրիկուան դէմ թռումս թափած: Բայց թէ որ բարձրերը թող տալով՝ ստորինները ինձած փնտռելու ելլամ, ու ահա անիկայ աննիւթ, իմացական, անմահ հողի մըն է, Աստուծոյ մը բերնէն ելած շունչ, երեսէն դուրս ծաթած լոյս մը, անոր ազդեցութիւններուն անարատ հայլի ու աստուածութեան ղեղեցիկ պատկերը մըն է, որ անմահութեան կը թռչի կերթայ ու յաւիտենական երջանկութեան մը կը վաղէ: Աս երկու մէկմէկու ներհակ մտածմունքներս ճշմարիտ կելլան կը ստուգուին անոր վրան. երբ մտքովս դրախտը ելլեմ տեսնեմ առջի անգամ անոր ստեղծուիլը



Կոյանալը, ու երբոր գերեզման ինջնամ,  
 տեսնամ՝ վերջին անգամ անոր մեռնիլը,  
 ու փճանալը: «Ո՛վ է որդի մարդոյ»: Բայց  
 աս երկրորդ հարցմունքին մէջ՝ հիմա կը-  
 սեմ քեզի հոս մարդուս ինչ ըլլալը: անի-  
 կայ մէկ ստեղծուած մըն է ամէն կերպ  
 պակասութիւններով անկատարութիւններով  
 լիք, ասպականութեան աղբիւր մը, ամէն  
 տեսակ կարօտութիւններուն, խեղճու-  
 թիւններուն նպատակ, ամէն ցեղ տկա-  
 րութիւններուն, փորձութիւններուն խա-  
 դալիք, իր կեանքին ամէն օրերը չա-  
 փուած, ցաւով ողբով լեցուն, ծնանելէն  
 ինչուան մեռնիլընեղութենով տառապան-  
 քով լիք, օրօրոցէն ինչուան գերեզմանը  
 լացի սուղի մէջ, անոր կեանքին տարի-  
 ները մէկ ետեւէ ետեւ շարունակութիւն մըն  
 են վիշտերու, հիւանդութիւններու ու հա-  
 զարումէկ տառապանքներու. մէկ կող-  
 մէն իր կիրքերը մոլութիւնները, որ ծո-  
 վին ալիքներուն պէս մէկմէկու ետեւէն  
 մէկգմէկ ճնշելով, իր չքութեանը անդուն-  
 դին մէջ կառնեն կը տարուբերեն զանի-  
 ու միւս կողմանէ իր մեղանչական բնու-  
 թեանը հետ ըրած մեղքերը, որ խեղճու-  
 թեանը վրայ խեղճութիւն աւելցուցած՝  
 փոսէ փոս զլորտըկելով, չելլալու ան-  
 դունդի մը կը քաշեն կը տանին, որով ա-  
 նոր վերջը կըլլայ առջինէն աւելի գէշ. ա-

Հա քեզի մարդ կամ որդի մարդոյ ըսած նիս , որուն մէկն ալ ես եմ : Ի՞նչ խեղճ ողորմելի ստեղծուած , իրաւցընէ ճշմարտապէս արհամարհանքի արժանի , ցաւոց նիւթ . ալ հիմա բանի տեղ դնելու , երեսը նայելու , խօսքը ընելու բան է մի մարդն ալ . « Ո՞վ է մարդ , զի յիշես դու զնա . կամ որդի մարդոյ , թէ այց ինչ արասցես նմա » , որ Աստուած մը զիջանի ցածնայ խոնարհի անոր , զանիկայ փնտռելու ելլայ , անոր վրան աչք պտըտցընէ , յիշէ միտքը բերէ զանի , իր մտածմունքին նիւթ ընէ . անոր այցելութիւն ընէ , զանիկայ տեսնալու փնտռելու ելլայ ու զրեթէ բոլոր յաւիտենականութեան մը մէջ զանի մըտմըտալը իրեն զբաղանք ընէ :

« Յիշես դու զնա » . յիշել՝ ինչպէս . միշտ անոր մենձ մենձ պատիւներ տալով , չափազանց սէր ցուցընելով , ու ամէն իժիր նոր նոր բարութիւններ , աղէկութիւններ մտածելով , պատրաստելով ու ընելով անոր : « Յիշես դու զնա » . առաջ յիշեցիր , երբոր ան քու աստուածային ձեռքովդ հողէն առած շաղած ատենդ ու սքանչելի ճարտար մատերովդ զանի ձեւելուդ՝ տեսնալով որ անիկայ մարմին մըն է ապականելի , փտտած , ցուրտ , ծանրաշարժ , դանդաղ , անբաններուն անասուններուն հաւասար , մէկէն աստուածութեանդ կը-

րակէն կայծ մը անոր թոցընելով, ու տար  
 շունչ մը բերնէդ դուրս արծըկելով դէպ'ի  
 անոր երեսը՝ հոգի, միտք, կամք ու բա-  
 նաւորութիւն տուիր, որով անմահ վա-  
 ուորեալ ընելով զանիկայ, անբաննե-  
 րէն առած՝ հրեշտակներուն բնութեանը  
 վեր առիր, վերցուցիր, հաւասարեցու-  
 ցիր, ու յաւիտենական արքայութեանդ  
 մէջ տեղ ցուցընելով անոր՝ քեզի հետ եր-  
 ջանիկ ըրիր զանիկայ. «Յիշես դու դնա».  
 Ետքը յիշեցիր, երբոր անիկայ յանկարծ  
 մը սկզբնական մեղքին կայծակէն զար-  
 նուած, իր առջի պայծառ լուսէն բոլորո-  
 վին մերկացած, անմեղութեան շնորհքը  
 կորսնցուցած, ապականեալ բնութեան  
 մը ներքե տքտըքալով, մութին մէջ թա-  
 պըլտըկած կը խարխափէր կը թափառէր,  
 դուն մէկէն զանի վեր վար փնտռելու ե-  
 լար, ճայն տուիր կանչեցիր քեզի, ետեէն  
 պոռացիր, ուր ըլլալը ուղեցիր խմանալ.  
 որպէս դի շուտ մը երթաս օդնես անոր.  
 Ինտոր որ ըրիր ալ, անոր ամէն տեսակ  
 մերկութիւնը ծածկելով պարտըկելով, ու  
 մենձ մենձ խոստամունքներով յորդորելով,  
 մխիթարելով, սիրտ տալով անոր, կոր-  
 սընցուցած զրախտը նորէն զինքը առնե-  
 լու դնելու. «Յիշես դու դնա». հիմակ ալ  
 կը յիշես, երբոր հրամայածիդ պէս եր-  
 կընքին ահագին աստղերը անոր զլխուն

վերեր կելլան կը պտըտին, կու գան կը դառնան տաքցընելու գանի, լոյս տալու անոր, երկրին չորս կողմին հովերուն թևերու վրայ ամպերը կը թռչին կու գան, անոր բնակարանին վրայ կը դադրին՝ ջուր տալու, գովացընելու, անոր ծարաւը մարելու, հողին լայնարձակ դաշտերը տեսակ տեսակ բոյսերով, ու ահագին լեռները անհատնում հանքերով անդադար կաշխատին՝ անոր կերակուր, հագուստ ու կեանքին դիրութիւններ պատրաստելու, հողալու, որպէս զի կարօտութիւն մը չքաշէ :

Բայց ասոնց ամէնը դեռ բաւական դո՛ւ չեն ըներ քեզի անոր բարութիւն ընելուդ մէջ. ասոնցմէ աւելի մենձը խելքէ մտքէ չանցած բարերարութեան մըն ալ ձեռք կը դարնես ընելու, վասն զի տեսնալով որ անոր բանը երթալով գեշին կերթայ, անոր առողջանալուն առաջ գալուն ճար չկայ, ցաւը վէրքը անբժշկելի անբուժելի է, դուն ինքզ անձամբ անոր այց ընելու կելլաս. « Այց ինչ արասցես դու նմա », ու ասիկայ ալ կընես մէկ սքանչելի եղանակաւ, խելքէ մտքէ վեր կերպով մը, երկընքէն քուկին մէկ հատիկ միածինդ աստուածորդիդ խրկելով աշխարհքը ու մարդուն ծառայական կերպին նմանութեանը խոթելով, ինչուան որ անիկայ մէկ երկան,



տառապելի, աշխատելի կեանքով ու վը-  
տայի ցաւայի անարգական մահով մը ան-  
թիւ չարչարանքներու, վէրքերու մէջ չոր  
խաչի մը վրայ ձեռքով ոտքով դամուած,  
արունին ինչուան ետքի կաթիլը թափե-  
լով՝ վերջին շունչը տայ, մեռնի, ու անոր  
մեղքին հնութիւնը ջնջելով, իր արդիւնք-  
ներուն արժանիքով ու սուրբ արունին գի-  
նովը ըստ Աստուծոյ նոր մարդ ընէ նորո-  
զէ, սատանային գերութենէն՝ որդիական  
ազատութեան հանելով մտցընելով. ու  
րուն նորանոր յիշատակը ու խորհրդաւոր  
գործադրութիւնը՝ ինչուան աշխարհիս վեր-  
ջը անմահ պատարագին դոհովը ամենա-  
սուրբ հազորդութեան խորհուրդին մէջ  
կը թողուս, չզատուելով մէյմըն ալ մար-  
դուն քովէն: «Ո՛վ է մարդ, զի յիշես դու  
զնա, կամ որդի մարդոյ, թէ այց ինչ ա-  
րասցես դու նմա»: Ո՛վ տէր, ինչ ողոր-  
մութիւն է ասիկայ, որպիսի գութ, սէր է,  
խելքէ մտքէ գուրս, որ կը ցուցընես մար-  
դուն՝ աս կերպ ու աս եղանակ նոր գիւ-  
տեր դանալով, մտքեր մտածելով, մտա-  
դրութիւններ ընելով անոր բարութեանը  
երջանկութեանը համար. յիշել, այց ը-  
նել, անանկ որ չէ թէ միայն զանիկայ  
չմոռնալ, միտքը բերել, հապա դանի հո-  
գալ, մտմտալ, խնամել, օգնել ու չթո-  
ղուլ ամենեին: Բայց կը հարցընեմ. ո՞վ է

մարդը , ի՛նչ է մարդը քու քովդ . ի՛նչ յուսալիք արդեօք ունիս անկէց . մարդը ի՛նչ ըրաւ քեզի կամ ի՛նչ կրնայ ընել աղէկութիւն մը , որ ատ եղանակ կը վարուիս անոր հետ . բնաւ ամենեին , մանաւանդ որ անիկայ չէ՞ մի որ այսքան մենծ մենծ երախտիքներ տեսնալով քենէ , ասչափ բարութիւններուն պարզեններուն արժանի ըլլալով քու ձեռքովդ , միշտ անոնց հակառակը ասպերախտութենով չարաչար վարուեցաւ քեզի հետ ու կը վարուի , միշտ մոռցաւ դ.քեզ ու կը մոռնայ , թող որ մարդը չէ՞ մի՛ որ ամէն իժիր նոր նոր մեղքերով անհաւատարմութիւններով քեզի դէմ կելլայ , կը վշտացընէ , կանարդէ , կը քամահրէ քեզի . անիկայ չէ՞ որ ամէն անգամուն քենէ առ.ած շնորհքները , տեսած բարութիւնները՝ զեչին բանեցընելով՝ կը մըսխէ կը վատնէ . անիկայ չէ՞ որ կերպ կերպ աշխարհական հողիներով ունայնութեան մարմինին մէջ թաղուած ընկղմած՝ ասանկ դաղջ , թոյլ , անհող է քեզի պատուելու , ծառայելու , սիրելու մէջ . դուն ի՛նչ ըրիր ու կընես անոր , անիկայ քեզի ի՛նչ ըրաւ ու կընէ . դուն ի՛նչ եղանակ ճամբայ կը բռնես անոր , անիկայ ընտո՞ր կը վարուի քեզի հետ . քեզմէ աղէկութիւն , անկէ դէշութիւն . քեզմէ սէր , անկէց անհաւատարմութիւն . քենէ երախտիք , անկէ ասպերախտութիւն :

Իրաւընէ , ո՛վ տէր , աս քուկին ինծի  
 ըրած խնամքներդ , ցուցըցած վարմունքդ՝  
 ո՛րչափ լեղի կ՛ծու յանդիմանութիւններով  
 աս իմին կոպտութիւնս , ամարդութիւնս  
 երեսս կը գարնէ , ամօթով մուրով զիս կը  
 ծածկէ , սիրտ ծակող ցաւերով ներսս կը  
 խոցոտէ . որպիսի՛ ներքին զրդմունքներ  
 րով ազդմունքներով կը զրդէ զիս , կար-  
 թընցընէ , կը ստիպէ՝ մէկ զի թողուլ ին-  
 չուան հիմա քուկին ծառայութեանդ մէջ  
 ունեցած գաղջութիւնս , սիրելուս մէջ ցու-  
 ցըցած անտարբերութիւնս , ու չնորհքնե-  
 րուդ զործածութեանը մէջ ըրած անհա-  
 ւատարմութիւնս . ի՛նչ չափ կը յորդորէ ,  
 կը փութացընէ , սիրտ կու տայ ինծի , որ  
 զոնէ ասկից ետքը սկսիմ՝ դքեզ սիրելու ,  
 բայց սիրելու ճշմարտապէս , ամէն ուժով ,  
 բոլոր սրտով . քեզի ծառայելու , բայց  
 ծառայելու ամէն մտադրութենով , մըտ-  
 քով , խօսքով ու զործքով . քեզի պատ-  
 ւելու , բայց պատուելու ընտոր որ պէտք  
 է նէ , ամէն անգամ ամէն բանէն վեր ու  
 ամենուն մէջ . պինտ վերջը՝ քեզի երախ-  
 տազէտ ու հաւատարիմ ըլլալու , բայց ին-  
 չուան արունս թափելու չափ , կեանքս  
 ամբողջ հանապազորդական զոհ մը ընե-  
 լով քեզի՝ ինծի ըրած բարերարութիւննե-  
 րուդ փոխարէն :

Ահա աս ամէն փափուկ իմաստները ,

ազնուական մտածմունքները իր սրտին մէջ սնուցանելով Գաւիթը, աչքը ու աչքին հետ միտքը դէպ 'ի երկինք վերցընելով, դմայլած յափշտակած մը, մէկ ձեռքը քնար ու միւս ձեռքը սաղմոսարանը կերդէ Աստուծոյ իր սաղմոսին աս սքանչելի գեղեցիկ կտորը. «Ո՛վ է մարդ, զի յիշես դու զնա. կամ որդի մարդոյ, թէ այց ինչ արասցես դու նմա» :

### ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Բ .

«Ըստ բազում ցառոց սրտի իմոյ՝ մխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ» .

ՍԵՂՄ. ԴԳ. 17:

Ս.Հա քեզի կարճ խօսքով մը երկան կեանքիս պատմութիւնը կը դրուցեմ, թերթ մը երեսի վրայ քանի մը տողի մէջ բոլոր զլիսէս եկած անցածը լրագիր կընեմ, պըղտիկ պատկերքի մը վրայ մարդկային մահկանացու կեանքին ընթացքը կը նկարագրեմ կը քաշեմ, կարծես թէ աշխարհիս վըրայ ամէն բանը փորձով իմին վրաս չափեր հասկըցեր եմ. «Ըստ բազում ցառոց սրտի իմոյ՝ մխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ» : Ինչպէս թէ կուզեմ ըսել :



ինտոր որ շատ կերպ ու տեսակ տեսակ եղեր էին ցաւերս, նեղութիւններս, սրոնց աշխրբիս մէջ մարդուս կեանքին զանազան վիճակներէն քաշելու՝ համտես եղայ ու փորձեցի, ատանկ ալ անոնց դիմացը շատ ու տեսակ տեսակ եղան մխիթարութիւններս, ուրախութիւններս ալ, որ աստուածային նախախնամութիւնը ատեն ատեն պարզեց ինձի, այնպէս որ կրնամ ըսել որ ասոնք անցան եւելցան ալ, բաւական ըլլալով ուրախացընելու դիւ իմին ան շատ ցաւերուս մէջ. « Ըստ բազում ցաւոց իմոց ». ցաւերուս շատ ըսելով մխիթարութիւններուս ալ շատութիւնը կը հասկըցընեմ, բայց առաջ ցաւերուս պատմութիւնը կընեմ, որ ետեէն եկած մխիթարութիւնները աղէկ մը իմացուին. ու ինչպէս որ առանց ցաւի մխիթարութիւն չըլլար, անանկ ալ առանց առաջ ցաւ քաշելու մխիթարութեան մասնակից չըլլըուիր: « Ըստ բազում ցաւոց իմոց ». բայց որպիսի, ընտոր ցաւեր էին արդեօք ասոնք. ցաւեր մը՝ դուրսէն ներսէն, մտքի ու սրտի, այսինքն ապականեալ բնութիւն մը, անասնձ կիրքը, ապըստամբ զգայութիւնը, չար սովորութիւնը, հակամիտութիւնը, տկարութիւնը, վտանգներ, փորձութիւններ, մեղքեր, ասոնց ամէնը մէկ տեղ գիշեր ցո-

րեկներսէն գրասէն զանազան խայթմունքներով, լեղի մտածմունքներով կուտէին կը կրծէին զիս: Եւ իրաւցընէ, ինչպէս ցաւ չտային ինծի անթիւ անհամար մեղքերուս յիշմունքը՝ որ մեկէն Աստուծմէ դատելով հեռացընելով զիս, հոգիս յատենական մահով մեռցընելով՝ բարկացած, ահաւոր, արդար Աստուծոյ մը վրէժխընդրութեանը նպատակ ըրին: Աստուծոյ անաչառ արդարութեան զարհուրելի մտածմունքը, որ սուրբ կշառք մը ձեռքը՝ օր մը իմին դատու պիտի կտրէր ու վճռէր մէկ վերջին անդառնալի վճիռով մը, ինչուան ետքի դանկը պահանջելով մեղաւորէն: Յատկանական դժոխքի մը սարսափելի մտածութիւնը, որուն որզը չմեռնիր ու կրակը չմարիր, որուն մեղանչելովս արժանի եղեր էի, ու հոն պիտոր զբանուէի հիմա: Նախասահմանութեան խորունկ մտածմունքը, որովհետեւ չէի գիտեր որ սիրոյ, չէ նէ ատելութեան արժանի եմ. շնորհաց, չէ նէ մեղաց վիճակին մէջ կը գտնուիմ. դատապարտեալներուն, չէ նէ փրկուածներուն կարգն եմ. ու ասիկայ չգիտնալս աւելի մենծ կակիծներ կու տային ինծի, ու ցաւերս կաւելցընէին: Հոգի փրկութեան մենծ մտածութիւնը, որ ըստ ինքեան անանկ դժուար յաջողուելու ու շատ աշխատանքի արուն-

բըրտինքի կարօտ բան ըլլալովը՝ ասանկ բողոքովին երեսի վրայ ձգուած էր իզմէ մէկ թոյլ անհոգ կեանքով մը, ինչպէս թէ ինծի վերաբերեալ գործք մը չէր: Մահուան երկիւղալի յիշմունքը, որ ինչ չափ ստոյգ, նոյնչափ ատենը, որպիսութիւնը անստոյգ ինծի, որուն ամէն օր մէյմէկ քիչ առանց իմանալուս կը մօտենամ, ու հիւանդոտ վատուժ վատած մարմնով մը կը հրուիմ ան մութ փոսը, ուր տեղ բազզս կանկ կառնէ, յոյսերս կը փճանան ու իմին վերջին ճակատագիրս կը սահմանուի: Ահա աս տրտում տխուր մտմըտուքներն էին՝ որ զիշերը զլուխ կը հանէին կը մաշէին, կայրէին կը տոչորէին զիս, որ ասանկով արդեօք վերջս ինչ պիտոր ըլլայ, զլուխս որ ծակը պիտոր խոթեմ, կամ որ փլածին տակը պիտի մնամ. ասանկ ցաւալի տեսարաններուն մէջը մնացեր էի, ինք ինքիրմէս դուրս ելած, դարհուրած սարսըփած. աս կերպ մութ երկան զիշերներ կանցնէին կը դառնային վրայէս. ասանկ սև ալիքներուն ձեռքը խաղալիք եղեր կը տարուբերէի. ո՞վ կրնար անկից ետե իմին աչքիս արցունքը բռնել, բերնիս ողբը կտրել կամ սրտիս հեանքը ինջնցընել: « Ըստ բազում ցաւոց իմոց »:

Բայց ահա Աստուած վերէն իր նախախնամանոց աչքովը նայելով վրաս, դու

Թի շարժելով այցելութիւն ըրաւ ինծի ,  
 աս ամէն ցաւերուս մէջ արժանի ընելով  
 մխիթարելու , այնպէս որ չէ թէ միայն  
 ցաւերս մեղմացուց , չափաւորեց , բարե-  
 խառնեց , հապա բոլորովին թմրեցուց ,  
 մոռցուց ես , ցաւս՝ մխիթարութեան ,  
 տրամութիւնս՝ ուրախութեան փոխելով ,  
 անանկ մը որ ինչպէս թէ ձմեռուան մէջ  
 յանկարծ զեղեցիկ դարունի մը փոխուած  
 ըլլայի , կամ զիշերուան մթուն ատեն մե-  
 կէն պայծառ արշալոյսի մը հանդիպէի ,  
 կամ թէ ակէկոծուած ովկիտնոսէ մը մէ-  
 կէն՝ ի մէկ խաղաղ նաւահանդատի մը մէջ  
 մտած գտնայի զիս : « Մխիթարութիւն քո  
 ուրախ ատենէր դանձն իմ » . ինչ մխիթա-  
 րութիւններ էին ասոնք արդեօք վրաս աս  
 եղանակ զիմօպէմ փոփոխութիւններ  
 պատճառող , տրամութիւնս ուրախութեան  
 դարձրնելու բաւական , մխիթարութիւն-  
 ներ մը՝ սուրբ , վերին , ներքին , աստուա-  
 ծային այցելութիւններ , հոգևոր օժմունք-  
 ներ , սրբարար շնորհքներ , անուշ կոչ-  
 մունքներ , սուրբ խորհուրդներ , մտածու-  
 թիւններ . ահա ասոնք մէկէն ինծի զալով  
 աչքիս արցունքը սրբեցին շոբոցցին , ե-  
 բեախս վրայ դուարթութիւն ցրցուցին ու-  
 շրթունքներուս վրայ ծիծաղ մը բերին , ու  
 իրաւցրնէ ինչպէս չէին մխիթարեր զիս  
 Աստուծոյ մը մենձ անհուն ողորմութեան



յիշմունքը , որ կրնայ միայն մեղքերը թողուլ ու կուղէ թողուլ , քիչը շատը միակերպ կը թողու , մէկ մեղայով , կաթիլ մը արցունքով կը հաշտուի մեղաւորին հետ , բարեկամ սիրելի կընէ իրեն :

Աստուածային սուրբ հոգիին բարեխօսութեանը մտածմունքը , որ ամէն իժիր ՚ի ներքին հեծութիւնս անմռունչս կաղաչէ , բարեխօս կըլլայ առ հայր մեղաւորին համար , ու իր օծելոյն անուշ երեսը նայելու հրաւիրելովը՝ մեղաւորին երեսը կը պահէ , կամ ալ հեղիկ անուշ նայելու կը պատրաստէ : Քրիստոսին չարչարանացը մտածութիւնը՝ որ ինձի համար մեռած է խաչին վրայ , ու միշտ անմահ պատարագներուն մէջ իր չարչարանքներուն կացութիւններէն անցնելով՝ խորհրդաւոր մահով մը նորէն կը մեռնի ՚ի թողութիւն մեղացս : Սուրբ եկեղեցիին խորհուրդներուն յիշմունքը , որ Քրիստոսի արդիւնքներուն միջնորդութենով , արունին զինովը՝ ամէն անգամ աղբիւր մըն է ինձի սրբբարար լուացմունքի , շնորհքներու առատութեան . ու հոգւոյն սրբոյ նորոգման : Ամենասուրբ հաղորդութեան յիշատակը , որ հացի ու զինիի տեսակին տակ՝ կերակուր ըմպելի կըլլայ ինձի , ու կը բաշխուի ամէն օր առանց հատնելու , կը մեռնի ամէն անգամ , կենդանի ըլլալով միշտ ինձի

համար զոհի կացութեան մէջ: Արքայութեան մտածմունքը, որ մարդուն տեսածէն լտածէն շատ վեր բան մըն է, որ մինակ կը լեցընէ, կը թաթղէ, զոհ կընէ սիրտը, որուն անսուտ Աստուծոյ մը խոստմունքով ինչպէս հօրենական ժառանգութիւն մը պահուած ըլլալով ինծի, կընամարժանի ըլլալ, թէ և ինչ ըլլալը հիմա չկընամ իմանալ ու բացատրել: Հոգիիս անմահութեան մխիթարական մտածութիւնը, որ մութ գերեզմանիս վրայ անանկ պայծառ փալկելով հողեղէն մահկանացու մարմինին մէջ անմահ յաւիտենական հոգի մը կը խոստանայ ինծի, հրեշտակներուն հաւասար ու Աստուծոյ նման ընելով՝ յաւիտենական երջանկութեան մը մասնակից ընելու կառնէ կը տանի: Ո՛վ որպիսի՛ մխիթարութեան արժանի նիւթեր, որ ցաւեր կընան աս ուրախութիւններուն դիմանալ. ահա աս մխիթարութիւններն էին, որ ցաւերս դիմաւորելով ուրախութենով լեցուցին թաթղեցին զիս. ինչուան չկընալով ես զիս բռնել՝ սկսայ իզմէ գրեթէ դուրս ելլալ, ուրիշներուն ալ յայտնելով. «Մխիթարութիւն քո ուրախառնէր զանձն իմ»: Հիմա հոս տեղ ո՞վ չզարմանար զմայլիբ աստուածային նախախնամութեան վրայով որ ունի մարդուս վրայ, որ մի և նոյն ատենի մէջ եր-



կու հակառակ վարմունքներ բանեցուցած  
 վրաս, կամ թէ ըսեմ երկու ներհակ ու  
 ժերու մէջ տեղ կայնեցուցած դիս, այս  
 ինքն անձին տկարութեան ու Աստուծոյ  
 կարողութեան, արդարութեանը ու ողոր-  
 մութեան միանդամայն, մեղքի ու շնոր-  
 հաց, դժոխքին բերանը ու արքայութեան  
 մօտ՝ իբր թէ իսկին անդունդներուս մէջ կը  
 բռնէր դիս, չէր թողուր առաջ կամ ետ  
 երթալ, չափազանց ուրախութենէ մը բըռ-  
 նուած, ես դիս մոռնալով, անձիս չափէն  
 դուրս ելլալով, կամ ցաւերուս սաստկու-  
 թենէն յուսահատութեան մէջ ընկղմած,  
 կորսուելով, հապա միշտ երկու հակառակ  
 ծայրերուն վրայ իր հայրական թելին տա-  
 կէն չզատելով, անդադար մէկ դարմա-  
 նալի պտոյտի մը մէջ ցաւի ու մխիթարու-  
 թեան, վեր վար կը քալեցընէր, անանկ  
 որ ես երկու տրտում ա ուրախ ներհակ  
 կացութիւններու մէջ միշտ կերթայի կու  
 գայի, ինչպէս թէ՛ մէկ աչքիս վրայ լոյս  
 ու միւսին վրայ մութ կոխած ըլլար, չըր-  
 թունքիս մէկը ողբ ու մէկալը ուրախու-  
 թիւն երգէր, մէկ ոտքովս գերեզմանին  
 փոսը ընջած, ու միւսովը անմահութեան  
 կոխած, բարձր երկինքը դիտած՝ նայէի:  
 Ահա սասանկ փոփոխական բաղդերով  
 մարդկային կեանքին սա հակառակ ըն-  
 թացքներուն մէջը քալելուս, ամէն ան-

դամին նոր նոր փորձերով կը սորվիմ, որ  
 ասկից ետքը ինչ արամադրութիւններու  
 մէջ պէտք կըլլայ ինծի դտնուիլ, որպիսի  
 մտքերու տէր ըլլալ, ես դիս ընտոր որ  
 պէտք է նէ՛ կարգադրելու կառավարելու  
 համար: Ինչպէս որ Աստուծոյ արդարու  
 թեանը մտածմունքով՝ մեղքերուս թողու  
 թենէն չյուսահատիլ, անանկ ալ անոր ու  
 դորմութենովը չզեղծանիլ. ընտոր որ փոր  
 ձութեան ժամանակը չչփոթիլ չցամբիլ,  
 նոյնպէս ալ շնորհքներուն թեին վրայ ան  
 ձին ապաւինութիւն չընել, որչափ որ յա  
 ջողութեան մէջ չափազանց ուրախութե  
 նէ մը չափը չանցնիլ, նոյնչափ ալ ճա  
 խորդութեան մէջ յուսահատուր չմնալ,  
 հապա միշտ ինչուան վերջը միօրինակ ան  
 տարբեր առաքինութեան ճամբուն մէջ ա  
 ռաջ երթալ, շարունակել:

Ահա ասանկ զարմանալի դադանիքներ  
 մը՝ երկան տարիներով իր սրտին մէջը  
 պահած, դուրս հանել իմացընել ուղեց  
 Դաւիթը, երբ իր ան ներքին ներաշնչու  
 թենովը յափշտակած ու քնարին թելե  
 րուն՝ մատունքը, լեզուն ու սիրտը յար  
 մարցուցած, սկսաւ երգել Աստուծոյ իր  
 սաղմոսինան նորազիւտ ու հրաշալի կըտո  
 րը. « Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխի  
 թարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ »:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Գ.

« Բարի է ինձ զի խոնարհ արարեր զիս, որպէս ուսայց զարդարուցիւնս թո » .

ՍԱՂՄ. ԺԺԸ. 71:

Ո՛ր էի ու ո՛ր կը դանուիմ. ո՛ր բարձրութենէն՝ ինչ ցածութեան, որպիսի սրտիւնն ո՛ր աստիճան անարդութեան ահա ընջած ընկած խոնարհած կը տեսնամ զիս սյսօր . միթէ ես ան երեկուան մարդը չեմ, որ գահի վրայ նստած՝ կը հրամայէի, ամենէն մեծարանքով գովասանքով կը պաշտուէի, մենծէն պղտրկէն մատով կը ցուցուէի . ինչ եղաւ ինձի հիմա . ո՛ր մնաց իմին ան առաջուան փառքս պատիւս, ո՛ր գահս թագս, ո՛ր ծառաներս հպատակներս, ան դանձերս հարստութիւններս ո՛ր տեղ մնացին . քիչ մը առաջ ծիրանիի բեհեզի մէջ պատած, ոսկիի արծաթի մէջ կը շողշողայի կը փալթիլէի ու ամենուն աչքը ինձի առնելով կը խրտողրտէի, հիմա աս մթուն մէջ միս մինակ կը դանդաջեմ . կը թափառիմ, տնէս տեղէս դուրս ընկած վռնտուած, բարեկամներէս երեսէ ձգուած, թշնամիներէն հալածուած, ամենուն ծաղրին, զրկանքին ու նախա-

տանայր նպատակ խաղալիկ եղած , ա-  
տանկ չոր դլխուս , անմխիթար անօգնա-  
կան , թուքի մուրի մէջ , լեռնէ լեռ բար-  
բարական կը պտըտիմ , կոծովս անա-  
պատները կը լեցընեմ ու ողբովս ձորերը  
կը հնչեցընեմ : Ընտոր բան է աս ինծի ե-  
ղածը . ինչ փորձանք է դլխուս եկածը ,  
ինչպիսի խելքէ մտքէ դուրս փոփոխու-  
թիւն է աս ինծի պատահածը . հարկաւ ա-  
սոր մէջ բան մը կայ , հոս գաղտուկ բան  
մը կայ գիտնալու արժանի , մէկ խորհուրդ  
մը պահուած է ասոր տակը : Արդեօք մէկ  
կոյր դիպուածի մը տամ ասիկայ , կամ  
հոգնած փոփոխական բաղդի մը դործքն  
է ըսեմ . բայց ահա հաւատքը կըսէ ինծի ,  
որ առանց վերին նախախնամութեանը  
աշխարհքիս մէջ բան մը չկրնար ըլլալ ,  
Աստուած ինքն է՝ որ վերէն կը սահմանէ  
կը կարգադրէ ամէնը : Չըլլայ որ մարդիկ-  
ները ըլլան՝ որ զիս յանիրաւի հալածեն ,  
բայց ահա ո՛վ չիյտեր , որ անոնք ալ ա-  
ռանց Աստուծոյ թոյլտուութեանը բան մը  
կարող չեն իրենցմէ ընելու , առանց վե-  
րին հրամանին չեն կրնար շարժիլ ու գոր-  
ծել , մենծ ու պղտիկ ամէնքը անոր տուն  
տուածին պէս կը քալեն , կը գործեն : Ո՛վ  
է հապա իմին հալածողս . Աստուած ին-  
քը չըլլայ՝ որ զիս կը խոնարհեցընէ , ո-  
րովհետև քանի որ ըսածիդ պէս ամէն բա-



նը անկէ կու գան , ու անոր ուղածին հրա-  
մայածին պէս կարգի կը գրուին : Ահա  
չատ մտմըտալէն ետքը հիմա հոս տեղ  
դտայ զիս հալածողը , Աստուած ինքն է ,  
տարակոյս չկայ . մէկ զի թողում ուրեմն  
ծուռումուռ դատողութիւններով ասիկայ  
անիկայ բերան տալով , կոյր զկուրայն սլա-  
րապ տեղ աս ան խէլ մը անմեղ մարդիկնե-  
րուն արունը մտնալը , երբոր անոնք յան-  
ցանք մը չունին , Աստուծոյ ձեռքը դաւա-  
դան կըլլան զիս պատժելու ու խրատելու :  
Բայց բանի որ Աստուած կըլլայ իմին հա-  
լածողս , ինչպէս որ ճշմարիտ է , ինչո՞ւ  
ուրեմն անիրաւ տեղ աս եղանակ ճամբայ  
բռնել ինծի հետ , ասանկ չարաչար գետ-  
նէ գետին դարնել , խոնարհեցընել զիս .  
անիկայ ինչպէս որ գիտեմ , մարդուն անի-  
րաւ բան չուղեր չընել , վասն զի արդար  
է , արդարութիւնը կը սիրէ , ու արդարու-  
թենով զաշխարհս կը դատէ . ինչո՞ւ հապա  
աս բանը կընէ ինծի . « Խոնարհ արարել  
զիս » . քննեմ իմանամ ինչու . ահա պատ-  
ճառը . « Արպէս ուսայց դարդարութիւնս  
բո » :

Աստուած ըստ որում արդար է , խօսք  
չկայ , անոր համար ալ զիս կը խոնարհե-  
ցընէ , որպէս զի ես ալ իմին անիրաւու-  
թենէս ետ կենալով ճանչնամ սորվիմ իր  
արդարութիւնը՝ որ մոռցեր էի , շէի յի-

չեր, ուստի ուրիշի մը չէ յանցանքը, ես  
եմ յանցաւորը, Աստուած արդար է, ա-  
նիրաւը ես եմ՝ որ իմին մենձ մենձ ու ան-  
թիւ անհամար դրկանքներովս, անօրէ-  
նութիւններովս պարտաւոր ըրի, ստիպե-  
ցի Աստուծոյ արդարութիւնը՝ խոնարհե-  
ցընելու, անարգելու, նախատելու զիս,  
որպէս զի ասկից ետքը ինչպէս է նէ՝ սոր-  
վիմ իր արդարութիւնը, այսինքն ճանչ-  
նամ, իմանամ, որ կայ վերը Աստուած  
մը, որ կը տեսնայ ամէն բանը, կը դատէ  
ու արդարութենով ամէն մէկուն կը չափէ  
իրեն ըրածին համաձայն. սորվիմ իր ար-  
դարութիւնը, գործքով կատարեմ զանի-  
կայ, վարքիս վարմունքիս վրայ ցուցընեմ,  
եւ կենալով անիրաւ խաբերայ սուտու-  
մուտ ճամբաներէն, որոնց մէջ հաւատքը  
օրէնքը մէկ զի ընելով՝ զլուխս առեր կեր-  
թայի: «Բարի է ինձ զի խոնարհ արարեր  
զիս, որպէս ուսայց զարդարութիւնս քո»:

Աստուած իմ, ահաաս խօսքովս կը յայտ-  
նեմ ամենուն առջին քու արդարութիւնդ,  
ու կը խոստովանիմ իմին անիրաւութիւնս.  
դուն՝ որ ինչուան հիմա առանձին խնամ-  
քով, մասնաւոր նախախնամութենով մը  
իմ վրաս՝ այնքան մենձ ու անթիւ բարիք-  
ներով, պարգևներով՝ պատուեր փառա-  
ւորեր էիր զիս, ես ան փառաւորութիւն-  
ներուն լոյսերուն մէջ՝ որ մատով քեզի



ցոյց կու տային, կը քարոզէին գրեզ մենծ,  
 պարզեաառու, տէր ճանչնալու ու փառք  
 տալու տեղ, ինչպէս որ պէտք էր նէ, ընդ  
 հակառակն մէկ տմարդի ամբարտաա-  
 նութենով ու հպարտութենով կուրցած  
 կապուած՝ անոնց փառքը պատիւը ձեռ-  
 քէդ խղեցի, ինծի առի սեփականեցի ինչ-  
 պէս ինծի միայն արժանի ու վայել, չու-  
 դեցի անկից քեզի մասն ու բաժին մը հա-  
 նել, ինչպէս արդարութիւնդ կը պահանջէր  
 ու կը հրամայէր. դուն՝ որ աս ապերախ-  
 աութիւնը, կոպտութիւնը չէիր յուսար  
 ինծմէ, ոչ ալ կրնայիր ասանկ անիրաու-  
 թեան մը դիմանալ, որ անմիջապէս քու-  
 կին աստուածային արդարութեանդ կը  
 դաշէին, փառքդ ուրիշին տալու մէջ նա-  
 խանձաւոր ըլլալովդ, շատ անդամ կերպ  
 կերպ ճամբաներով ուղեցիր նորէն ար-  
 դարութեանդ սահմանը կանչել խոթել,  
 բայց տեսնալով որ ես աշխարհիս փառա-  
 տրութիւններուն մէջ ընկղմած, յաջո-  
 դութիւններով գեղծուած, մենծութիւն-  
 ներով հարբած, ամէն սուրբ ու արդար  
 օրէնքները կոխելով, անիրաւութիւնը  
 զրկանքը վրադիր ընելով՝ օրուէ օր առաջ  
 կը քայլեմ կերթամ իմին ամբարտաա-  
 ու փառասէր խորհուրդներուս մէջ, ու  
 դիմացս բան մը չեմ սեպեր, պէտք եղաւ  
 որ վերջապէս կտրուկ ու լեզի, բայց ա-

առողջարար ու նախապահեատ դեղի մը  
 ձեռք զարնես ինձի համար, որպէս զի  
 անզամ մը անձնասիրութեան աշխարհա-  
 կան հոգիներով խառնած մտածութիւն-  
 ներուս արբեցութենէն արթննամ, զգաս-  
 տանամ, ես ինձի զամ, չափիս մտնամ,  
 ու ահա ասիկայ ալ բրիր խոնարհեցընե-  
 լով զիս, « Խոնարհ արարեր » . ինչպէս .  
 առիր ձեռքէս ան քուկին տուած պարզե-  
 ներդ, քանքարներդ, վիշտեր նեղութիւն-  
 ներ խրկեցիր զուխս, ցաւեր փորձանք-  
 ներ բացիր վրաս, հիւանդութենով տա-  
 ռապանքով հատցուցիր մաշեցիր մարմի-  
 նիս գեղեցկութիւնը, առողջութիւնը, կեան-  
 քիս օրերը, անզզամ անօրէն մարդոց  
 ձեռքը ձգելով զիս, մէկ շատ զրկանքի հա-  
 լածանքի նպատակ բրիր, ու ասանկ մերկ  
 խայտառակ թուքի մուրի մէջ անարդուած  
 բամբասուած ծաղր ծանակ թողուցիր զիս  
 բոլոր աշխրբիս առջին . ու ասիկայ բրիր  
 այնչափ, ինչուան որ սորվիմ քու արդա-  
 րութիւնդ . « Արպէս ուսայց զարդարու-  
 թիւնս քո » . ճանչնամ՝ որ կայ Աստուած  
 մը վերը, որ ամենուն վրայ կիշխէ ու կը  
 տիրէ, անիկայ է մի միայն տէր, ու ա-  
 մէն փառքը պատիւը անոր կը վայլէ, որ  
 սա ամէն վնասովս սորվիմ խմին օգուտս,  
 ձեռքովս շօշափեմ զանիկայ՝ որուն մըտ-  
 քովս չէի հաւտար, դիտնամ ինչ տրա-

մադրութիւններու տէր պէտք է ինծի ըլ-  
 րալ ու որպիսի համարմունքներ վրաս ու-  
 նենալ . անանկ որ , ինչուան ան ատեն թէ  
 որ չսորվեցայ նէ արդարութիւնը յաջո-  
 դութեան մէջ , գոնէ անկից ետքը ձախոր-  
 դութեան մէջ սորվիմ՝ զանիկայ . թէ որ  
 հարստութեան մէջ կորսնցուցի նէ , աղ-  
 քատութեան մէջ գտնամ զանիկայ . թէ  
 որ պայծառ աղէկ օրերուս մէջը մոռցայ  
 նէ , նեղ մութ օրերուս մէջ միտքս բերեմ  
 զանիկայ : Աւտի ահա աս մտքով « Բա-  
 րի է ինձ զի խոնարհ արարեր զիս , որպէս  
 ուսայց զարդարութիւնս քո » :

Տէր իմ , իրաւ աս ինծի սահմանած դեղդ ,  
 հարմունքդ , հայրական գաւազանդ ծանր  
 եկաւ ինծի առջի բերան , լեզի համ տուաւ ,  
 ցաւ իմացայ սրտիս մէջ , վրդովեցաւ բը-  
 նութիւնս , բայց ետքէն տեսնալով որ ա-  
 նոնց ձեռքովը անձնասիրութեան ներքին  
 ախտերուս , ապականեալ վէրքերուս մա-  
 հարեր հետեանքներէն կը խալըսիմ , ու  
 քիչ քիչ աստուածսիրութեան առողջ ա-  
 ուքինի մտածութիւններուն մէջ առաջ  
 կը քալեմ կը հաստատուիմ , անոր համար  
 ես՝ աղէկ գալ սկսաւ . « Բարի է » , շահա-  
 ւոր օգտակար է , հաճելի ընդունելի է ,  
 սիրելի բաղձալի է ինծի ան խոնարհու-  
 թիւնները , որովհետեւ անոնց ձեռքովը Աս-  
 տուծոյ արդարութեան ուսմունքին մէջ

առաջ կերթամ, ան սրբոյ դիտութիւնը  
կը ստանամ. կը սորվիմ որ իմ շատքս  
ոչինչ է, քեզի կը վայլէ ամէն շատքը,  
պատիւը, գովասանքը, սկիզբը և վերջը  
քեզի ընծայելով. կը սորվիմ որ առանց  
քեզի բան մը չեմ կրնար ընել, իմին ա-  
մէն ուժս, կարողութիւնս քու վրայ կե-  
ցած է. կը սորվիմ չհաւտալ աշխարհային  
մենծութեան, չվստահիլ փոփոխական  
բազդին, չյուսալ մարմնաւոր յաջողու-  
թեան, որովհետև քեզմէ ու քեզմով է ա-  
մէն ունեցածս, ամէնը վերէն ինձի եկած  
պարզներն են. վերջապէս կը սորվիմ ան  
ամէն տեսակ առարթնութիւնները, որ քու  
արդարութիւնդ քննելուն, ճանչնալուն ու  
յարգելուն վրայ կը կենան:

Ահա աս ամէն ճշմարտութիւններուն  
փորձը ցուցնելով իր վրան Գաւիթը, ցա-  
ւած ու միանդամայն ուրախ սրտով, ող-  
բերդականը ուրախականին հետ վարպետ  
ներդաշնակութենով մը խառնած կերպէ  
Աստուծոյ իր սաղմոսին աս իմաստալից  
ու սրտաուռչ տունը. « Բարի է ինձ զի խո-  
նարհ արարեր զիս, որպէս ուսայց զար-  
դարութիւնս քո »:



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Գ .

« Դարձն գալստ իմ , զի մի տեսից զնաերու-  
րիւն » .

ՍՍՂՄ . ՃԺԸ . 37 :

Ով Աստուած իմ , ստեղծող հողիւս ու  
մարմինիս , դուն ինչպէս որ առաջուրն է  
տուեր էիր ինծի աս զգայութիւնները ան-  
դամները , մէկ զլիսուն հնազանդութեան  
տակը վայելչապէս մը յարմարցընելով ու  
իրար մէջ սքանչելի համեմատութիւն , ու  
ներդաշնակութիւն մը դրած՝ բոլոր բնու-  
թեան վրայ մենձ դրեր էիր զիս . ահա ա-  
նոնց ամէնը հրամայածիդ պէս հնազան-  
դութեանս տակը կեցած՝ խօսքէս դուրս  
չեն ելար , ու ինչպէս պատրաստական  
ծառայ մը հրամանս տեղն ՚ի տեղ կը կա-  
տարեն . անոնցմէ դուրսելիք մը չունիմ ,  
բայց թէ որ դանդաւ մը ունիմ նէ ընե-  
լու քեզի այսօր՝ ուրիշին համար չէ , հա-  
պա մէկէն միայն է , անոր համար է որ  
այսօր ձայնս բարձրացուցած , քեզի վեր-  
ցուցած , բողոք կընեմ երկիւնքը . ահա ա-  
սիկայ իմին աչքերս է , մէկ հատիկ ամէն  
օրուան ընտանի թշնամիս , որ շատ հեղ  
հրամանէս դուրս ելած , զլուխը առնելով



երթալով՝ օրինաւոր իշխանութենէն կաւրատամբի, ու բոլոր բնութեան միարանութիւնը, խաղաղութիւնը վեր ՚ի վարկընէ, կը խոռովէ, կարէ, կապականէ: Եւ միթէ ան աչքերը չէին մի որ ատեն մըն ալ դրախտին մէջ արդելուած ծառին անհնազանդ նայուածքովը, իրեն հետ ուրիշ անդամներն ալ անանկ չարաչար աւրատամբեցուցին, ու զլուխ քաշել տուին տիրոջը դէմ: Գուն, ով տէր իմ, ան աչքը՝ որ ուրիշ անդամներէն աւելի պատուաւոր, փառաւոր, ազնիւ, փափուկ ու պայծառ ստեղծեր էիր, զլսուն բարձր աչտարակին վրայ իբր երկու արթուն պահապան մը դնելով՝ բնութեան թշնամին դիտելու, ու երկնքին փալիլուն աստղերէն աւելի լոյս տուեր էիր անոր, զքեզ տէր ստեղծող ճանչցընելով անոր, ահա այսօր ոտքէն աւելի վար ինջած, ցածին խոնարհած՝ մթուն մէջ կը խարխափէ կը դանդաչէ, ու իր խաւարովը բնութիւնն ալ մէկ տեղ կը մթնցընէ:

Ո՛վ քանի՛ քանի անգամ իր խաբերայ լուսովը՝ քեզմէ առածը գրեթէ կորսընցուցածի պէս, մութը՝ լոյս, սեր՝ ճերմակ, դիչերը՝ ցորեկ, թշնամին՝ բարեկամ ցուցընելով, խաբեր է դիս, ճեռք տուեր մատներ է. քանի՛ հեղ սուար՝ ճշմարիտ, ծուռը՝ շիտակ, սխալը՝ ուղիղ երեցընելով ինչ

ծի, մէկ մեղքէն մէկալ մեղք, մոլութենէ  
 մոլութիւն, փոսէն փոս իրեն հետ քաշիւր  
 քաշկուտեր, ու մենձ մենձ փորձանքներ  
 բացեր է գլուխս որն որ ետքէն շատ սուղ  
 նստան ինձի, ու բիւր ափսոսաներ ըսել  
 տուին, վասն զի որչափ կը համրուին մեղ-  
 քերը՝ որ աչքին սանձարձակութենէն,  
 անզգուշութենէն, անհնազանդութենէն  
 պատճառաձ առաջ եկած են. ահա անկէ  
 մարմինին ժամանակաւոր մահ, անկէ դար-  
 ձեալ շատ անգամ հոգիին յաւիտենական  
 մահ. ինչպէս որ պատուհանէն մահ մը-  
 տած ըսուեր է, ատանկ ալ հոգւոյն մա-  
 հը աչքէն կը մտնայ ըսելը՝ արտառոց  
 խօսք մը չէ: Ահա ասոր ատանկ ըլլալը  
 նոյն իսկ ես ալ շատ անգամ՝ իմին վնա-  
 սովս աղեկէն իմացած լաւ մը համոզուած  
 ըլլալով՝ կերպ կերպ փորձեր ըրի, ճամ-  
 բայ փնտռեցի. ճարը մտմըտացի ասոր  
 առջը առնելու, դասելու ճամբայ բերե-  
 լու. բայց տեսայ որ փուճ եղաւ ամէնը,  
 մարդկային հնարքը ճարտարութիւնը բա-  
 ւական չեղաւ, բան մը չկրցաւ ընել, ուս-  
 տի պէտք եղաւ որ աս օրուան օրս քեզի  
 դառնամ, դիմեմ, պսանկ մը աղաչելով.  
 « Գարձո զաչս իմ, զի մի տեսից զնան-  
 րութիւն »:

Ով տէր իմ, որ աչքիս ստեղծողն ես,  
 ինչպէս որ դուն տուիր ինձի անիկայ, ա-

նանկ ալ ես հիմա նորէն քեզի կը դարձը  
 նեմ, հիմակուրնէ քու ձեռքդ կը դնեմ, կը  
 յանձնեմ անոր կերպը կառավարութիւ-  
 նը ու բոլոր շարժումները տէրութիւնը,  
 կարճապէս խօսքով մը ցաւս բացատրե-  
 լով խնդիրքիս հարկաւորութիւնը կը յայտ-  
 նեմ, բայց կարօտութիւնս ալ երկան բա-  
 րակ յայտնելու տեսն չունենալով՝ առջի  
 բերան մէկէն խնդիրքս առջիդ կը դնեմ.  
 « Գարձո դաչս իմ », ինչպէս թէ ըսել կու-  
 դեմ, դարձուր, ետ ըրէ, փոխէ, շրջէ,  
 հրէ աչքս, դադրեցուր, պակսեցուր, կար-  
 ձեցուր ան շարժումները, ան նայուածքը  
 մթնցուր, խաւարեցուր ան տեսութիւնը,  
 կտրէ, կապէ, սանձէ, զսպէ ան հայե-  
 ցուածքը, թող մի տար որ ալ կարենայ  
 տեսնալ, նայիլ, ճանչնալ որոնք որ պատ-  
 ճառ կըլլան իր շեղելուն, ծռուելուն, մեղ-  
 քի մէջ իյնալուն : Բայց որ բաներն են ա-  
 սոնք. « Զնանքութիւնս », այսինքն գէշ  
 վնասակար առարկաներ, ան անպարկեշտ,  
 անվայել դարգերը, գեղեցկութիւնները,  
 ան մերկ բաց քաջուածները, գէմքերը,  
 ան լկտի լիրբ շարժումները, ձևերը,  
 կերպերը, ան անառակ անմաքուր տեսա-  
 րանները, խաղերը, կայթերը, թատրոն-  
 ները, ուրկէց առաքինութիւնը կը փախ-  
 չի ու անմաքուր սէրը կը թաղաւորէ : Ի-  
 րաւ ասոնց նայիլը անուշ կու գայ, սիրելի

է աչքիս, որովհետեւ բնութեան հաճելի բաներ են. թէ և հիմա անանկ է, բայց ետքէն ան անուշ նայուածքին տակը ի՛նչ լեղիութիւններուն համտեա չպիտոր ըլլայ, ան փափուկ գեղեցիկ գունաւոր ծաղիկներուն ներքեւ որպիսի՛ թիւնաւոր օձեր, իժեր, կարիճներ չեն պահուրտած՝ որ պահեկէ մը պիտոր խայթեն խոթեն ու մահուչափ վիրաւորեն: « Գարձո՞ զաչս իմ, զի մի տեսից զնանրութիւն »:

Ահա անիկայ արդէն սկսած է նայիլ, անսանձ նայուածքով մը աչքը նետեր է տեսնալու. առաջ հեռուէն վեր ՚ի վերոյ մը կը դիտէր, հիմա քովանց բարակ բարակ կը զննէ, ահա նայելները կը կըրկնուին, երթալով վառվռուն բիբերը ցից ցից տնկուեցան, կամաց կամաց նայիս սկսաւ բնութեան մէջ ալէկոծութիւն մը, միտքը աչքին իրեն առաջ դրածը վեր վար բննելու զննելու դրաղած է, կերևայ որ կամբը վերջապէս հաճութիւն պիտոր ցուցընէ, սիրտը արդէն բարեկամութեան դաշինքին վրայ խօսքի հետ է, աս ամէն մէկ շարժմունքները պատրաստութիւնները աչքէն ինչուան սիրտը աղէկ նշաններ չեն տար, կը վախցուի որ ապրտամբութիւնը ընդհանուր պիտոր ըլլայ ու մեղքը կատարեալ: Հապա, ո՞ր ես, ով Աստուած իմ, օգնութիւն հասիր, թշնա-



մին դուռը հասած կորուստս մտա է, եւ  
կուր դուրս հանէ զանիկայ. « Գարձո » .  
զարձուր ու շուտ զարձուր . բայց ս'ըր զար-  
ձընէ արդեօք . զարձուր մահին տեղը, հոն  
ցուցուր անոր որ ամէն մարմնաւոր զե-  
ղեցկութիւնները փուճ, խաբեբայ, ան-  
ցաւոր են, գերեզմանին փոսին մէջ  
շուտ կը շորնան կը թառամին կը թափին :  
Գարձուր դատաստանին ձորը, հոն ցու-  
ցուր իրեն որ սատանային ամէն խաբէու-  
թիւնները, վարպետութիւնները, ստու-  
թիւնները՝ ճշմարտութեան արդարութեան  
պայծառ լուսովը պիտոր խայտառակին  
անյայտ ըլլան, չքանան : Գարձուր դժոխ-  
քին բանտը, հոն ցուցուր՝ որ աշխարհիս  
ամէն վայելմունքները, զուարճութիւննե-  
րը, հեշտութիւնները ան յաւիտենական  
կրակին մէջ լեղիութեան, արամութեան,  
ցաւի, լացքի, սուզի պիտոր փոխուին վեր-  
ջանան : Գարձուր երկինքը արքայութեան,  
հոն ցուցուր իրեն որ Սատուծոյ անուշ ե-  
րեսին տեսութեանը զմայլմունքովը միայն  
աչքերը կը զուարճանան, զոհ կըլլան կը  
կշտանան ու իրենց բաղձանքին լրումը  
կառնեն : Ա երջապէս զարձուր Գողգոթայ-  
ին զլուխը, հոն ցուցուր անոր Յիսուս  
Քրիստոս խաչին վրայ արունթաթախ վի-  
րաւորուած, հողեւարք, վերջին անգամ  
աչքին մեղացը համար ծանրացած մութ



աչքերը կը գոցէ , կը մեռնի : Ահա քրիստոնէին նայելու տեղեր , զննելու առարկաներ , դուարձանալու նիւթեր . ասոնց դարձուր , տէր իմ , իմին աչքերս ալ , որպէս զի ասանկ բաներուն ամէն իժիր նայելով զբաղելով՝ դազրի զզուի մէկ անգամ աշխրբիս նանրութիւններուն նայելէն : Ասանկ սոսկալի տեսարաններուն նայելէն , այսպիսի թատրոնները տեսնալէն վերջը՝ ալ ո՞վ կը համարձակի անցաւոր փուճ խաբերայ գեղեցկութիւններուն նայելու , ո՞վ սիրտ կընէ մեղանշական առարկաներուն տեսութենովը դուարձանալու սիրահարուելու . միթէ անանկ մարդը մահը իր աչքը շոցցած՝ մահին ըրածը արդէն իր ձեռքովը ընելով , մահացուցած չէ՞ մի , ուխտ դրած ըլլալով՝ չնայելու մէյ մըն ալ աշխրբիս նանրութիւններուն վրայ :

Ահա աս մարով Դաւիթը՝ աչքերուն սրածառաւ շատփորձանքներ զլիւնէն անցնելով , ներքին սրտի ցառով մը իր սովորական աղօթքին ու մխիթարութեան սաղմոսարան քնարը ձեռքը տուած՝ կազաչէ Աստուծոյ իր աչքերուն համար իրեն սաղմոսին աս կարճաբառ ու հողելից կտորին մէջ . « Դարձո զաչս իմ , զի մի տեսից զնանրութիւն » :

նորոգման այնք ճորձ ի յոյժնոր յոյժնոր  
 մտաւորական սէր իրից . իրաւոր կոչման

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ Ե .

« Ոչտ ինձ առնել զկամս յո, զի զոչ ես Ս.ս. տուած իմ » .

ՍՅՂԾ . ԾԽԲ . 11 :

Ս,հա ամէն ատեն խորաններուն առջին ցաւած խոնարհ սրտով ընկած փռուած՝ եռացքով ժտութենով օտ խնդիրքը կուզամ ընելու, ամէն ներքին մտածութիւններու խունկին բարվառովը, ամէն դրսի մահացուցմունքներու զոհին բարմունքին ետեէն, ամէն ձեռքիս համբարձմունքին հետ, արտասուախառն հառաչանքներու մէջ, ամէն օրուան հացիս հետ մէկ տեղ . վասն զի ինչպէս հանապազօրեայ հաց մը ու անկէ աւելի հարկաւոր է ինծի քուկին ամենասուրբ կամբք կատարել, որովհետեւ անկէ կախուած է հողի փրկութիւնս, կատարելութիւնս, սրբութիւնս, անոր վրան կեցած է խին փառքս, մենծութիւնս, երջանկութիւնս ու անոր հետ կապուած է վերջին վախճանս ու ամէն բանս : Բայց ահա ես ասանկ մէկ ամենահարկաւոր զիտութեան մէջ սրակասաւոր տղէտ ըլլալովս, զանիկայ ՚ի զորձ զնելու անխորձ անվարժ ըլլալով, քեզի պէս իմաստուն

փորձ վարպետի մը ոտքը կու դամ կիյնամ, որպէս զի քու ձեռքիդ տակը երկանատեն մը աշկերտութիւն ընելով վերջապէս սորվիմ քուկին ամենասուրբ կամացդ համաձայնելուն ուսմունքը, որ ընտոր, ինչ կերպով պէտք է ինձի կատարել զանիկայ, ինչպէս հպատակութենով պատրաստութենով, որսլիսի եռացկոտութենով ու բաղձանքով, ինչ աստիճան անտարբերութենով, ուրախութենով. ինչպէս տեղն ՚ի տեղ, ամբողջ, առանց մէկը դուրս հանելու, մէկին մէջ դանդաղելու, կիսելու, եւ դառնալու:

« Աւստ ինձ առնել զկամս քո, զի դու ես Սաստուած իմ »: Աս խմին կամքս ընելուն մէջ չունիմ քեզմէ կարօտութիւն մը սորվելու, որովհետեւ արդէն ես իմին մէջս աղէկ վարպետներ ունիմ, որ պղտըկուց սկսան դաս տալ ինձի, մէկմէկ բացին ցուցրցին իմացուցին, խրթին տեղերը մեկնեցին, առջիս դրին բնութիւնը, արունը, կիրքը. անիկայ սորվելու քեզմէ օգնութիւն չեմ ուզեր, ինչու որ դրսէն ունիմ մէկ շատ օգնիչներ, որ ամէն կերպով տուն կու տան, կօղնեն, կը դիւրինցընեն, ձեռքէս բռնած անոր զիտութեան մէջ առաջ կը տանին՝ սատանան, աշխարհք, չար օրինակը. չեմ ուզեր քեզմէ անիկայ սորվելուն կերպը, որովհետեւ ա-

նիկայ ինքիրեն գիւրին գիտութիւն մըն է ,  
 ալ ինչ անուշութիւն բնութեան ետեւն  
 երթալ , մարմինին կամքը կատարել , աշ-  
 խրքին հետեիլ , կիրքերուն զրգմունքին  
 հնազանդիլ , պայտութիւններուն խօսքը  
 ընել . ուստի դուն մի սորվըցընէր ինծի  
 անիկայ , հասա սորվըցուր միայն քու  
 կամքդ կատարելը , « Ուստ ինձ առնել ըզ-  
 կամս քո » . որ ինծի համար անձանօթ ,  
 նորելիք , ծածուկ գիտութիւն մըն է , ուր-  
 կէց սպականեալ բնութենէն լոյս մը չու-  
 նիմ , որ բարձր , բարակ , խրթին գիտու-  
 թիւն մըն է , որուն վրայ փիլիսոփաները  
 բան մը չկրցան խօսիլ . որ դժուար տ անի-  
 մանալի գիտութիւն մըն է , որուն աշ-  
 խրքէն , շար օրինակէն , մարդկային նը-  
 կատմունքէն օգնութիւն մը չունիմ . գի-  
 տութիւն մըն է , որուն մարմինը գէմ կը  
 դնէ , կատէ , կիրքը կը մթնցընէ , արունը  
 կը պատերազմի , շար սովորութիւնը մոռ-  
 ցընել կու տայ . աշխարհքին ձայնը , կիր-  
 քերուն գոռում զոչումը , ստեղծուածնե-  
 րուն ունայնութիւնը՝ անոր հեզիկ , բա-  
 րակ , կամացուկ ձայնը կը գոցէ , կը խղզէ ,  
 շլսեցընէր : Դուն սորվըցուր ինծի միայն  
 քու ամենասուրբ կամքդ կատարելը , որ  
 սրբոց միայն գիտութիւնն է , որ սորվե-  
 ցան քենէ շատ աշխատանքով արուն քըր-  
 տինքով , տարիներով քու ձեռքիդ տակը



դարոց գացին , որուն կանոնը օրինակը  
 փորձը քեզմէ առին : Դուն , ով տէր իմ ,  
 առջի անգամ աշխարհք դալուդ ատեն աս  
 սուրբ դիտութեան դարոցը բացիր , երբոր  
 ան մութ աղքատին դոմին մէջ ճնար՝ երկ-  
 նաւոր հօրդ կամքը կատարելու համար՝  
 երկինքը թող տալով փառաց աթոռդ , ու  
 իջնալով մտորի մը մէջ , յանձդ առնելով  
 աղքատութիւնը , մերկութիւնը , ցածու-  
 թիւնը . անոր զեղեցիկ դասերը տուիր ,  
 երբոր անոր սուրբ կամքը տեղը հասցը-  
 նելու համար՝ երեսուն տարի մութ խա-  
 նութի մը մէջ անձանօթ կեանք մը անցու-  
 ցիր , ծածկելով ամէն փառքդ լոյսդ , սքան-  
 չելագործութիւնդ . անոր ազուորակ դրունք-  
 ները յայտնեցիր , երբ քարոզութեանդ  
 բեմը ելար , աւետարանդ տարածեցիր ,  
 Աստուծոյ կամքը կատարելը քեզի ամէն  
 օրուան կերակուր ըմպելիքդ ըսելով . ա-  
 նոր զարմանալի օրինակները վրադ ցու-  
 ցուցիր , երբոր հօրդ կամքը հաճեցընելու  
 համար պարտէզին մէջ չարչարանքնե-  
 րուդ լեղի դաւաթը անոր ձեռքէն յօժա-  
 րութենով ընդունեցիր , ըսելով՝ չէ թէ ի-  
 մին կամքս , հապա քու կամքդ ըլլայ . ա-  
 նոր կերպը սորվըցուցիր , երբ անձայն  
 լոխի մնչիկ գառնուկի պէս թողուցիր մեր-  
 կանալ , ծնծուիլ , խայտառակուիլ , տալով  
 դրեղ թշնամիներուդ ձեռքը , որ ինչուան



ուսկրներդ անցուցին իրենց վրէժխնդրու-  
թիւնը, մարմինիդ վրայ ողջ տեղ մը թող  
չտալով, ոչ ալ երակներուդ մէջ կաթիլ  
մը արուն. անոր տեղը սորվըցուցիր, երբ  
երկնաւոր հօրդ ուղելովը Գողգոթային ա-  
րունլուայ ճամբան ըրիր, երկնցընելով  
ձեռքդ դտրդ խաչին վրայ գամուելու, ա-  
նոր հետ գամելով սիրտդ ալ մէկտեղ. ա-  
նոր ատենը սորվըցուցիր, երբոր Աստու-  
ծոյ կամբը լեցընելու համար՝ խաչ ելար  
ու խաչէն չընջար, բայց եթէ մեռնելէն  
ետե, անոր վրան շունչ աուիր. վերջապէս  
ծնար ու մեռար Աստուծոյ կամբը կատա-  
րելով. ասանկով սորվըցուցիր որ Աստու-  
ծոյ կամբը կատարելը ինչ բան է, ընտոր  
պէտք է կատարել, ինչ միջոցով, ինչ կեր-  
պով, որ ճամբով, որպիսի համբերութե-  
նով յարատևութենով, ինչ եղանակ ան-  
տարբերութենով, պատրաստութենով, ա-  
րիութենով, ուրախութենով:

Ահա ասիկայ սորվըցուր ինծի, « Աստ  
ինձ առնել զկամս քո ». ինչպէս թէ ըսէի.  
Իմացուր, հասկըցուր, դաս աուր, մէյմէկ  
քիչ ասջիս դիր սորվելու, խրթին տեղե-  
րը մէկմէկ պարզէ մէկնէ ինծի, զիւրա-  
հասկընալի ըրէ: Սորվըցուր, չէ թէ սանկ  
մը երեսանց վեր ի վերոյ գրուցելով ան-  
ցիր, հապա տեղ տեղ կանկ առ, կեցիր,  
հարցուփորձ ըրէ, աղէկ մը միտքս խո-

թէ, տարւորէ, շատ անգամ յիշեցուր,  
 նորէն նորէն տուն տուր: Սորվըցուր մէկ  
 բթամիտ, թանճրամիտ, նոր, տկար, վախ-  
 կոտ աշկերտի մը պէս տարիներով առջևդ  
 առած. խաղութեանս, մտացկոտութեանս  
 ներելով, տկարութեանս անվարժութեանս  
 դանց ընելով, զիջանելով: Սորվըցուր՝ չէ  
 թէ օր մը, ամիս մը, տարի մը, հասլա ա-  
 մէն օր, ամէն ատեն, աւտու իրիկուն,  
 բոլոր կեանքիս մէջ, ինչուան ետքի շուն-  
 չըս: Սորվըցուր, երբեմն անուշութենով,  
 խրատով, երբեմն խստութենով, դաւա-  
 դանով, պահ մը ձախորդութեան, պահ  
 մը յաջողութեան մէջ, մրրկի, պարզու-  
 թեան, խաղաղութեան, ալէկոծութեան,  
 մութի՛ լոյսին մէջ, աղէկ՛ գէշ, յաջող՛ ան-  
 յաջող փորձութիւններ պատահմունքներ  
 զիմացս հանելով, զլուխս խրկելով, ու ա-  
 մէնը անիկայ սորվելու, անոր մէջ առաջ  
 երթալու, հաստեն փորձ ըլլալու միջոց մը  
 ընելով ինծի. անանկ որ թէ որ հարստու-  
 թեան մէջ չեմ սորվիր, աղբատութեան մէջ  
 սորվըցուր. թէ որ հանգստութեան մէջ կը  
 մտնամ, նեղութեան մէջ սորվըցուր. թէ  
 կեանքիս ժամանակը դանց կընեմ, գոնէ  
 մահիս ատեն սորվըցուր, որ վերջապէս  
 աս սուրբ զիտութեան ուսմունքէն տգէտ  
 անմասն չմնալով մեռնիմ. քու ամենա-  
 սուրբ կամքիդ ներքև զլուխս դրած, սիրտս

ու հոգիս քու ձեռքդ յանձնած՝ մեռնելով,  
քու ձեռքէդ ընդունելով մահս, ուրկէց  
կեանքս առի. ասանկով կեանքիս, մահիս  
մէջ սորվըցուր քու կամքդ կատարելը:

Բայց ինչու համար ասոնց ամէնը. «Ձի  
դու ես Աստուած իմ». ինչու որ դուն ի-  
մին տէրս ես, ես քուկին ծառադ, դուն  
Թաղաւորս, ես հպատակդ. դուն հայրս,  
եւ քու որդիդ. դուն ստեղծողս, եւ ստեղ-  
ծուածդ. մէկ խօսքով՝ դուն իմին Աստուա-  
ծըս, եւ երկրպագող եմ. անոր համար  
արժան ե իրաւ է՝ որ միշտ քու ամենա-  
սուրբ կամքդ կատարեմ, ամէն ձայնիդ  
շարժմունքին հնազանդիմ, ամէն հրա-  
մանքդ պահեմ, ամէն քալուածքիդ նշա-  
նին հետեիմ, ուր կանչես նէ, ինչպէս կը  
հրամայես, որչափ կուղես, ինչուան երբ  
կըսես, անոր համար սահմանուած ըլլա-  
լով ծնանելու մեռնելու, զոհ ըլլալու հատ-  
նելու, անոր վրան իմին ամէն փառքս,  
կեանքս, երջանկութիւնս գնելու: Աւստի  
ով Աստուած իմ, ձեռքս բացած կաղա-  
չեմ քեզի աս խնդիրքիս համար: «Աւստի  
ինձ առնել զկամս քո, զի դու ես Աս-  
տուած իմ». սորվըցուր ինձի քու կամքդ  
ընելը, որովհետեւ իմին Աստուածս ես,  
կրնաս սորվըցընել ինձի զանիկայ. թէ և  
ես տկար ըլլամ անիկայ սորվելու, թէ և  
բնութեանս մէջ ներհակութիւն գտնամ

անիկայ ընելու, թէ և աշխարհէն, մարմինէն, սատանայէն զրգուովմ անիկայ չընելու. բայց դուն սորվըցուր ինծի ինչպէս Աստուած մը կամբդ յայտնելով ինծի, ու ինչպէս հայր մը ձեռքդ երկընցուցած օգնելով ինծի զանիկայ կատարելու, ինչպէս Աստուած մը հրամայելով, ինչպէս վարպետ մը հրամայածդ ընելու վարժեցընելով: Ո՞վ ինչչափ երջանիկ կըլլայի իրաւցընէ, որչափ բազդաւոր կըլլար վիճակս, թէ որ անգամ մը սորվէի քննէաս սուրբ ու ամենահարկաւոր դիտութիւնը, որ քու կամացդ համաձայնութեան վրայ կը կենայ, որով խէլ մը սլարապ սարապ սիրտմաշուք մտմտութենքէն, շատ մը սիրտհատումներէն, աւելորդ հոգերէն բռներէն կը թոթովէի կը խալըսէի ու ճըշմարիտ ազատութեան որդւոց երջանկութենէն համտես կըլլայի:

Ահա ասանկ բազմանքներով իր ներքին ողիքներուն մէջը վառուած Դաւիթը, երկուքումէկ իր հոգելից մազթանքներուն սազմոսարանը ձեռքը առած, իր քաղցրանուազ քնարին հետ ներդաշնակելով՝ բերնով ու սրտովը միանգամայն առտու իրիկան կերգէ Աստուծոյ իր սազմոսին աս անուշ սուներ. « Ուստ ինձ առնել ըզկամս քո, զի զո՞ւ ևս Աստուած իմ »:



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ 2 .

« Ի քեզ տեք յոչսացայ, մի ամաչեցից յաշի-  
տեան » .

ՍԱՂՄ. Լ. 1 :

Ահա ինչուան հիմա պարապ փուճու-  
մուճ յոյսերով խարուած, ասոր խօսքին  
անոր խօսքին խոստամունքին հաւատարով,  
իմին ճարպիկութեանս խելքիս հանելով,  
տեսայ որ ամէն յոյսս պարապ ելաւ փը-  
ճացաւ, ձեռքս բան մը չանցաւ, բացը  
մնացի, ամօթով ետ դարձայ . նեղ օրիս  
մէջ տէր ելլող մը, հալածուելու ասան  
կոթընելիք մը, փախչելու մէջ ապաս-  
տան մը, նաւակոծուելու ժամանակը հո-  
գի փրկող երկաթ մը չունեցայ . ասանկ  
չոր գլխուս, միս մինաւորիկ, անտէր մնա-  
ցի : Բայց ահա հիմա աս իմին վրասներէս  
աչքս բացուելով՝ աղեկէն համոզուեցայ  
միտքս դրի, հասկըցայ իմացայ՝ որ Աս-  
տուծմէ դուրս մարդուն մխիթարութիւն,  
օգնութիւն, փրկութիւն չկայ, ամէնը ան-  
կէ, անով ու անոր ձեռքն է, ամէն բանը  
ուղածին զիտցածին պէս կարգի կը դնէ  
կը կառավարէ, կաւրէ կը շինէ, կու տայ  
կառնէ :



Ուստի, ով Աստուած իմ, ահա ես ալ  
 աս օրուան օրս, թէպէտ ե քիչ մը ուշ  
 կեկ, բայց վերջապէս քեզի կը դառնամ  
 կու դամ կիյնամ, որ իմին մէկ հատիկ  
 տէրս, ստեղծողս, Աստուածս ես, բարի  
 հովիւս, քաջ զօրապետս, վարպետ նա-  
 ւապետս ու ճարտար բժիշկս ես, քենէ  
 ուրիշ տէր չեմ՝ ճանչնար ու չեմ ուզեր  
 ճանչնալ, ինչ պիտի ընես նէ դուն պիտոր  
 ընես, « Ի քեզ տէր յուսացայ » . ինչպէս  
 թէ ըսել կուզեմ, ալ ասկից ետքը ամէն  
 մարդկային ճարտարութենէն, աշխար-  
 քիս իմաստութենէն, ներսի դրսի օգնու-  
 թիւններէն ձեռքս քաշած, երեսս դար-  
 ձուցած, մէկ դի հանած նետած իզմէ, բո-  
 լոր յոյսս ապաւինութիւնս ալ քեզի եմ  
 դրեր, ամէն մտմտութիւնս, հոգս, ընելիքս  
 քեզի թողուցեր եմ, քու զիրկից կը վազեմ,  
 քու վերարկուից ներքե մտած հովանաւո-  
 թութեանդ թեին տակը կը պահուրտիմ .  
 մեղքերուս տեսէն խոռված սարսրված  
 դարհուրած ժամանակս՝ աստուածային  
 անհուն ողորմութեանդ ծոցը ապաւինելու  
 տեղ կը փնտռեմ . չար սովորութիւննե-  
 րուս, կիրքերուս, մոլութիւններուս ցաւե-  
 րովը բռնուած, ընկած մաշած ատեն, մա-  
 հիճիւ մէջէն երկնաւոր բժշկիդ շնորհաց  
 այցելութեանը ձեռքս կերկնցընեմ աշ-  
 խարքիս սատանային փոթորիկով բռ-

նուած վրդոված ծփած ժամանակս՝ ալիք-  
 ներուն մէջէն աստուածային նախախնա-  
 մութեանդ ճայնս կը վերցընեմ: Ասանկ .  
 Աստուած իմ, քեզի յուսացեր եմ ու կը  
 յուսամ, ճայնս քեզի կը կանչէ, աչքս քե-  
 զի կը դիտէ, միտքս դքեզ կը յիշէ, սիրտս  
 քեզ կը սպասէ: « Ի քեզ տէր յուսացայ » .  
 հիմակուհիմա ասոնք խօսք մըն են, բայց  
 ահա ասկից ետքը թող փորձը ցուցընէ . և  
 ինչպէս . ահա պատերազմի փողեր մը կը  
 լսեմ, զինուորներու բաթուտոց մը ահանջս  
 կը զարնէ, զէնքերու եալպըրտոց մը աչքս  
 կը փալիլայ, չորս դիս թշնամիներէն աս-  
 նուած պաշարուած է, յարձակմունքները  
 մէկուսա՝ կատաղի ու սաստիկ են, ա-  
 սլըստամբութիւնը ընդհանուր է, կորուս-  
 տքս դուռը հասած մօտ կերևայ . մեղքերս  
 մէկ կողմէն սև ամպերու պէս զլխուս վը-  
 րայ դիզուած՝ կայծակներ կը սպառնան,  
 փորձութիւնները ամէն դիէն ծովին ալիք-  
 ներուն նման դէպ ՚ի ինձի գալով կը զար-  
 նեն կը բաղխեն ու ընկղմելու հետ են . աչ-  
 խըրբիս բիւր հազար վտանգներ ար-  
 գելքներ ամէն իժիր ոտքս սահեցընելով  
 գլտորելով՝ դժոխքին բերանը կը հրեն .  
 մարմինս տկար ցաւի չզիմանար, դէմ  
 դնելու ճար չունի, խաչերս մէկզմէկէ  
 ծանր՝ տանելու կարողութիւն չկայ, ար-  
 դեօք ինչ պիտոր ըլլայ վերջը: Բան չկայ,

հող չէ, յաջող է ամէնը, բարի է վերջը, ինչու որ « Ի քեզ տէր յուսացայ » . ահա յուսացայ : Ահա ասիկայ յիշելու՝ ամէն մտածմունքը իզմէ զնաց, հանդարտութիւն մը եկաւ ինծի, խաղաղութիւնը տիրեց ներսս . Աստուծոյ ձայնը ելլալուն պէս, որուն ես յուսացեր եմ, Աստուած իմ դիէս մէջ տեղ երևնալուն պէս՝ նայիս պատերազմին վիճակը փոխուեցաւ, յաղթուելու կողմը վրայ ելլալ սկսաւ, պսակները ձեռքէ ձեռք անցան, ու յաղթութեան նուագարանները մէկ կողմէն միւս դիւն կը լսուին : « Ի քեզ տէր յուսացայ » . յուսացայ քո շնորհացդ, որ բնութեան ձայնէն սաստիկ է, կիրքերուս բռնութենէն դօրաւոր է, աստերուս ուժէն վեր է . յուսացայ քո ողորմութեանդ, որ մեղքերուս շատութենէն, ծանրութենէն, մեծութենէն մենծ անտաճման անհատնում է . յուսացայ քուկին իմաստուն նախախնամութեանդ, որ բնաւ երբէք անխնամ անտես չընէր իր ձեռքին ստեղծուածը, ամէն նեղութեան մէջ կը մխիթարէ, ամէն փորձութեան մէջ կօզնէ, ամէն կարօտութեան ատեն կը հասնի . վերջապէս յուսացայ քուկին անսուտ հաւատարմութեանդ, որ կը խոստանայ ինծի խաչին հետ խաչը տանելու ուժը, տրամութենէն ետքը ուրախութիւն, մահէն ետքը յաւիտե-

նական կեանք , ինչպէս որ դիչերէն ետև  
արշալոյս , մրրիկէն ետքը օդոց պարզու  
թիւն , ծեծէն վերջը պսակ :

Ահա , Աստուած իմ , քեզի յուսալովս՝  
ասոնց ամենուն միանդամայն յուսացայ ,  
բայց յուսացայ հաստատ , ամուր , անվախ ,  
աներկիւղ յուսով մը , ինչպէս թէ արդէն  
ծեծը չլմնացած՝ յաղթութեան պսակը դըլ-  
խուս վրայ տանէի , կամ թէ ալէկոծուած  
ովկիանոսին անդունդը՝ նաւահանդիստը  
մտած վայելէի . աս կերպ ապահովութիւն  
մը ունիմ իմին յոյսիս վրայ , « Մի ամա-  
չեցից յաւիտեան » . վասն զի չէ թէ աս  
հեղու , դալ անդամ , ասօր կամ վազը ,  
մէկ երկու անգամին , քիչ մը ատեն , հա-  
պա միշտ ամէն իժիր , ամէն անգամին ,  
ինչուան վերջը յաւիտեան չամչնամ պի-  
տի , չպիտոր յաղթուիմ , պզտիկ իյնամ ,  
տակը երթամ , հապա ամէն ատեն վրայ  
ելլամ յաղթեմ , բարձրագլուխ պարզերես  
ելլամ , միշտ թշնամիներուս վրայ պար-  
ծենամ խորոխտամ , միշտ անոնց ուժը  
բռնութիւնը խորտակեմ արհամարհեմ ,  
միշտ ամէնքը կոր ՚ի զլուխ ամօթով չիք  
պիտոր հալածին փախչին առջևէս , միշտ  
յաղթութեան ձայնը , կտրճութեան ա-  
նունս ամէն տեղ պիտի լսուի տարածուի ,  
ելլայ , միշտ ամօթ անոնց երեսին , ամէն-  
քը զիս գովեն , ծափ դարնեն ու երկնա-



չափ բարձրացրենն . « Մի ամաչեցից յա-  
 լիտեան » : Ահա ասանկ յաջողի պիտի ին-  
 ծի ամէն անգամին . վասն զի քանի որ ես  
 « Ի քեզ տէր յուսացայ » , ես քեզի ասանկ  
 բոլորովին յոյսս դնելէն ետքը՝ ալ ո՛վ կըր-  
 նայ ինծի բան մը ընել . թէ որ իյնամ ,  
 յաղթուիմ , կորսուիմ նէ , կրնար ըսուիլ  
 որ դուն ըլլայիր պատճառը . բայց քանի  
 որ ես քեզի յուսալով ու դուն ալ ձեռքիդ  
 վրայ առած՝ աստուածային ամենակարո-  
 ղութենով ու խնայտութենովդ տէր կենա-  
 լով ինծի , պաշտպան հովանի ըլլալով վը-  
 րաս՝ կը կառավարես զիս , ալ կարելի է  
 մի ինծի իյնալ , յաղթուիլ , կորսուիլ . ա-  
 նոր համար « Մի ամաչեցից յալիտեան » .  
 հապա մանաւանդ որ ինչպէս ծառ մը լեռ-  
 ներուն մէջ , գետին քով ու հովերուն դէ-  
 մը՝ քանի երթամ աւելի խորունկը ար-  
 մատ կը ձգեմ ու կը բարձրանամ , կամ  
 թէ ինտոր որ ահազին ժայռ մը ծովուն  
 մէջ տեղը ալիքներուն բերանը՝ ամէն կող-  
 մէն ծեծուած ծածկուած , ամէն մրրիկէն  
 վերջը ալիքներուն մէջէն զլուխս վերցու-  
 ցած , բարձրզլուխ ուրախերես ամենուն  
 կերենամ : Ահա ասանկ երջանիկ ու ցան-  
 կալի վիճակ մըն է Աստուծոյ յոյսը դնո-  
 ղին վիճակը , որուն հանդիպեր եմ ես . որ  
 մէկ մը աս ապահովութիւնս խաղաղու-  
 թիւնս չկրնար խլել առնել իդմէ , որով ես



ինծի արամութեանս մէջ՝ ուրախութիւն ,  
 նեղութեանս մէջ՝ օգնութիւն , ցաւերուս  
 մէջ՝ մխիթարութիւն , ու քաւարանին մէ-  
 ջը՝ արքայութիւնս կը դանամ :

Ահա այսպէս Աստուծոյ յուսացող Ղա-  
 լիթ մը , աս եղանակ զարմանալի ուժ ու  
 փոփոխութիւն մը զգացած ներսը , ուրա-  
 խութենով զեղուած լեցուած , երգոց քնա-  
 րը սրտին կոթընցընելով , ու սիրաբ Աս-  
 տուծոյ կերզէ առ Աստուած իր սաղմոսին  
 աս յուսալից ու ուրախական կտորը . « Ի  
 քեզ տէր յուսացայ , մի ամաշնցից յաւի-  
 տեան » :

### ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Է .

« Մի մտաներ 'ի դասատուս ընդ ծառայի  
 քում , զի ոչ արդարանայ առաջի քո արևեակն  
 կենդանի » .

ՍՍՂԾ . ՃԽԲ . 2 :

Ահա մէկէն 'ի մէկ քուկին ահաւոր դա-  
 տաստանիդ մտածմունքը կառնէ զիս ,  
 կեանքիս ետքի օրը հասածի պէս՝ հոգիիս  
 ետեկէն միաքս ալ ան զարհուրելի ատեա-  
 նին ներկայութեանը կելլայ . աչքիս առ-  
 ջին կու դայ ան վայրկեանը , որ ատեն հո-

դիս մարմինէս դատուած՝ միս մինաւորիկ  
 մեռելներուն ան մութ դաւառը կը մըտ-  
 նայ, օտար անձանօթ երկրի մը սահմանը  
 կանչուած, իր արդար դատաւորին դիմա-  
 ցը դողդոջուն կը կենայ իր յախտենական  
 ճակատագիրը լսելու: Ահա կը տեսնամ  
 որ ողորմած Աստուծոյ մը երեսէն բոլո-  
 րովին ձգուեր է՝ որ ուրիշ անդամին բա-  
 րութենով անուշութենով լիք էր վրան,  
 ու արդար Աստուծոյ մը ձեռքը ընկեր մատ-  
 նուեր է, որ ինչուան ան ատեն իր երկան  
 համբերութենէն յոգնած, բարկութիւնը  
 դսպած՝ վրէժխնդրութեանը ժամանակն  
 եկած է, իր արդարութեանը անդառնալի  
 յախտենական վճռին կայծակը անոր զըլ-  
 խուն ընջեցընելու: Ահա դարհուրելի դա-  
 տաստանը սկսաւ, կեանքին մահուան  
 զրբերը բայուեցան, մեղքերս ամէն կող-  
 մանց մէջ տեղ յայտնեցան ու հողիս դող-  
 զըղալով երկու յախտենականութեան մէջ  
 տեղ երերեալ տատանեալ կը սպասէ իր  
 ետքի վճռին: Ահա որ դատաւորին դար-  
 հուրելի տեսքը մէկ գիացէ, որ բոլորովին  
 հայրական գութը աղիքը սրտէն վերցու-  
 ցեր է, ողորմիլ չիյտէ, կորուստայ կը գո-  
 ռայ, կայծակ կը թափէ երեսէն. վճռին  
 յախտենականութիւնը միւս կողմէն, որ  
 ալ մէյ մըն ալ ետ չդառնար ու վերջինը  
 բազդս կը սահմանէ, ուրիս տակը դը-

ժոխքը , որ վառած բորբոքած բերանը բա-  
ցեր՝ զիս կլլելու կը սպասէ . զլխուս վերեր  
արքայութիւնը , ուրկէց յախտենական կը  
դատուիմ ու ետքի հրաժարական բարես  
կու տամ : Ահա ասանկ մէկ զարհուրելի  
տեսարանի մը մէջ այսպիսի ահաւոր սպա-  
կերք մը աչքիս առջին քաշուած , հետուանց  
տեսնալուս , մտքովս յիշելուս միայն , սիր-  
տըս փուշ փուշ կըլլայ , լեզիս կը փրթի ,  
զլխուս մաղերը ցից ցից կը տնկուին ու ես  
ինքը զինքս կորսընցուցածի պէս մը ինչ  
ընելիքս , ուր փախչելիքս չեմ գիտեր . հա-  
պա թէ ան ատենը հասած հոն ան տեղը  
դանուէի , ինչ պիտոր ըլլար իմին բանս ,  
ընտոր գիմանայի պիտի , ու որպիսի՞ տը-  
ղեօք տրամադրութիւններու մէջ պիտոր  
դանուէի :

Չէ , ասիկայ ըլլալու բան չէ , պէտք  
կըլլայ ինծի հիմակուց՝ քանի որ ժամա-  
նակը ձեռքս է՝ զլխուս ճարը տեսնեմ , ա-  
սոր առջեր առնելու ճամբայ մը փնտտեմ .  
դեռ դատաստանը չելած , ատենը չսկը-  
սած , դահճին ձեռքը չմատնուած , կէս  
ճամբան դատաւորիս երեսը աղաչեմ ,  
հաշտ ընեմ , անուշցրնեմ . « Մի մտաներ  
ի դատաստան ընդ ծառայի քուս » . ինչ-  
պէս թէ ըսել կուզեմ . Ո՛վ Աստուած իմ՝  
որ ինչպէս որ իմին ստեղծողս , անանկ  
սլ մէկ հատիկ ծայրագոյն դատաւորս ես ,

արդար ու արդարութիւն սիրող, բայց կա-  
 դաչեմ, չըլլայ որ աս դատաւորութեան  
 սպաշտօնդ վրաս դործածես, զիս դատի  
 կանչես առջևդ. վասն զի ո՞վ եմ ես, ու  
 ո՞վ դուն՝ որ ինծի հետ դատի մանաս, ես՝  
 որ քուկին յետին անարդ անպիտան ծա-  
 ոայ մըն եմ, բեզի ծառայ ըսուելու ևս  
 անարժան. ես որ մեծ մարդու մը զիմա-  
 ցը չեմ կրնար կենալ, բարկացած մար-  
 դու մը երեսը նայելու չեմ համարձա-  
 կիր, հապա ընտո՞ր կրնամ զիմացդ դա-  
 տաստանի ելլալ, խօսք տալ խօսք առնել,  
 ան կրակ կտրած երեսդ տեսնալ, խիտ  
 յանդիմանութիւններուդ, ահաոր ձայ-  
 նիդ զիմանալ, երբ սուր աչքերդ վրաս  
 դարձուցած, սրտիս ներքին ծածուկ խոր-  
 շերը քննելու զննելու կելլաս, ու դուրս  
 կը հանես ան դադտուկ մտածմունքներս,  
 ծուռ զիամունքներս, խարէութիւններս,  
 կեղծաւորութիւններս. երբ մեղքերուս ան  
 զլխէ զլուխ լեցուած տետրակը ձեռքդ ա-  
 ուած, մէյմէկ կը քննես ու արդարութեանդ  
 կշիռքէն կանցընես ու երեսս կը դարնկս  
 ան ամէն անիրաւութիւններս, ամպարըշ-  
 տութիւններս, պատուիրանազանցութիւն-  
 ներս, սրբապղծութիւններս՝ վիճակիս,  
 կոչումիս, պարտաւորութիւններուս դէմ,  
 ամէն հասակին, ամէն ժամանակին, խոր-  
 հըրդոյ, բանի, գործոյ բիւրաւոր մեղքերս,



երբ ան ինձի յանձնած սուրբ աւետարանիդ  
 ասանդներուն, չնորհքներուդ քանքարնե-  
 րուն, ու եկեղեցւոյ սուրբ խորհուրդներուդ  
 դանձերուն, հաշիւ համարը մէկմէկ կուզես  
 կը պահանջես, որոնք ես անանկ չարաչար  
 գործածելով, դէշին բանեցրնելով, անհո-  
 դութեամբ թուլութեամբ ու ալ խէլ մը ան-  
 դգամութիւններուն անառակութիւննե-  
 րուն ձեռք գարնելով վատնեցի մսխեցի,  
 հողին տակը թաղեցի, փճացուցի, կոխեցի  
 անցայ: Հիմա ես ասոնց ինչպէս կրնամ  
 պատասխան տալ, ինչ երեսով զիս ար-  
 դարացրնել. իրաւցրնէ մեկէն արժանի  
 չեմ ըլլար մի ան չար անդդամ ծառային  
 վճռին, երբոր երեսէս վեր կը պոռաս՝ որ  
 ձեռքս ոտքս կապած մութ բանտը նե-  
 տեն. ուր տեղ անօգուտ լալ միայն կը մը-  
 նայ ինձի ու յուսահատած ակռաներս կըր-  
 ճըտել: Ահա աս արդար վճռին ձայնը ար-  
 դէն հիմակուրնէ դես քու ահաւոր ատեա-  
 նիդ զիմացը չելած, խղճմտանքիս վկայու-  
 թենէն լսելով ու ներքին խայթմունքնե-  
 րէս ստիպուած՝ ինքիր բերնով ասոր ար-  
 ժանի ըլլալս կը խոստովանիմ. անոր հա-  
 մար երեսս գետինը, դատաւորին ոտքը  
 ընկած, դատաստանէդ ազատելու ճամ-  
 բայ կը փնտռեմ. «Մի մտաներ՝ ի դատաս-  
 տան ընդ ծառայի քում»: Ա՛վ տէր իմ,  
 ինձի հետ դատ մի՛ քչեր, զանց ըրէ, կար-



ճառօտ անցիր, համառօտ բրէ. կամ թէ որ դատես ալ նէ, արդարութիւնդ մէկ գիթոդ ու ողորմութեամբդ դատէ:

Թէ որ ասանկ չես ըներ նէ, վայ է ինձի ու բիւր վայ. արդէն ես իսկ դիս դատապարտուած կորսուած կը համբեմ, բայց միթէ ինձի համար միայն ասանկ կընեմ որ ծառաներուդ յետինն եմ, ահա և ոչ ուրիշ մէկ մը՝ որ ինձի պէս մարդ է, մարմին ունի կենդանի, բնութեան կարեաց ներքև է, կրնայ արդար ելլալ քու դատաստանէդ. «Ձի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի»: Դուն ո՞վ ես, Աստուած իմ, և ո՞վ են մարդիկ քուկին քովդ. դուն ստեղծող մը, անոնք ստեղծուած մը ձեռքիդ. դուն անհուն կարողութիւն բարձրութիւն մը, անոնք տկարութիւն ցածութիւն մը առջևդ. դուն արդարութեան, անոնք խեղճութեան անդունդ մը. դուն սրբութեան տէր, անոնք մեղաց: Դուն կըսեմ՝ որուն առջին երկինք մը կատարեալ սուրբ շրջար, մաքուր աչքդ արեւին մէջը արատ ու հրեշտակներուն վրայ պակսութիւն կը գանան, ալ մարդուն խօսքը մի կըլլայ դիմացդ, որ հողէ կուէ շագամ մարմնոյ մը մէջ բիւր տկարութիւններու խեղճութիւններու, մեղքերու ներքև կը տքտըքայ, որ ապականեալ բնութեան մը նպատակ ըլլալով՝ մեղք գործելը բնական

նդեր է իրեն , զոր քուկին անհուն ողորմութիւնդ է միայն՝ որ կը բռնէ . հապա թէ որ արդարութիւնդ ձեռք առնես , ո՞վ կըրնայ սուրբ ելլալ սրբութեանդ կշիռքէն . « Ձի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի » . ու թէ որ արդարներուն , սուրբ առաքինի կատարեալ հողիներուն համար ասիկայ ասանկ ճշմարիտ է նէ , հապա սրչափ աւելի ինծի պէս մեղաւոր պարտաւոր անպիտան ծառայի մը կտորին . թէ որ ահագին սիւները քու երեսիդ տեսքէն հիմանց կը սասանին կը դողան , ալ տկար չնչին եղեղին խօսքը կըլլայ մի . անոր համար արդարութեամբդ մի դատեր դիս , հապա ողորմութեամբդ ներէ քաւէ , թող ան ամէն պարտքերս՝ որ ունիմ քեզի ու չեմ կրնար հատուցանել :

Ահա աս ամէն ճշմարտութիւններուն իր մտքին մէջ աղէկէն համոզուած դաւիթը , պահ մը անցած զացած մեղքերուն մտածմունքովը խռոված , պահ մը Աստուծոյ արդար դատաստանին տեսքէն զարհուրած սարսրւիած , հաղիւ թէ իր շրթունքները քովէ քով բերելով ու դողը դած մատերը շարժելով սաղմոսարանին վրայ , կերզէ Աստուծոյ իր սաղմոսին աս տրտմալի ողբական կտորը . « Մի մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում , զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի » :

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ը .

« Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քոյ՛ն , ըստ բազում գրութեան քոյ՛ն քաշեալ գաւօրեկոչքիւնս իմ » . . .

ՍԵՂՄ . Ծ . 1 :

Իմին երկան ատենուան տրտում տխուր մտածմունքներէս ետքը՝ որոնցմով ինչուան հիմա մրրկած խռոված ծովերու մէջ կը տարուբերէի , մեղքերով բեռնաւորուած հոգիս ապահով նաւահանգիստ մը հանել խալըսել , երբ ասանկ բիւրաւոր ժայռերու մէջ ասդիս անդին զարնուելով , մտքիս յուսահատեցուցիչ խորհուրդներէն , չըփախչելու նաւակոծութեան մը ես զիս բռնուած տեսայ . նայիս ան սրտմաշուր ծփանքիս մէջ նաւահանգիստ մը առջիս բացուեցաւ , որուն չիյտեմ ինչպէս մէկ աներևոյթ ձեռքով մը հրուելով , մտայ հանգչեցայ խէլ մը ատենէ՛ ՚ի վեր խռոված սրտիս ալիքներէն , որ մեղքերուս անդունդներուն վրայ կը տարուբերէին զիս . վասն զի մեծ Աստուծոյ մը մեծ ողորմութիւնը ու բազում զթութիւնը յիշեցի միտքս բերի , որն որ մեղաւոր կեանքի մը յուսահատեալ վարքովը մոռցեր , մտքէս

հաներ էի, ինչպէս թէ ալ չկայ ինծի համար ճար ճարակ մը գծոխքէն ես զիս խալըսելու՝ որուն ինչուան բերանը քաշքշուեր էի, ու պահեկէ մը գէշ մահով ու անդուծ տապարի վճռով հոն կտրուեր՝ նետուէի. բայց վերջասկէս ասանկ մէկ վերջին ու յաւիտենական կորուստի մը յիշմունքէն քիչ քիչ արթննալով, ես ինծի գալով, ճանչցայ անգամ մը ան ողորմած ձեռքը՝ որ ինծի աղատիչ կըլլար: Ուստի ասկից ետքը ալ իմին ամէն մտածմունքս ան մեծ Աստուծոյ ողորմութեանը իյնալ միայն ըլլայ, անոր դառնալ զիմել, ան ձեռքին պըլլուիլ, անոր աղաչել, անիկայ կանչել, անկէ ողորմութիւն պաղատիլ, անոր զթութեանը սպասել. ու ահա ասիկայ կու դամ ընելու հիմա՝ մէկ կորած մոխիր ցանած զըլխով մը, ընկած խոնարհած գէմքով, երեսի վրայ ընկած փռուած, գետինը մածած, հողին փոշիին հետ հաւասարած, աչքիս արցունքովը, բազկատարած ձեռքով, կերակուրս մոխիր ըրած, ըմպելիքս արցունք ու ալ ամէն կերպ ներսի դրսի ապաշխարող կերպերովը, զղջացած վիրաւորած սրտէս բղխած աս զղձումի ձևովս, սրդողած Աստուծոյս սիրտը իջեցընելու, ճրմլելու անուշցընելու բաւական. « Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում զթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ »:



Ահա ով տէր իմ և Աստուած իմ, աս  
օրուան օրս մեղաւոր սրտիս պատկերքը  
քու առջիդ յայտնելով, քուկին մեծ ողոր-  
մութեանդ ալ տեսարանը բանալու կու  
զամ, իրաւցընէ ինչպէս որ պէտք է նէ  
արժանի քու ան մեծ ողորմութեանդ՝ որ  
աստուածային մեծութեանդ հետ չափուած  
է, անբաժանելի անոր հետ ու ա՛ որ պէս  
ամենակարող անչափ ու անհատնում. «Ո-  
ղորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողոր-  
մութեան քում». ողորմէ, այսինքն՝ խը-  
նայէ, ներէ, երկայնամիտ ու անյիշաչար  
եղիր. թէպէտ իրաւունք ունիս սրգողե-  
լու, յանդիմանելու, պատժելու պիս, բայց  
իմին արժանաւորութեանս հետ մի չափեր,  
բողորովին հակառակ ճամբայ մը բռնէ,  
ու ասոնց ամէնը ըրէ քուկին աստուա-  
ծային ողորմութեանդ չափ՝ որ մարդուս  
մտքէն շատ վեր մեծ է, չափի սահմանի  
չդար :

«Ըստ բազում դժութեան քում քաւեա  
զանօրէնութիւնս իմ». այսինքն քաւէ,  
ջնջէ, անյայտ ըրէ, վերցուր մէջ տեղաց,  
չեղածի պէս ըրէ, թող տալով պարտքերս,  
զանց ընելով պատիժները. ես թէ և շատ  
պարտաւորութիւններ ունենամ հատու-  
ցանելու քեզի, դուն անոնց ներելէն ետ-  
քը՝ վրայ ալ տուր. իմին կծոտութեանս  
դէմ, դուն աւելի առատաձեռն եղիր տուր-



քիդ մէջ. ու ասոնց ամէնը ըրէ քուկին  
 աստուածային գթութեանդ չափ՝ որ ան-  
 չափ ու անսահման է. « Ողորմեա ինձ . . .  
 քաւեա դանօրէնութիւնս իմ » :

Առաջ ողորմէ ինձի, որ ետքն ալ անօ-  
 րէնութիւններս քաւես. ինչուան չողոր-  
 միս, ողորմութիւնդ վրաս չչարժի, չես  
 քաւեր, գթութիւնդ ալ չչարժիր. բայց եր-  
 բոր մեծ ողորմութեամբ սկըսիս ողորմիլ,  
 մեծ գթութեամբ ալ քաւելու կըսկըսիս.  
 երբ անհուն կողորմիս, անհուն ալ մեղքե-  
 ըր կը քաւես: Անոր համար դուն քուկին  
 ողորմութիւնդ գթութիւնդ ձեռքդ առ քա-  
 ւելու անօրէնութիւններս, ու ես ալ մեղ-  
 քերուս տեարակը ձեռքս առնեմ, քու դի-  
 մացդ կարգալու. ես յոգնիմ անօրէնու-  
 թիւններս գրուցելէն, ու դուն մի յոգնիր  
 ողորմութիւն գթութիւն ընելէն ինձի: Ա-  
 հա, ով տէր իմ, ինձի պէս մէկ ցած յե-  
 տին ստեղծուած մը, ափ մը հող ու փոշի,  
 որ իր կեանքը քեզմէ միայն գիտէ, ինչ-  
 պէս որ մահն ալ, սիրտ ըրաւ յանդդնե-  
 ցաւ քեզի դէմ ելլալ, զայրացընել, քա-  
 մահել, վշտացընել ու ահաւոր վրէժխընդ-  
 րութիւնդ վրան գրգռել, չէ թէ մէկ, հա-  
 պա հաղարաւոր բիրաւոր մեղքերով՝ ո-  
 բուն մէկ հատն ալ հերիք է քու ձեռքիդ  
 ամենէն գեղեցիկ գործքը փճացընելու:

Ար խոստովանիմ, ով տէր իմ, որ քեզի

պէս ամենաբարի ամենասիրելի ստեղծող մը անարգեցի ոտքի տակ առի մէկ փունձ ամօթալի բոպէական հեշտութեան, պրդտիկ չնչին շահի մը համար, երբոր պարտաւոր էի սիրելու պատուելու գրեզ ամէն ուժով ջանքով ու ամէն կերպ կարելի միջոցներով. ինձի ըրած անթիւ երախտիքներուդ փոխարէն՝ ետքի աստիճան ապերախտութենով աներեսութենով շարժեցայ, ամէն օր ամէն առեմ աչքիդ դիմացը ամէն տեսակ անօրէնութիւններուն մէջը թիւը չափը անցուցի, լցաւ անօրէնութիւններու տետրակը. ասոնց ամէնը մէկիկ մէկիկ կը խոստովանիմ, կը յիշեմ, աչքիս առջին շարած կը տեսնամ, չեմ դլանար, չեմ ժխտեր բնաւ. «Գանօրէնութիւնս իմ ես ինձէն դիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ». բայց դուն «Ողորմեա ինձ Աստուած... քաւեա դանօրէնութիւնս իմ». աս է, իմին արժանաւորութեանս հետ մի չափեր ինձի. թէպէտ իրաւունք ունիս խստութեամբ վարուելու ինձի հետ, բայց արդարութիւնդ զանց ընելով՝ սովորական ողորմութիւնդ ձեռքդ առ. ան առեմ ցուցուր աւելի քուկին բարութիւնդ անուշութիւնդ, երբ ես ամէն կերպ պատիժներուն վրէժխնդրութիւններուն, ատելութիւններուն նպատակ ըրեր եմ զիս. ան առեմ ան.

ցուր երախտիքներուդ բարութիւններուդ  
 չափը, երբոր ես անզգամութիւններուս,  
 չարութիւններուս չափը անցուցեր լե-  
 ցուցեր եմ. ան ատեն որդիութեան մատ-  
 նին ձեռքս դիր, երբ ես ծառայի վարձկա-  
 նի անունին եւ արժանի չեմ տեսնար զիս.  
 ան ատեն տունդ մտցուր, հարկինքդ հրա-  
 ւիրէ, սեղանդ ընդունէ, հարսնիքի հա-  
 զուստ հազցուր, երբ ես կապած ձեռքով  
 ոտքով մութ բանառ նետուելու վճռին կը  
 սպասեմ. մէկ խօսքով ան ատեն խոստա-  
 ցիր ինձի արքայութիւնը, երբոր ես դը-  
 ժոխքին արժանի կը կանչեմ զիս. ասի-  
 կայ է ողորմել, քաւել ու մեծ Աստուծոյ  
 մը արժանի վայել ողորմել ու քաւել, ին-  
 ծի պէս մեծ մեղաւորի մը մեծ ողորմու-  
 թեանդ ու զթութեանդ չափ ու համաձայն  
 ողորմութիւն, զթութիւն ընել: Ահա աս  
 կերպ խելքէ մտքէ վեր ողորմութիւն ցու-  
 ցուր բանեցուր վրաս, որովհետեւ աս եղա-  
 նակ չափազանց դարմանալի ողորմու-  
 թեանդ նիւթ եղած եմ: Ասիկայ իրաւքը  
 նէ ուրիշ մը չկրնար ընել, հապա դուն մի-  
 նակ, քու աստուածային ողորմութիւնդ  
 միայն բաւական կըլլայ աս մեծ գործքը  
 զլուխ հանել. ինչու որ դուն միայն ես ով  
 Աստուած իմ՝ որ կրնաս մեղքերը թողուլ,  
 որ քուկին մեծութիւնդ պզտիկներուն նե-  
 րելուն, անոնց քեզի դէմ ըրածներուն ան-

յիշաչար ըլլալուն վրայ դրած ես . որ անանկ մեծ Աստուած մը ըլլալով քանի մը խօսքով քիչ մը արցունքով, ողորմեա մը ըսելովը՝ կը հաշտուիս մեղաւորին հետ, քիչ մը առաջ մահուչափ թշնամիդ ըլլալով անկից ետքը սիրելի որդի կընես քեզ . թէ պէտ արդարութիւնդ ինչուան ետքի դանկը կը պահանջէ մեղաւորէն, բայց ողորմութիւնդ ճամբայ կը գտնայ ամէնը մէկանց թող տալու :

Ատոր համար որչափ արդարութիւնդ վախի մէջ ձգելով ետ ետ կընէ զիս՝ քեզի հետ հաշտուելու, մէյմըն ալ երեսիդ լոյսը տեսնալու յոյսը գլանալով, նոյնչափ ողորմութիւնդ կը հրաւիրէ, մօտ կը կանչէ, ներումն կը խոստանայ, համարձակութիւն կու տայ ինծի : Ահա ան ողորմութեանդ յուսացուցիչ ձայներդ էին՝ որ յուսահատութեան սե մութ ամպերը սրտէս տարին քչեցին ու մէկ ցանկալի դուարթարար առաւօտի մը հանեցին . քուկին սովորական ողորմութեանդ հրաւերն էր, որ ինտոր որ շատ մեղաւորներուն, անանկ ալ ինծի սիրտ տուաւ, յորդորեց, վերջապէս քեզի գալ իյնալ, մենծ վստահութեամբ լիք յուսով մը ըսել կրկնել ան աստուածային շունչովդ տուն տուած, ինծի պէս մեղաւոր որդիքներուդ հայրական ողորմութեան գանձէդ ժառանգ ըրած, կը



տակ հանած ան անգին կտորը յիշատակը՝ որ աստուածորդույդ արունովը ներկած խաչին վրայ դրոշմած կը գրուին . « Ողորմեա , քաւեա » . որն որ քանի անգամ որ ասանկ մէկ որդիական վստահասիրտ համարձակութեամբ կըսեմ կը կրկնեմ աստուածութեանդ աթոռին զիմացը , ինչպէս թէ մէկէն մերկացընելով քենէ արդարութեան զէնքերը՝ որոնցմով զինուած վրէժխնդիր ըլլալու կու զայիր վրաս , կը ստիպեմ հրամաններդ փոխելու , վճիռներդ ետ առնել , զսպելու կայծակներդ :

Ահա ասանկ ամենէն աւելի զօրաւոր է քու առջևդ ողորմութեան խօսքը՝ որ բաւական կըլլայ մորմոքելու ճմլելու աղեկըտուր սիրտդ . որովհետեւ դուն , ով Աստուած իմ , ամէն պատարագներէն վեր կը հաճիս , կը դմայլիս , կը հոտոտիս խոնարհ ու զղջացեալ սրտին պատարագին . « Զհողի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ » : Ուստի ահա ես ալ աշխարհիս մեղքովը բեռնաւորուած հողի մը՝ որ ինչուան ասօր մեղանչելը ինծի սովորութիւն մը ըրեր եմ , հիմա քու աստուածային ողորմութեանդ շնորհքին սիրտբանուկ վէրքը սրտիս ուտելով , ցաւիս չղիմանալով , վիրաւորած թաթղած սրտով մը , խոնարհած , ընկած փռուած երեսի վրայ արտաստագին մը , ամէն օր ամէն զիշեր , առտու ի-



րիկուն կը կանչեմ կը կրկնեմ. « Ողորմեա  
ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան  
քում, ըստ բազում գթութեան քում քա  
ւեա դանօրէնութիւնս իմ » . որ քանի որ  
աշխարհիս վրան եմ, մեծ յոյս մըն է քեզի  
հետ հաշտուելու, երկուք ու մէկ սովորա  
կան մեղքերով վերանկումներովս ըրած  
կորուստներս նորէն ձեռք բերելու, ա  
նուշցընելու, կակուղցընելու բարկացեալ  
հօրդ սիրտը ու մէկ ամէն օրուան հանա  
պազորդական, քաշարար, հաշտարար,  
ընդունողական, ու մաղթողական զոհ մը  
ընելու աստուածութեանդ աթոռին :

Ահա աս մտքով Ղաւիթը՝ աչքը մեղքե  
րուն վրայ, սիրտը զգժման արցունքով  
թաթխած, միտքը աստուածային ողոր  
մութեանը մխիթարական յոյսին մէջ, ու  
րախ ու տրտում, լեզի ու քաղցր ներդաշ  
նակութեամբ մը յարմարցուցած քնարը,  
կերզէ Աստուծոյ իր սաղմոսարանին աս  
յուսակից ու հողեզուարճ տունը. « Ողոր  
մեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմու  
թեան քում, ըստ բազում գթութեան քում  
քաւեա դանօրէնութիւնս իմ » :

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Թ .

«Քո եւ ես, և կեցո զիս» .

ՍԱՂՄ . ԾԺԸ . 94 :

Ահա ինչուան հիմա մէկ շատ բռնաւոր  
 ստարական անգութ տէրերուն ձեռքը ըն-  
 կած մատնուած , ինչպէս մարմինը սա-  
 տանան աշխարհքն է , անոնց հազար ու  
 մէկ բռնութիւններուն տակը տարիներով  
 ծառայելով , ան ծանր ու անտանելի շրջ-  
 թաներուն ներքե կապած կաշկանդած ճրմ-  
 լելէն փտտելէն ետքը , վերջապէս Աստու-  
 ծոյս անհուն ողորմութեանը այցելու-  
 թեամբ անդամ մը ան հին շղթաները կոտ-  
 թելով փրցընելով ինծմէ , իմին առաջուան  
 երջանիկ բաղձալի ու ճշմարիտ ազատու-  
 թիւնս ձեռք ձգեցի . որովհետե իմին շատ  
 ատենէ 'ի վեր կորսնցուցած օրինաւոր  
 քաղցր գթած տէրս , իշխանս , թագա-  
 ւորս , հայրս , Աստուածս դոայ՝ որուն  
 ծառան , գերին , հպատակը , որդին ու ըս-  
 տեղծուածն էի և եմ : Ահա այսօր նորէն  
 անոր կու գամ կիյնամ ու իմին առաջուան  
 ան սուրբ ու նուիրական դաշինքներս իմ  
 ու անոր մէջ կը դնեմ կը հաստատեմ ու

կը նորոգեմ ասանկ հաստատուն երգու-  
մի մը ձևով . « Քո եմ ես, և կեցո զիս » :  
ինչպէս թէ ըսել կուզեմ . ահա տէր իմ՝  
ես սա օրուան օրս ճանչնալով իմանալով  
քուկին ու քեզի վերաբերեալ ըլլալս , ու  
րիչ ամէն կապերէն ազատած խալըսած  
զիս , մարմնոյս մէկ շատ մոլութիւններուն  
կիրքերուն ցանկութիւններուն շղթանե-  
րէն փրցուած , աշխրբին ամէն ունայ-  
նութիւններուն հեշտութիւններուն զուար-  
ճութիւններուն սէրերէն բաղձանքներէն  
ես կեցած , հրաժարուած , ուրիչ ամէն  
բարեկամներուն սիրելիներուն հետ դա-  
շինքս աւրած , ամէն ստեղծական բանե-  
րէն երես դարձուցած , հանած նետած  
ինձմէ , քեզի կը դառնամ կիյնամ , քուկդ  
կըլլամ , քեզի ինձի տէր կը դառանիմ ու  
զիս քու ծառայ կը խոստովանիմ . « Քո  
եմ ես » , տէր ես քուկինդ եմ , իմին ա-  
մէն ունեցածս քուկինդ է , ես ալ քուկդ  
եմ . դուն տէրս , ես քու ծառայ . դուն իշ-  
խանս , ես քու գերիդ . դուն թագաւորս ,  
ես քու հպատակդ : Արդեօք կըլլայ ինձի  
անանկ մեծ սրատիւ մը , երջանկութիւն մը ,  
որախօսութիւն մը , ինչպէս որ քեզի պէս  
մեծ , սուրբ , արդար տիրոջ մը ծառայ ըլ-  
լալ . կամ թէ քեզի պէս հարուստ , առա-  
տաձեռն , ողորմած իշխանի մը գերի ըլլա-  
լէն աւելի կայ ինձի անանկ երջանիկ բաղ-

ճալի ազատութիւն մը, ասանկ անուշ շրջ-  
 թայ մը պսակէն եւել է իմին քովս . կամ  
 թէ կրնայ ըլլալ անանկ օրինաւոր փառա-  
 տոր բան մը, ինտոր որ քեզի պէս իմաս-  
 տուն, մեծագործ, ամենակարող, երկնի  
 ու երկրի թագաւորին հպատակ ըլլալ . ի-  
 րաւցընէ անանկ սուրբ աթոռի մը պա-  
 տուանդանը համբուրել՝ դահի վրայ նըս-  
 տելէն աւելի համարուած է առջիս : « Գո  
 եմ ես » . իրաւ պատիկ քիչ խօսք մը կը-  
 նեմ քեզի, բայց անոր տակը մէկ շատ  
 պարտաւորութիւններ ունենալով քեզի  
 ընելու, շատ խոստմունքներ ալ տուած  
 կըլլամ քեզի : Տէր, ես քուկդ եմ, դուն ի-  
 մին աէրս ես, իշխանութիւն ունիս ինձի  
 հրամայելու, ու ինձի պէտք է որ հնա-  
 դանդիմ քեզի, ամէն հրամանքդ յար-  
 զեմ պատուեմ ու գործով կատարեմ :  
 Գուն ստեղծելով զիս, փրկելով, նորոգե-  
 լով ու արեանդ զինովը ծախու առած ըլ-  
 լալովդ, բացարձակ տէրութիւն ունիս վը-  
 րաս, ուղածիդ պէս գործածելու, կեան-  
 քիս ու մահիս վրայ հրաման տալու, ու ին-  
 ձի սպարաք մը եղած է ամէն բանին զլուխ  
 ծռել քեզի, իմին փիճակս բաղդս քու ձեռ-  
 քըդ գնել, քեզի համար աշխատիլ փառ-  
 տակիլ, ապրիլ ու մեռնիլ քեզի համար :  
 Գուն երկնի ու երկրի ահաւոր ինքնազլուխ  
 թագաւոր մը ըլլալով, իրաւունք ունիս՝



պատիւ երկրպագութիւն տուրք պահանջելու իզմէ, ու ինծի կիցնայ որ զքեզ իմ մեծս ճանչնամ, յարգեմ պատուեմ, խոնարհ երկիւղած երկրպագութիւններէս մատուցանեմ քուկին վեհափառ աթոռիդ, ու իմ ինչքերէս ստացուածներէս ընծաներ տուրքեր ընեմ քեզի: «Քո եմ ես» . Տէր, ես քուկինդ եմ, ինչու որ դուն իմին հայրս ես, սուրբ աւագանին կնքովը որդեգիր ըրիր զիս քեզի, անոր համար ես քու որդիդ եմ, պէտք է որ սիրեմ պատուեմ զքեզ, որդիական հաւատարմութիւն, երկիւղածութիւն հնազանդութիւն ունենամ քու վրայ: Տէր քուկինդ եմ, դուն իմին մէկ հատիկ սիրելի փեսաս ես, որ ՚ի դէմս հարսին քո սուրբ եկեղեցւոյ պսակուեցար ինծի հետ, անոր համար հրապարակաւ ու օրինաւորապէս քուկի եմ, պէտք է որ մէկ տևական, հաստատուն, անկեղծ ու կատարեալ սիրով մը սիրեմ զքեզ . իմին սիրտս քեզի ու ուրիշին մէջ չկիսեմ, ինչուան ՚ի մահ հաւատարիմ մընամ, ես այլ իշխանութիւն չունիմ իմ անձիս վրայ՝ իմին զգայութիւններս ուզածիս պէս զործածելու . հապա իմ կամքս, ազատութիւնս քեզի տուած եմ, ասով միայն կրնամ զոհ ընել զքեզ՝ որ փափուկ ու նախանձաւոր փեսայ մըն ես: «Քո եմ ես» . Տէր, ես քեզի հանդիսաւոր



կերպով նուիրեալ անձ մըն եմ, անվայել է ինձի անասնական ցածութիւններուն խոնարհիլ, հողին տղմին մէջ շաղիլ, պէտք է որ մեծ համարմունք մը ունենամ վրաս, ճանչնամ քեզի վերաբերեալ ըլլալս : Տէր, ես քուկինդ եմ, ես քու սեղանիդ վրայ գոհացողական ու հանապազորդական գոհ մըն եմ, պէտք է որ սպանդին ամէն վիճակէն համբերութենով անցնիմ, ողջակիզին ամէն պարտաւորութիւնը յօժարութենով ուրախութենով յանձն առնեմ, իմին փառքս, կեանքս, երջանկութիւնս քեզի համար այրելուն, ոչինչ ըլլալուն վրայ դնեմ. ան ատեն իրաւցընէ ճշմարտապէս քուկդ եմ և կրնամ համարձակ ու անկեղծ մը ըսել քեզի. «Քո եմ ես, և կեցո զիս» : Ինչպէս թէ ըսէի, ահա ես ամէն ունեցածէս անցայ, ամէնը թող տուի, ամենէն երես դարձուցի, ամենուն մնաք բարով ըսի, քեզի եկայ ընկայ, ինձ մէ ելայ, քեզի եղայ, ամէն հոգս, մտմըտուքս, գործքս քու ձեռքդ դրի, անանկ որ ասկից ետքը քենէ ուրիշ տէր մը, կրունակ կայնող մը, պաշտպան մը չունիմ, որ հողայ նայի ինձի, իմին ամէն կառավարութիւնս քեզի յանձնուած է, ինչ պիտի ընես նէ, դուն պիտի ընես, աչքս քեզի կը դիտէ, միտքս քեզի կը մտածէ ու սիրտըս քեզ կը սպասէ. «Քո եմ ես, և կեցո զիս» :

Ինչպէս որ քուկդ եղայ, անանկ ալ քե-  
զի կիյնայ որ ինծի հոգաս, նայիս, մըտ-  
մտաս, պաշտպան, վերակացու, պա-  
հապան ըլլաս վրաս. զիչեր ցորեկ մտա-  
դրութեամբ նախախնամութեամբ հսկես  
վրաս, որ չարերէն բան մը չպատահի ին-  
ծի, թշնամի մը մէկէն վրաս զալով անի-  
բաւ տեղը ինծի հալածէ, վնասէ, յախշտա-  
կէ, թալլէ, մահացու վիրաւորէ: « Աեցո  
զիս » . այսինքն կեցուր, կայնեցուր, պա-  
հէ պահպանէ, փրկէ ազատէ զիս, ինչ-  
պէս որդեգորով հայր մը թեկիզ տակէն մի  
զատեր, հոգ տար ինծի, ինտոր որ բարի  
հովիւ մը առջնէս գնա ճամբայ ցուցուր .  
ինչպէս զօրապետ մը թշնամիիս դէմ գնա,  
պաշտպան եղիր, վասն զի դուն թէ որ զիս  
թողուս նէ՛ կը կորսուիմ, չես բռներ նէ՛  
կիյնամ, թէ որ չես օգներ նէ՛ կը վնա-  
սուիմ, անոր համար դուն ամէն իժիր հըս-  
կէ խնամէ կառավարէ զիս, փորձութեան  
ատեն՝ շնորհքներովդ դէմ կենալու ուժ  
տալով, մեղքին մէջ իյնալուս՝ ապաշխա-  
րութեան հրախրելով, նեղութեանս մէջ՝  
խաչը տանելու ուժ տալով, տրտմութեան  
օրերս երկնային այցելութիւններով մխի-  
թարելով զիս . ասանկով իմին ամէն տը-  
կարութիւններուս վրայ քուկին աստուա-  
ծային կարողութիւնդ, հովանաւորու-  
թիւնդ, տէրութիւնդ ցուցուր բանեցուր :

« Կեցո զիս » . Հոգևորական մահէն խալը-  
սէ, յախտենական կեանքին առաջնորդէ .  
դժոխքէն ազատելով արքայութեան ար-  
ժանի ըրէ . որ ինչպէս հիմակ քուկինդ  
եմ, անանկ ալ միշտ քեզմով ապրելով,  
յախտեանս կարենամ քուկդ ըլլալ :

Ահա ասանկ կարճառօտ ըսուածքի մը  
մէջ, երկան բարակ խօսակցութիւններ  
կրնէ Դաւիթը, երբ աշխարհէս դուրս ե-  
լած, բարեկամներէն երեսը զարծուցած,  
ինքը ու Աստուած մինակ իր ներքին ա-  
ռանձնութեան մէջ, իր սաղմոսարան քը-  
նարը սրտին դրած, ու սիրտը Աստուծոյ  
տուած, լեզուն ու սիրտը, բերանն ու մա-  
տերը միատեղ կերպէն Աստուծոյ սաղմո-  
սին ան իմաստալից ու Հոգեզուարճ տու-  
նը . « Քո եմ ես, և կեցո զիս » :

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ժ .

« Ո՛րպէս սիրելի եւ յարկքքոտէր զօրոշրեանց ,  
 ցանկայ եւ փափագի սեճն իմ ՚ի գաշիրս քո » .

ՍԵՂԹ. 29 . 1 :

Ստեղծական անցաւոր բնութեան ամէն  
 մէկ գեղեցիկ սքանչելի տեսարանները՝ որ  
 հոս աշխարհիս վրայ կը գտնուին , քննե-  
 ցի զննեցի , տեսայ ու վայելեցի : Քննեցի  
 երկնագունտին վրայ կարմրած արշալոյ-  
 սին ետեէն ամպերուն մէջէն ծաթած ա-  
 րեր՝ որ տաքութեան ու լոյսի չհատնելու  
 պարիւրներ կը թափէ . ան փալփլուն աս-  
 տղաները՝ որ հանդարտ ու սլարգ գիշե-  
 րուան մթուն մէջ զլխուս վերեր կը սը-  
 տըտին , ու դարմանալի շարքով ու ինչպէս  
 թէ պատերազմի կարգով ետեէ ետե տե-  
 դաւորուած նախախնամութեան դրօշա-  
 կին տակը , մէյմէկ սղտիկ արեւներու պէս  
 լոյս տալով կը փալփլին կը շողշողան :  
 Զննեցի երկրագունտին վրայ ան տեսակ  
 տեսակ բոյսերը , գոյնզգոյն ծաղիկները ,  
 տունկերը , ծառերը՝ որ ետեէ ետե կը ծլին  
 կը ծաղկին , կը պտղաբերեն կը հասունա-  
 նան . ան աղուոր մարգագետինները , ծա-



դիկներով հիւսուած, գեղեցիկ ծառատուն-  
 կերը պտուղներով բեռնաւորուած, լայն-  
 ուարձակ երկայն դաշտավայրերը, կա-  
 նանչ պաստառներով ծածկուած. ան իս-  
 տակ առուակները որ վիմերուն ծակուք-  
 ներէն կը բղխին, գետերը՝ որ զանազան  
 դարձուածով պտոյտ կընեն, ու գեղեցիկ  
 ձայներով կը վազեն կերթան. լճերը ծո-  
 վակները, երբեմն խռոված, պահ մը հան-  
 դարտիկ, մէյմը կատղած, մէյմը քաշուած,  
 որ բիւր բիւրուց ալիքներ մէկմէկու ետեւէն  
 մանտը լեռներու պէս վրայէ վրայ կը դի-  
 գեն: Տեսայ ան աղւոր բազմամարդ քա-  
 ղաքները, գեղերը, զուարճալի դիրքով,  
 ձևաւոր ճամբաներով, լայնուարձակ հրա-  
 պարակներով, ճարտար շէնքերով, փա-  
 ռաւոր պալատներով, զարգարուն սրահ-  
 ներով, թագաւորական ճեմելիքներով:  
 Վայելեցի թռչուններուն անուշ անուշ եր-  
 գեցմունքները, վարպետ երաժիշտնե-  
 րուն տեսակ տեսակ նուագարաններուն  
 ներգաշնակաւոր եղանակները, մեծամեծ  
 թագաւորներուն ակունքներով մարգար-  
 տով, ոսկիով արծաթով շողշողած հա-  
 րուստ պայծառ հանդէսները, կոշունքնե-  
 րը, հարկինքները, տեսարանները, փա-  
 ռաւորութիւնները: Ահա ասոնց ամէնը  
 ու ասոնց պէս աշխրբիս գեղեցկութիւն-  
 ները քննեցի, զննեցի, տեսայ ու վայել-



լեցի . բայց բնաւ ասոնցմէ մէկուն վրայ ,  
ինչչափ որ կը բաղձայի կուզէի նէ , սիրտս  
չտարցաւ , չյարուեցաւ չկապուեցաւ . ինչ-  
պէս որ գոհ չեղաւ , չլեցուեցաւ ալ , կար-  
ծես թէ մէկ շատ աղբիւրներուն մէջ ծա-  
րաւի ելայ , բաղմախորտիկ հացկերոյթնե-  
րէն ելլալուս՝ աւելի անօթութիւն մը գղա-  
ցի . վասն զի ինչչափ մեծ , որչափ դուար-  
ճալի ըլլան աս կեանքին մէջը վայլած խըն-  
տումները , զիտեմ որ կաթիլ մը կը համ-  
րուին ան մշտաբուզիս ու կենդանի աղ-  
բիւրին քովը , ուրկէց երանեալք երկին-  
քը չէ թէ կը խմեն միայն , հասպա գրեթէ  
կը թաթղին կընկզմին ան անհատնում  
հեշտութեան հեղհեղին մէջ : Աս մտքով  
աշխարհային ամէն անցաւոր գեղեցկու-  
թիւններէն ունայն վայելմունքներէն ճան-  
ճրութիւն զգուանք մը գալով ինծի , բոլոր  
միտքս ու մտածմունքներս , սիրտս ու բաղ-  
ձանքներս հոն վերը դարձուցի , սկսայ ա-  
նոր բաղձալ , հառաչել , ախ քաշել , ըսե-  
լով ես ինծի , թէ որ երկիրը՝ որ Աստու-  
ծոյ ոտքին պատուանդան մըն է , ասանկ  
աղւոր է , հասպա երկինքը ինչչափ ու ինչ-  
պէս գեղեցիկ պիտոր ըլլայ , որ Աստու-  
ծոյ աթոռն է . ուր տեղ վեհափառութե-  
նով կը հանգչի , իր աստուածութեան փառ-  
քին լոյսը դուրսը կը ցուցընէ , ու իր ա-  
մենակարողութեան , իմաստութեան , ա-

ուստաճեռնութեան, ու փառաւորութեան  
հանդէսը կընէ, վերջին պայծառութիւնը  
կը ցուցընէ:

Աւտի ահա աչքս դէպ'ի հոն վերցու-  
ցած, կը սկսիմ կանչել. « Ո՛րպէս սիրելի  
են յարկք քո տէր զօրութեանց, ցանկայ  
և փափաքի անձն իմ'ի գաւիթս քո ». ինչ-  
պէս թէ ըսել ուղէի, ահա մէկ սէր մը,  
կրակ մը, բոց մը, մէկ տաքութիւն վա-  
ռում մը սիրոյ կայրէ կը տոչորէ ներսի  
դիւս. ու անոր հասնելու, անիկայ ստա-  
նալու, անկէ վայլելու բաղձանքով սիրտ-  
հատումով դիշեր ցորեկ անհանդիստ կընէ:  
ու ամենևին ալ դադար չտար, անանկ  
որ աչքս բան մը չերևար, անկէ դուրս ա-  
մէնը լեզիութիւն կու դայ ինծի. անիկայ  
սիրելի մըն է ինծի, որ ուրիշ սիրելիները  
չեն կրնար անոր հետ բաղդատուիլ, վասն  
դի ամենէն վեր սիրելի է. սիրելի մըն է,  
որ չափի ու սահմանի չզար, որովհետև  
անչափ ու չափէ դուրս սիրելի է. սիրելի  
մըն է, որ ինչչափ ինչ աստիճան ինծի սի-  
րելի ըլլալը չեմ կրնար բերնով խօսքով  
իմացընել, աւելի զգալի է ինծի, քան թէ  
խօսքով բացատրելի: Աւ ահա ասիկայ  
« Ո՛րպէս սիրելի են » ըսելով մը կանց-  
նիմ, ու կ'իմացընեմ որ նոյն իսկ ես որ աս  
սէրը սրտիս մէջ կը տանիմ, աս բոցը՝ որ  
ներսէս կը բղխեմ, անոր չափը, աստի-

ճանը , որքանութիւնը չեմ կրցեր հասկընալ : Բայց ասանկ վառուն սէր մը , ուրկէց կը պատճառի ներսս , աս սիրոյ հնոցը որուն համար արդեօք վառուած կը բորբոքի , ինչ բան է , ուր է անիկայ , որ ելլայ երթայ թռչի հանգչի հոն . ասիկայ Աստուծոյ անուշ երեսին տեսութեան բաղձանքն է , անկէ վայելելու զմայլելու , ան լոյսին աղբիւրին բերանը դնելու , ան հեշտութեան հեղեղէն արբենալու ցանկութիւնն է , երկնից արքային պալատը , արքունիքը , բնակարանը , օթևանը , տունը , տեղը , արքայութիւնն է . « Յարկք քո » :

Յարկ մը , ուր Աստուած ինքը կը նստի , իր փառքը դուրս կը ծառայէ , իր վեհափառութիւնը , մենծութիւնը կը յայտնէ , իր գեղեցկութիւնը , բարութիւնը , երջանկութիւնը , լոյսը կը ցուցընէ : Յարկ մը , երջանիկ գաւառ մը՝ ուրկէց ամէն մութը , ամէն տեսակ թշուառութիւնը կը փախչի . ուր ամէն երջանկութիւնը կը թագաւորէ , ամէն չարիքներէն ազատ է , ամէն բարութիւններով լիք , ուր զուարճութիւնները առանց ցաւի են , խնտումները առանց լացքի , հանգստութիւնները առանց խռովութեան , խաղաղութիւնը առանց ճանճրութեան . գաւառ մը՝ որուն բնակիչները զԱստուած ինքն իրենց բաժին ունին , որուն մէջ ամէն բան լիան կը գտնուի :

Յարկ մը , որ Աստուծոյ իմաստութեան  
 գիւտն է , ամենակարողութեանը ճիգը ու  
 մեծագործութեանը լրումը , որ մահկանա-  
 ցու աչք մը չէ տեսած , անկաճ մը չէ լը-  
 սած , ոչ ալ միտք մը կրցած մտածել , ո-  
 բուն մարդս կրնայ բաղձալ , արժանի ըլ-  
 լալ , վայելել , բայց ոչ երբէք ինչ տեղ ըլ-  
 լալը բացատրել , որովհետեւ աս սքանչելի  
 յարկին ճարտարասպետը , շինողը , փա-  
 ռաւորողը , սաղողը զարգարողը Աստուած  
 ինքն է . Աստուած մը՝ որ « Տէր զօրու-  
 թեանց » . որ սքանչելիքներու , հրաշքնե-  
 րու , զարմանալիքներու , զօրութիւններու  
 բուն սկիզբը , հեղինակը , հիմը , աղբիւ-  
 րը , ստեղծողը տէրը ըլլալով՝ հոն ամէն  
 հնարքը , վարպետութիւնը , ճարտարու-  
 թիւնը , իմաստութիւնը , դանձը , ուժը թա-  
 փեր է , անանկ որ ամենակարող Աստուած  
 մը ըլլալով՝ անկէ աղէկը , զերազանցը ,  
 զեղեցիկը չկրնար ընել , վասն զինոյն իսկ  
 ինքն է արբայութիւնը :

Ահա տսանկ յարկի մը , տեղի մը « Յան-  
 կայ և փափաղի անձն իմ » , անձս՝ հոգիս  
 սիրտս միտքս բոլոր ըլլալս , ես բովան-  
 դակս մէկ տեղ , կը ցանկայ , կը բաղձայ ,  
 կախորժէ , կը հառաչէ , ախ կը քաջէ ,  
 բայց ՚ի վերայ այսր ամենայնի իր ցան-  
 կութիւնը բաղձանքը կշտանալ չղիտեր ,  
 աւելի բաղձալ կուզէ , ուտաի կը փափաքի



ևս, այսինքն իր սիրոյն կրակէն միշտ վա-  
ռելու վրայ է, երթալով բոցը աւելի կը  
բարձրանայ, բաղձանքին սաստկութեան  
չափը չիյտեր, իր արտորանքէն, եռաց-  
քէն, սիրահատումէն զիշեր ցորեկ կայ-  
րի կը տոչորի, կը հալի կը մաշի, կարծես  
թէ բոլոր ինքը ներսը դուրսը բաղձանքի  
կրակ մը, բոց մը կտրեր է՝ որ երբ ա-  
տեն պիտոր ըլլայ որ պիտի երթայ տես-  
նայ, գանայ դանիկայ, անոր հասնի, վայ-  
ելէ, դանիկայ տեսնողներուն, անոր մէ-  
ջը բնակողներուն հետ խառնուի, ալ մը-  
տածելիք մը վախ մը չունենալով դանի  
կորսնցընելու, անկէց զատուելու. իր բաղ-  
ձանքը փափաքը ան սաստիճան է, որ չը-  
լայ նէ՝ աչքը կատնէ զոնէ անոր դրսի  
ոտքը կոխելը ևս. « Ի դաւիթս քո », ար-  
քայութեան յարկին փառաւոր դրան  
սեամբ, անոր զարգարուն դաւիթը ոտքը  
միայն գնելը մենձ բան է իրեն, որ անկից  
անդին չըլլար: « Ա՛րպէս սիրելի են յարկք  
քո տէր զօրութեանց, ցանկայ և փափա-  
զի անձն իմ՝ Ի դաւիթս քո »:

Ահա ով Աստուած իմ, զքեզ տեսնալու  
ցանկութիւնս սէրս հալեցուց մաշեցուց  
զիս, առտու իրիկուն անոր հառաչելէն,  
ախ ընելէն սիրտս ներսս մոմի պէս հա-  
լեցաւ հատու, ճամբաս որչափ որ քիչ  
մնաց նէ ալ, շատ երկան կու գայ, երկըն-



ցաւ օտարութիւնս, ուչը մնացի. որչափ  
 կեանքս օր օրուան վրայ մահին մօտենա-  
 լով հոն կը փութայ, թեկեր ալ կուզեմ ա-  
 նոր թռչելու վազելու ու ժամ մը առաջ  
 հասնելու. արդեօք երբ ըլլայ պիտի ան  
 ցանկալի ժամանակը, որ աս հոգնած վա-  
 տած մարմինին բանտէն խայրսիմ ազա-  
 տիմ, փրցընեմ մէյմը ան շղթան՝ որ զիս  
 կապած, չթողուր Աստուծոյս հետ միա-  
 նալու. երբ պիտոր ծագի հալած մաշած  
 մորթը, ու հոգիս թռչի, երթայ, հանդչի  
 արքայութեան մէջ Աստուծոյ զիրկը՝ ու-  
 բուն երկան տարիներէ ՚ի վեր կարօտ մը-  
 նացեր է: « Ո՛րպէս սիրելի են յարկք քո  
 տէր զօրութեանց, ցանկայ և փափագի  
 անձն իմ ՚ի զաւիթս քո »: Ո՛վ տէր իմ,  
 երբ պիտոր գտնամ դրեզ, երբ պիտի  
 վայելեմ ան երջանկութենէն, որուն նոյն  
 ինքն դուն պատճառ ու առարկան ես. երբ  
 ան աստուածային երեսդ տեսնամ, ու  
 դէմ յանդիման նայիմ զմայլիմ անոր.  
 երբ յափշտակած ապշիմ սքանչանամ  
 քուկին թագաւորական փառքիդ. երբ ըլ-  
 լաս պիտի ինծի Աստուած ու ամենայն  
 ինչ. երբ լեցուի պիտոր սիրտս ան հեշ-  
 տութեան զեռակով՝ որ բոլոր Սիոն քա-  
 ղաքը թաթղած է. երբ արբենամ պիտոր  
 ան սուրբ խնտումներով՝ որ քու տնէդ  
 կը բղխէին. ինչուան երբ լսեմ պիտի ուր

է Աստուածդ , բաղձանքներուդ նպատակը ու զլխուդ պսակը : Ո՛վ մահ , մահ երջանիկ քեզի կը կանչեմ , քեզի կը պըլուիմ , որ բիւր կեանքէն աւելի բաղձալի ես ինծի , որովհետեւ դուն միայն սիրելի Աստուածս ինծի կը պարգևես ու յաւիտենական կը պարգևես : Գիտեմ որ չմեռած չի պիտոր կրնամ զքեզ տեսնել , ո՛վ տէր իմ . մեռնիմ ուրեմն զքեզ տեսնալու համար ու տեսնամ չմեռնելու համար :

Ահա ասանկ զեղեցիկ ու յափշտակիչ մտածութիւններու թերութիւններու վրայ թռչելով Գաւիթը՝ Աստուծոյ քաղցր տեսքին սիրով ու բաղձանքովը , ինքը հոս վարը , հողին վերը երկինքը , մէկ ստրը գերեզմանը կոխած , միւսը արքայութեան գաւիթը զրած , ուրախութենէն ինք իրմէ ելած յափըշտակած , սաղմոսարանին զուարճալի տեղուանքը բանալով ու քնարին անուշ թելերը բռնելով , կերգէ Աստուծոյ իր սաղմոսին աս սիրահարուելու փափուկ կտորը . « Ո՛րպէս սիրելի են յարկք քո տէր զօրութեանց , ցանկայ և փափազի անձն իմ՝ ի գաւիթս քո » :

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԱ.

«Առաքի իմ որպէս հովանի անցիմ, և ևս որպէս խոտ ցանաքեցայ».

ՍԵՂՄ. ՃԵ. 10:

Հաղիւ թէ մութ աշխրբէ մը լուսաւոր աշխրբի մը դարս դրած, արեւուն լուսին աչքս բացի, ու իմ ինչ ըլլալս ճանչցայ, ահա մէկէն նայիս բոթ ձայն մը եկաւ դարկաւ անկաճա, առաջ հետուանց, ետքը երթալով մօտիկէն՝ մահ մահ: Առջի բերան լսելուս ասիկայ, բանի տեղ չգրի, մէկգի նետեցի, խոյ եղայ, ջրի ձայն մը եկաւ, իբր թէ ինծի համար չէր, որովհետեւ մանկական տհաս հասակը, աշխրբէս անփորձ, երիտասարդական յանդուգն խառնուածքը, վտանգը դժուարութիւնը արհամարհող, մահին չհաւատացողի մը պէս աչքիս տարութենէն բան մը չերեցուցին ինծի. բայց վրան շատ չանցած, երբոր մէյմը մահկանացու առօրեայ կեանքիս կէսը հասայ, եփուն հասակով մարդ ըսուեցայ, ընդարձակ շիտակ ու ծաղիւսէտ դաշտերուն դուարձալի ճամբորդութիւնները վերջացան, ու լեռնային կոշտ ու պոշտ քարոտ փշոտ ճամբաներ ա-

աաջն առին, ուր վտանգները շատ, փո-  
 սերը լայրժուսն, խէլ մը ետեկէ ետե ելլալ-  
 ներ իջնալներ, ուրկէց կեանքիս մնացած  
 կէսին մէջ պէտք կըլլար ինծի երթալ, որ  
 չէ թէ առաջուան պէս հանդարտ ուրախ  
 քայլով մը ուժը վրաս, հասլա մանաւանդ  
 թէ հալած վատած սիրտմաշուք տրտում  
 կեանքի մը մահին արտորանքով վազելով  
 ընթացքիս նպատակին, ահա օնն ատեն  
 աղէկէն սկսաւ տեղ ընել սրտիս մէջը, որ  
 ալ ճար չկայ, մեռնիմ պիտի, ուրիշնե-  
 րուն պէս եկայ սե անոնց պէս պիտոր եր-  
 թամ: Քայց կըսէի մտքիս մէջը ես ինծի  
 ինչ բան է ասիկայ, ինչ շուտ, ես դեռ  
 երեկուան օրս տղայ մըն էի, քիչ մը ա-  
 ռաջ կտրիճ ուժով պատանի մը, առաք-  
 ւան դէմ գեղեցիկ աշխոյժ տաքարիւն ե-  
 րիտասարդ մը, ինչ եղաւ ինծի որ մէկէն  
 ի մէկ տարևոր անցեալ հասակի մը մէջ,  
 ծրած ծնդած վատուժ չոր ոսկր կարած կը  
 գտնամ դիս. որ ասանկ շուտ մը հիւան-  
 դութիւններով ցաւերով բռնուած, մեռ-  
 նելու նշաններ կը տեսնամ վրաս, դերեզ-  
 մանէս քայլ մը հեռու կը գտնամ դիս: Յս  
 դեռ ինչ ըրի աշխարհին վրայ, կամ թէ  
 ինչչափ ալ որ կրցայ ընել՝ քանի՞ օրուան  
 բան է, ինծի երեկի պէս կու գայ. բրած  
 ժամանակս կարծէի որ բան մը կընեմ, առ  
 ուրախութիւնը դուարձութիւնը՝ որ կը-



նեմ, աս հարստութիւնները գանձերը որ  
 կը ժողովեմ, աս տունը որ կը շինեմ, մեծ  
 բան մըն է, ինծի պիտոր մնայ, երկնկեկ  
 տարիներով պիտոր վայելեմ գանոնք, ու  
 բովհետե զեռ առողջ եմ, ուժ կըզգամ  
 վրաս, զեռ շատ ժամանակ ունիմ, զեռ օ-  
 րեր տարիներ ունիմ ընելու: Բայց ահա  
 հիմա կը նայիմ որ ան ըրածներէս բան  
 մը ձեռքս չէ մնացեր, չեղածի պէս մը կու  
 գան ինծի, ծովին մէջը նաւին ճամբայ  
 կտրելուն թող տուած հետքին պէս մէ-  
 կէն գոցուելով կը կորսուին, կամ թէ ա-  
 դեղէն ելած թուած կապարճի նման շուտ  
 մը աչքէն կը փախչին անյայտ կըլլան,  
 կամ թէ ծուխի պէս աչքիս երեւալը ու  
 կորսուիլ չքանալը մէկ կըլլան: Ի՞նչ բան  
 է ասիկայ, ես ինչ մտքի վրայ էի, ինչ  
 եղաւ. խէլ մը բաներս շիտկեր կարգաւո-  
 րեր էի, խէլ մըն ալ պիտոր ընէի՝ ըսած ժա-  
 մանակս՝ ետես դառնալուս սէս, բան մը  
 չգտայ, ձեռքս սարսաղ ելաւ, բայց մնա-  
 ցի, բան մը չըրածի պէս եղայ, իբր թէ  
 ըրեր եմ ու չեմ ըրեր, աշխատեր եմ կամ  
 չեմ աշխատեր, վայելեր եմ կամ չեմ վայե-  
 լեր, այսօր աշխարհք եկեր եմ ու այսօր  
 աշխարհէս ճամբայ կընեմ, այսօր ծներ եմ  
 ու կը մեռնիմ, առտուանց օրօրոցս ու ի-  
 րիկունը գերեզմանիս մէջն եմ:

Ահա հիմա աշխարհիս մէջը ամէն տե-



սաճ ըրածս գիշերային երազ մը, աչքի երեցած ցնորք մը կու գան եղածին չեղածին մէջ. ան է մի մարդուս կեանքը՝ որ չէի կարծեր: Ահա ասանկ մէկ ատեն մը, որ ալ ատեն չունիմ, ձեռքս գլխիս դարնելով, սփսոսելով, սիրտցաւով մը կըսկըսիմ կանչել. « Աւուրք իմ որպէս հովանի անցին, ե ես որպէս խոտ ցամաքեցայ ». ինչպէս թէ ըսել ուզէի, ահա կեանքիս ան գեղեցիկ ծաղկի դարնային դըւարթ պայծառ օրերը, ուրախութեան խնտումի դուարձութեան օրերը եկան անցան, ան մանկութեան մատղաշ փափուկ դարունի ծիծաղի տարին, ան պատանեկութեան ուրախ տաքուկ դուարձութեան ամառնային տարին, ան երիտասարդութեան հասուն եփուն աշնանային պտուղի տարին, լինցան վերջացան, հաստան մաշեցան, անցան դացին. ահա ձերութեանս ծիւրած հալած, տրտում տխուր ձմեռնային ցաւոյ սգոյ ու լացքի տարին եկաւ դտաւ կոխեց գիս, որ ատեն որ լինցած է ինծի համար աշխարքիս ուրախութիւնը վայելչութիւնը. ալ հողալ, մտամտալ, տառապիլ, մաշիլ, հառաչել, ախ քաշել՝ է իմին բաժինս միայն, ու միշտ պէտք է ինծի կորած գլխով մը ծռիլ նայիլ ան հողին, որուն մէջ պահեկէ մը պիտի խառնուիմ, անհետ անյայտ ըլլամ չքանամ, անունս

յիշատակս կորսուի, իբր թէ չկայի, չէի  
 եղած, ինչպէս թէ չըծնածի պէս էի կամ  
 թէ մարդ չէի: « Աւուրք իմ որպէս հովա-  
 նի անցին »: Անցան ինչպէս հովանի, ըս-  
 տուեր, շուք մը. ինչպէս շուք մը՝ որ եղած  
 տեղէն մէկէն անյայտ կըլլայ ու իր առջի  
 ըլլալուն հետք մը ու նշան մը չթողուր ա-  
 մենակին, երթալուն պակսելուն ամէնը մէ-  
 կէն կերթայ կը պակսի, ամէնը իր հետը  
 կառնէ կը տանի ինչ որ է նէ. ասանկ  
 ալ իմ կեանքիս օրերը մահիս վրայ դա-  
 լուն, հողիս մարմինէս երթալուն, ման-  
 կութիւնը, երիտասարդութիւնը, մարդ-  
 կութիւնը ու անոր հետ եղածները, զե-  
 դեցկութիւնը, ուժը, ճարտարութիւնը,  
 ճարպիկութիւնը, վայելքը, ստացուած-  
 քը, ու ալ ամէն բանը անցան լմացան,  
 բան մը չմնաց, մահը կեանքիս ամէն ու-  
 նեցածը յաիշտակեց տարաւ, ու անոնց-  
 մէ նշան մը, հետք մը չթողուց, թէ և ես  
 անիկայ բռնելու վաղեր էի: « Արպէս հո-  
 վանի » . ինչպէս շուք մը՝ որ բան մը չէ ու  
 բան մը կերևնայ աչքի, բայց յանկարծ  
 պակսելուն՝ աչքէն փախչելուն՝ կիմացուի  
 ոչինչ մը ըլլալը, ստանկ ալ կեանքիս օ-  
 րերը՝ որ հիմա երկան բան մը կերևայ ին-  
 ծի ու երկան ատենի մը աչքով կը նայիմ  
 անոր . որ յաիտենականութեան քովը  
 կրնայ ոչինչ մը ըսուիլ, կէտ մը համրուիլ,

մէկէն 'ի մէկ պահսելովք մահին ժամանակը, ու յաւիտենակաճանութեան վրայ դալով, ամէնը գրեթէ ոչընչի պէս կանցնին կանհետանան: « Որպէս հովանի » . ինչպէս շուք մը՝ որ կանանչ տերեւալից ծառի մը տակ կերևայ ու դուարձալի գեղեցիկ մը աչքին կու դայ, բայց յանկարծ տաք խորշակէ մը երուելուն, կամ պաղ հիւսիսային հովէ տերեւաթափ ըլլալուն, ամէն շուքը վայելչութիւնը շէնքը կը կորսընցընէ, ու տեսնողին զգուանք ու տհաճութիւն կը բերէ, նոյնպէս ալ իմին կեանքիս օրերը՝ որ պահ մը ծիծաղերես դուարթագեղ գեղեցիկ կերևային ինծի ու ուրիշներուն, որուն համար ես ինծի կը պարծենայի, ահա յանկարծ ծանր մահաբեր հիւանդութենէ մը բռնուելուն, կամ բազմաժամանակեայ մչտատանջ ճերութենով մը մաշելուն, ան գեղեցիկութիւնը դուարթութիւնը շնորհքը, տղեղութենով, գունհատութենով, գեղնութենով կանցնին կը հատնին, կը կորսուին անյայտ կըլլան շուքի մը պէս: « Ատրք իմ որպէս հովանի անցին » :

Ահա աս կերպով իմին ան գեղեցիկ օրերս երբ մէկ շուքի նման անցան նէ, ես ինչ եղայ հապա ան առեն, վրաս ալ ինչ մնաց, ինչ վիճակին մէջ դանուեցայ, ինչ եկաւ զլիսուս, ահա օրինակով մը իմացը-

նեմ, որ կարենաս նայիլ . որովհետև ան-  
 կէ ետքը ես ալ տեսնալու բան չեմ, որ  
 տեսնաս նայիս ինձի, ոչ ալ նայելուդ կըր-  
 նաս զիմանալ : «Եւ ես որպէս խոտ ցամա-  
 քեցայ» . ինչպէս խոտ մը, բոյս մը, տունկ  
 մը, նորարուսիկ դեռարուսիկ մատղաշ  
 փափուկ առոյգ հասակին մէջ, սլարարտ  
 հոդին մէջ անկած ըլլալով, նայիս մէկէն  
 զլուխը դեանէն գէպ ՚ի վեր կը վերցընէ  
 կը բարձրանայ, ուրիշ տունկերուն մէջէն,  
 ոտքէն ինչուան զլուխը դարդարած մեծ  
 սղտիկ մանարտիկ ու խոշոր կանանչով  
 ու տերևով, գոյնզգոյն բիւր լեցուն ծա-  
 զիկներով, ասկէց անկէց վերէն վարէն  
 հաստ ու բարակ հիւթալից ոստեր ճուղեր  
 արձըկած . հոս հոն ու ամենուն զլուխը մէյ-  
 մէկ սլտակ ծաղիկէ, ոսկի, արծաթ, մա-  
 նիշակ, բոսոր, շուշան, ծիրանի գունե-  
 րով, որ մէկմէկու եանէն կը հասցընէ,  
 ոմանք բացուած, ոմանք կիսաբաց, կէս  
 բանալու վրայ . մէկ ճուղը ծաղիկ կուտայ,  
 միւսը կոկոնը կը ցուցընէ, մէկ ուրիշ մըն  
 ալ սլտուղը կը հասցընէ, սերմը հունտը  
 կը հասունացընէ . ինքը վերէն վար մէկ  
 թելի վրայ սաղած վերջի աստիճան դեղի  
 շուրի մէջ, սլարտէզին ամենէն աղէկ տե-  
 ղը բուներ լեցուցեր է, հոտը անուշ բուր-  
 մունքը աշխարհը է բուներ, ամենուն նա-  
 ղելի զլուխը կերեցընէ ու ծանրցած ծայ-



բովը մէկդի կորած ծած, կարծես թէ բարե կու տայ եկող գացողին, հեռուանց տեսողը իրեն կը կանչէ կը հրաւիրէ, իր բովը կառնէ կը նստեցընէ, կը դուարձայընէ կը դմայլեցընէ, մէյ մը գեղեցիկ տեսքովը, մէյմը նազելի դիրքովը, պահ մը կենդանի գուներով, պահ մը անուշ հոտովը: Ահա ասչափ ու ասկէ աւելի երջանիկ կեանքի մը մէջն է բոյսը. բայց թէ որ յանկարծ քովանց մահացու տապաք մը դպչի, ու մէջքէն զարնուած ոստաքանց ըլլայ, կամ ամառնային խորչակ մը ուղիղ դժով փշէ գլխուն վրան, ահա նայիս մէկէն բոյսը նազելի գլուխը խոնարհեցուց, գեանի վրայ տապալած ընկաւ, ճուղերը մարմինին միաբանութենէն զատուեցան, տերևները գունաթափ հոս հոն տարտղնած, ծաղիկները թափուած ցիրուցան, դեղնութիւն մը պատեց երեսը, բոլոր բուսական բնութիւնը քակուած ցրուեցաւ, ոստը արմատէն, տերևը ճուղէն, ծաղիկը բոյսէն, մնաց մէջ տեղը չորցած ցամքած ուտ մը, ան ալ ամենուն կոխան, տեանողին սրացաւ, ոմանք կափստսան, ոմանք վախ կը կանչեն, մեղք կը սեն. ո՛ր է պարտէզիս զարդը գեղեցկութիւնը, ո՛ր է շուքը վայելչութիւնը, առտուան դէմ ծլած ծաղկած, կէս օրը թոմած թափուած, իրիկունը մնաք բարով

ծաղիկ, ուր է ծաղիկ, զնաց կորաւ, ու  
 չգար մէյ մըն ալ: Ահա իրաւցընէ խմին  
 կեանքիս օրինակը՝ որ շատ նման կու գայ  
 երեկուան բոյսին պատահածը. ինծի ալ  
 այսօր նոյնը կը պատահի, անոր զլխէն  
 անցածը ինծի օրինակ ու միանգամայն դա-  
 դափար մըն է. « Եւ ես որպէս խոտ ցա-  
 մաքեցայ »: Ես՝ ու ինծի հետ բոլոր եսու-  
 թիւնս, ըլլալս, կեանքս, որ բոյսի մը նը-  
 ման ծլած ծաղկեր էի աշխրբիս պար-  
 տէղին մէջ, ուր տեղ Աստուծոյ մը աջը  
 տնկեր էր, ամէն կերպ շուքի գեղի վայել-  
 չութեան մէջ, զլխէս ինչուան ոտքս մէկ-  
 դմէկէ գերազանց սքանչելի մը զարդա-  
 րած հազուած սզուած, անանկ որ պզտը-  
 կութիւնս շնորհք մը ունէր, մենծութիւնս  
 մէկ ուրիշ շնորհք մը. մարմնիս անդամ-  
 ներուն ամէն մէկուն վրայ մէկզմէկէ ա-  
 լելի ձե, գոյն, աղւորութիւն, վարպե-  
 տութիւն մը բանեցուցած վերջին աստի-  
 ճան արհեստի մը ճարտարութենով ճի-  
 դով, բոլոր մարմնոյն մորթին վրայ վար-  
 պետ պատկերհանի մը զարմանալի նորա-  
 գիւտ գոյներու վեր վար վրձին խաղցու-  
 ցած, զրիչ զարկած, ան կայտուիկ ման-  
 տրբաիկ վառվռուն աչքերը բիրերով մէկ-  
 տեղ երկու փալվիւն աստղերու պէս զըլ-  
 խին կամարին վրայ, ան շնորհալի գէմ-  
 քին ծաղկաւէտ դաշտային զիրքը, ու բո-

լոր բնութեան վայելուչ կերպը, նազելի  
 հասակը, չքնադագեղ տեսիլ պատկերը,  
 որ տեսնողները զմայլեցընէր կը հիացը-  
 նէր, ու սանդոզին փառքը կեւելցընէր: Ա-  
 հա ասանկ մէկ երջանկութեան վիճակը  
 ծլելու սճաղկելուս, երբ անուշ ուրախ փա-  
 ուստը կեանքով մը կը զմայլէի, նայիս  
 չկարծած չյուսացած ժամանակս, յան-  
 կարծ մահաբեր ախտի մը թունաւոր նե-  
 տով կուրծքէս խոցուածի պէս, կամ ծանր  
 վտանգաւոր հիւանդութեան սուր անգուլթ  
 կացինով մը մէջ տեղաց դարնուած, կամ  
 թէ մեռցընող կաթուածի մը զարկուածէն  
 դլխուս ուտելով, մէկէն գլխիվար գլտոր-  
 տրկելով թապտորկած ընկայ տապալեցայ,  
 ու բոլորը մէկտեղ գեղեցկութիւնս շնորհ-  
 քըս դանձս, դերեզմանիս քշեցի տարի  
 պարպեցի, ամէնը անոր մէջ տարտղնե-  
 լով, խոտի պէս թառամեցայ թափուե-  
 ցայ, ցամքեցայ, չորցայ լմնցայ, չոր ոսկր  
 կտրած, ան ալ հոս հոն ցիրուցան. ունե-  
 ցածէս բան մը չմնաց, բայց եթէ ցուրտ  
 մերկ չոր ոսկր, ոսկերոտի, դանկ մը. գը-  
 նաց կտրաւ գեղեցկութիւնը, հատաւ կըտ-  
 րեցաւ գոյնը, մաշեցաւ հալեցաւ միսը մար-  
 մինը, վատնեցաւ չորցաւ կորովութիւնը  
 թանձրութիւնը, տղեղացաւ անչքացաւ  
 տեսիլը. պատկերը. գզուութիւն, գար-  
 չութիւն, տղեղութիւն, ասպականութիւն,

փտութիւն մը պատեց բոլոր բնութիւնը .  
 ինչ էի ու ինչ եղայ . ո՛ր է պատիւը փառ-  
 քը , ո՛ր է շէնքը շնորհքը , ո՛ր երջանկու-  
 թիւնը , փառատրութիւնը , գեղեցկութիւ-  
 նը . մնաք բարով ըսաւ լմնցաւ ամէնը , ալ  
 չկայ ու յաւիտեան չկայ : Հիմա մէյմըն ալ  
 եկուր տես զիս , թէ որ կրնաս կամ կը  
 դիմանաս , տես աս ոսկրներուն կոյտը ,  
 աս հողին փոշիին զիզուածքը՝ որ ես եմ ,  
 ես ան գեղեցիկ , ունեոր , մեծ մարդուն  
 մնացած նշխարքները փշրանքներն եմ , աս  
 շիրմին տապանին մէջը ժողոված , նայէ  
 ինչ մնացեր է իզմէ . ես ալ քեզի պէս էի ,  
 ու դուցէ քեզմէ քիչ մըն ալ աւելի , տես  
 ինչ եղեր եմ , ալ կրնաս մի ճանչնալ զիս .  
 միտքդ բեր որ աս տեղը իմին պառկած  
 գերեզմանս է , որ դուն ամէն իժիր կը կո-  
 խես կանցնիս , ու չես մտածեր որ կոխած  
 տեղդ ով կայ , որ հազիւ թէ կանգուն մը  
 տեղ շատ է ինձի համար . ափսոսա լաց  
 ողբա ինձի , որ դուցէ երբեմն երնէկ կու  
 տայիր . ես այսօր ու վաղը ետեւս դուն .  
 ես ատեն մը քեզի պէս , ու դուն պահ մը  
 ետքը ինձի պէս . « Աւ ես իբրև խոտ ցա-  
 մաքեցայ » : Ահա հոս տեղ կը լմննայ աշ-  
 խըրքիս ամէն թատրոնին տեսարանը ,  
 հոս կը գոցուի սուտ երևոյթներուն վա-  
 րագոյրները . որովհետև անցաւոր է գե-  
 ղեցկութիւնը , սուտ է մանկութիւնը , ե-



րիտասարդութիւնը, ուժեղութիւնը, առող-  
ջութիւնը . փուճ է մարմինը, կեանքը, ու  
ես ալ անոնց հետ մէկտեղ . պէտքը չէ ա-  
նոնցմէ մէկուն հաւատալ, յոյս դնել, վըս-  
տահիլ: Ասիկայ առաջուրն է իմաց տուին  
քեզի իմին կեանքիս անհաստատ, փոփո-  
խական օրերը, շուքի պէս գալով երթա-  
լով, ետքը օրինակով խրատ եղայ քեզի,  
ես ինքս մնացուկիս հետ մէկտեղ խոսի  
պէս թառամելով անցնելով:

Ահա աս մտքի վրայ Դաւիթը՝ աս եղա-  
նակ ներքին բանուկ իր կեանքին վրայ մը-  
տածութիւններով, ինչպէս թէ ինքը իրեն  
կենդանի գերեզման մը, իր մնացած փըշ-  
րանքները՝ ափ մը փոշին, կոյտ մը ոսկր  
աչքին առջեր, չոր գանկ մը ձեռքը, իրեք  
թելով քնար մը ձևացուցած, իր ճարտար  
դամբանական երգովը, բերանը ողբ կոծ,  
աչքը արցունք՝ կերպէ իր սաղմոսին ան  
վիրաւորիչ սիրտբանուկ կտորը . « Աւուրք  
խո՛րալէս հովանի անցին, և ես որալէս խոս-  
ցամաքեցայ »:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԺԲ .

« Լսելի արա ինձ տեք զցեծութիւն և զուրախութիւն, և զեծասցեն ոսկերք իմ տառապեալք » .

ՍՅՂՄ. Ծ. 9:

Հողին տակը գերեզմանական տապալանիս մէջ մարմնոյս մնացածէն ալ մը հող փոշի ու չոր ոսկրներու խառնափնդոր կոյտ դիզուած մը միայն դտայ, ու տեսայ որ մինակ ես անխիայ չեմ, դեռ շատ բան կը պակտի իղմէ. բայց հողիս տեսնելու երածիս, ահա ամբողջ լման կատարեալ կը դանամ. մարմինիս մէջ եղած ատենը ինչ որ էր նէ, մանաւանդ թէ անկէ աւելի երանական, փառաւորեալ, անմահ վիճակի մը մէջ անփոփոխ հաստատուն ու յաւիտենական, ինչպէս թէ Աստուած մը ըլլար: Ահա աս մտքով մարմնոյս անխեղձ ողորմելի վիճակին տեսքը, որչափ անմխիթար ցաւցուց ու մէկ ետքի աստիճան տրամութեան մէջը ինջեցուց ընկրղմեց նէ, նոյնչափ ալ հողիս աս եղանակ ցանկալի ու երջանիկ կացութիւնը մէկ վերջին աստիճան շախաղանց ուրախութենով լիք կընէ ու մխիթարուած վայելել

կու տայ . անանկ որ ես աս երկու ներհակ  
 առարկաներուն՝ հոգիին ու մարմինին տե-  
 սութենովը , փառաւորեալ ու անարդ ,  
 ինչպէս թէ ուրախութեանս ու տրամու-  
 թեանս մէջ տեղը ափշած կը մնամ , չեմ  
 դիտեր տրամիմ՝ չէ նէ ուրախանամ , ցան-  
 կականիս չէ նէ ցասմնականիս ետեէն եր-  
 թամ , կամ որը աւելի ընեմ . վասն զի քա-  
 նի որ հոգիս ու մարմինս առ հասարակ  
 ցնծացեալ չեն կենդանութենով առ Աս-  
 տուած , իմ ուրախութիւնս կատարեալ չէ  
 ու միշտ բան մը կը պակսի իզմէ , պէտք  
 է որ աս հոգիս ու մարմինս առաջուան  
 պէս դարձեալ իրար դանան , իրար միա-  
 նան ու իրար մէջ բնակած վայելեն : Բայց  
 ասիկայ ալ ինչպէս կըլլայ , մէկը մեռած ,  
 միւսը կենդանի , մէկը հոգին տակը փրտ-  
 տած , միւսը երկինքը փառաւորուած , մար-  
 մինը մէկ անշարժ զի մը ու անկենդան  
 ոսկը մը մնացեր է , չկրնար ալ տեղէն շար-  
 ժիլ , ինտոր ելլայ երկինքը հոգին դանա-  
 լու , ասիկայ կարելի բան չէ . հապա հո-  
 գին որ կենդանի շունչ մըն է , շարժող ա-  
 նօսը ու թափանցիկ , թող զայ իջնայ եր-  
 կինքէն նորէն իր մարմինը դանալու . բայց  
 չեմ դիտեր թէ տեսնալուն , զանիկայ կը  
 ճանչնայ մի , որովհետեւ անոր առջի շէն-  
 քը բոլորովին քայքայուեր քակուեր լմըն-  
 ցեր է , հող կտրեր , փռչի դարձեր գետնի

հաւասարեր է . կամ թէ տեսնայ ճանչնայ նէ ալ , կրնայ մի անոր մէջ մտնալ բնակիլ ու իրմէ անոր հաղորդելովը՝ կենդանացուցած զանիկայ , զարմանալիքներ գործել անշարժ անկենդան դիին մէջ . որովհետեւ դեռ հիմակու հիմա Աստուած չէ խօսած , լուռ կեցեր է , ձայնը չէ հանած , որ լսելի ընէ անկենդան չորցած ոսկրներուն , պէտք է որ անգամ մը իր լուր թիւնը կտրելով , մէյմըն ալ խօսի , նորէն ձայն տայ , որ աս խեղճ տառապեալ ոսկրները շարժին իրար քով կապուին միանան , ծլին ծաղկին , ցնծան ուրախանան : թէ որ ասիկայ ասանկ է , հիմակու հիմա ո՛վ հողի իմ՝ ուրիշ բան չեմ ուզեր քեզմէ . հապա միայն աղաչես անոր , որ ինչպէս ան ձայնը անգամ մը դրախտին մէջ մէկգմէկէ զատ հեռու եղած ատեննիս , լսեցուց մեզի ու կենդանացրնելով ցնծացուց երկուքնիս ալ ուրախութենով , անանկ ալ դարձեալ նորէն լսեցընէ , որպէս զի դարձեալ կենդանութենով ցնծանք ուրախանանք . « Ասելի արա ինձ տէր զցնծութիւն և զուրախութիւն , և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք » :

Ո՛վ ստեղծող Աստուած հողուոյս ու մարմնոյս , որ մարմինս հողէն ու հողիս շունչէզ ստեղծեցիր , ու երկուքը քովէ քով միատրելով սքանչելի դորութեամբ մը մարդ



ըրբի դիս, քուկին առջի անգամ մէկ ա-  
հաւոր ու սրղողած ձայնդ հողիս հանեց  
առաւ տարաւ մարմինէս, ու մարմինս  
անհողի՛ հող դարձուց լմնցուց, ու ետքի  
անգամ մէկ ուրախ ու հաշտուած ձայնդ  
նորէն հողիս նոյն մարմինիս կը դարձընէ,  
ու հողիս ու մարմինս երկուքն ալ անմահ  
կընէ. մէկ լեզի ու արտմական խօսքդ  
խոտովութիւն ու վիշտ բերաւ կենդանի ոս-  
կըրններուս, ու դարձեալ մէկ դուարթա-  
րար անուշ խօսքդ նորէն ուրախութիւն  
ու ցնծութիւն կը բերէ չորցած ոսկրնե-  
րուս: Ահա աստանկ ատեն մը, իմին աս  
տնանկ անարդ կացութեանս ու խեղճ ու  
դորմելի վիճակիս մէջ, երբոր իմ առջի  
փառքէս շուքէս մերկացած, դանձերէս  
թալլուած, բոլոր մարդկութենէս կողոս-  
տուած, իմին ըլլալէս բան չէ մնացիր  
չոր ոսկրներէս ՚ի դատ ու ափ մը փոշիէն  
դուրս, լսեցուր անոր ան քու կենդանա-  
ցուցիչ ձայնդ ու նորողիչ խօսքդ, որպէս  
դի անոր ուժովը նորէն հողիս մարմինիս  
դառնալով մտնալով, ինչպէս որ ստեղ-  
ծելուս ատեն դրախտին մէջ պատահե-  
ր, կրկին յառնէ, կենդանանայ, ապրի  
չնչէ աս փոշիին դիզուածը ու ոսկրներուն  
կոյտը, նորափետուր դարդարուած ու ան-  
մահութիւն դեցած. «Լսելի արա ինձ տէր  
դցնծութիւն և դուրախութիւն»: Իրաւ, տէր

իմ, հաւատքովս լուսաւորուած, յուսովս  
 գորացած չեմ երկրայիր, չեմ տարակու  
 սիր, որ ինչպէս առաջուրնէ անսուտ բեր  
 նովդ խոստացեր ես, սասիկայ օր մը պի  
 տոր լսեցրնես ինձի՝ երբոր ընդհանրական  
 դատաստանին օրը դարբիէլեան փողին  
 ձայնովը մեռելներուն ձայն կու տաս, որ  
 ելլան յառնեն իրենց գերեզմանէն, ուր  
 ինչուան ան ատեն մթուն մէջը տրտմած  
 սառապեալ կը սպասէին անոր. բայց դուն  
 լսեցոր ինձի աս աւետարար ու մխիթա  
 րական ձայնդ այսօր, հիմա, երբ դեռ թէ  
 պէտ հոգիս մարմինիս մէջն է, չեն դա  
 տուած, չեմ մեռած, բայց իբր թէ մեռա  
 ծի պէս ան ետքի գալիք օրերս մտքիս գա  
 լով, ան մեռնելէս ետքը գերեզմանիս մէ  
 ջը ունենալու ողորմելի վիճակս աչքիս առ  
 ջին տեսնելով, հիմակուրնէ արդէն եղածի  
 պէս մութը ծածկեր, յուսահատութիւնը  
 տրտմութիւնը առեր պատեր է դիս, հո  
 գը մտմտոքը գիշեր ցօրեկ զանազան  
 ժփանքներով կը խոռովէ տակնու վրայ կը  
 նէ դիս, որ ինչպէս պիտոր ըլլայ իմին  
 վերջս, արդեօք թէ յանկարծ ինչպէս չե  
 դածի պէս պիտոր ըլլամ, ընտոր որ ա  
 ռաջ էի. ինչպէս խոտ մը բուսնելով պի  
 տոր թառամիմ չքանամ երթամ. կամ  
 ինտոր որ անբան անասուն մը մեռնիմ լը  
 մննամ. ինչպէս ճրագ մը հատնելով մարիմ

մթանամ, անցնիմ վերջանամ: Ասեցուր ին-  
 ծի: « Ասելի արա » ինծի պէս մէկ անհաւա-  
 տի մը, հաւատքի լուսով կուրցածի, յուսա-  
 հատածի մը, յոյսի ձայնին խղցածի կըսեմ,  
 լսեցուր, կանչէ պոռա անկաճէս ու ին-  
 չուան ներսս մտքիս սրտիս հասցուր քու  
 կին սաստիկ զօրաւոր թափանցող բանուկ  
 սուր ձայնդ: Բայց ասով չըլլար միայն,  
 հապա անկաճս խուլ ըլլալովը, միանդա-  
 մայն կարողութիւն ալ տուր լսելու, պատ-  
 ըաստելով տրամադրելով միտքս սիրտս  
 քու աստուածային կոչմունքիդ ձայնին,  
 որպէս զի անգամ մը իր ակնտացեալ հըն-  
 ցած խուրթենէն բժշկելով, լսէ, հասկը-  
 նայ, իմանայ, շարժի, շարժելով իր հա-  
 ւատքը ետքի յարութեան խօսքին, շար-  
 ժելով իր յոյսը հողւոյն անմահութեան  
 խոստմունքին, շարժելով իր միտքը յաւի-  
 տենական կեանքին ճշմարտութեանը, ու  
 ասոնց ձեռքովը վերջապէս շարժելով իր  
 սիրտը անոր բաղձալի ցանկալի կատա-  
 ըածին, ան փափաքելի երջանիկ ակնկա-  
 լութեան, որ է իրացընէ մի միայն ճըշ-  
 մարիտ ու զուտ ուրախութիւն և ցնծու-  
 թիւն սրտի մարդուն աս մահկանացու ա-  
 ոօրեայ կեանքին արտասուքի մութ ձորին  
 վրայ ցաւալի ընթացքին քալուածքին մէջ:  
 Ահա աս է « ցնծութիւն և ուրախու-  
 թիւն » ըսածը: Բայց որպիսի ցնծութիւն

և որախութիւն . միթէ աշխարհքին խոս-  
տացածին պէս , մարմինին տուածին նը-  
ման , հարճառօտ , անցաւոր , ունայն ,  
խարերայ , որ չկշտացներ , չլեցներ , դո՛՛  
չըներ , մանաւանդ թէ աւելի կը ծարաւ-  
ցընէ , աւելի կը խռովէ , կը խարէ . հա-  
պա անանկ ցնծում , խնտում , որախու-  
թիւն մը՝ որ վերուստ ինջած է մարդուս  
սրտին վրայ , աստուածային պարզե մըն  
է՝ որ առ հասարակ կը սփտփէ կը մխի-  
թարէ հոգին ու մարմինը՝ դուարճացընե-  
լով միտքը՝ Աստուծոյ անուշ երեսին ե-  
րանական տեսութենովը , ու որախացը-  
նելով ցնծացընելով սիրտը՝ աստուածու-  
թեան անեղր անսահման սիրոյն յախտե-  
նական վայելմունքին զմայլմունքին անու-  
շութենովը . հիմակուրնէ դեռ անոր ար-  
ժանի չեղած աս աշխրքիս վրայ թաթղե-  
լով ընկզմելով զմարդը ան փափկութեան ,  
հեշտութեան , անուշութեան զետակէն ,  
ան սիրոյ , երանութեան , փառքի հեղե-  
ղին մէջ , ոսկից երանեալները երկինքը  
կարրենան : Ահա աս եղանակ ցնծութիւն  
ու որախութիւն մը լսեցուր ինծի , ու՛մ Աս-  
տուած իմ . որովհետեւ ասկից ուրիշ ու-  
րախութիւն մը չըկրնար իմին տրամու-  
թեանս բաւականանալ , իմին ներքին տա-  
ռապելի ցաւած ոսկրներուս մաշութիւն կըս-  
կիծին հեծութեանը , մեղմացուցիչ օծ-



մունք մը, թեթևացուցիչ շփում մը, գովա-  
արար դուարթարար խղ մը ու թմրեցու-  
ցիչ լուացմունք մը դեղ ըլլալ. « Լսելի  
արա ինձ տէր զցնծութիւն և դուրախու-  
թիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառա-  
պեալք » :

Ո՛վ տառապեալ ոսկերք իմ, չէ թէ մե-  
նակ անոր համար տառապեալ, որ իբր  
թէ դեռ ողջ ողջ, արդէն գերեզմանիս  
փոսին մէջ կանգուն մը հողին կոյտին տա-  
կը հոս հոն ցիրուցան քայքայած տար-  
տըղնած, չորցած ցամքած մերկ ցուրտ  
անշարժ տեսածի պէս կըլլամ ձեզի, հա-  
պա առելի տառապեալ կըսեմ ձեզի անոր  
համար, որ հիմակու հիմա դեռ կենդանի  
ըլլալովնիդ, դեռ տաքուկ զգայուն շար-  
ժուն ողջ, դեռ կենդանի մորթով կաշիով  
մարմինով պատած կապուած, մէկտեղ  
միաբան, անանկ հաւատքով մարած մե-  
ռած մտքի մը, յոյսէն անշարժ անկենդան  
սրտի մը ձեռքը, կենդանի ոսկր անդամ  
եղեր էք, որով իբր թէ կենդանի՝ մեռած  
ներուն հետ տապանին մէջը կը տքտը-  
քաք, ու ողջ ըլլալով մեռածի ցաւ, խեղ-  
ճութիւն, վիշտ ու տառապանք կը կրէք,  
ասոր համար իրաւցընէ կրկին անդամ  
տառապեալ ոսկերք իմ, բայց ահա ահանջ  
տուէք, լսեցէք մէյմը աստուածային ան  
դուարթարար զօրաւոր ձայնին՝ որ ձեզի

աւետարար յարութիւն անմահութիւն կը  
 դուշակէ կը խոստանայ, որով կրկին կեր-  
 պով մեռած ու կենդանի, ցնծութիւն ու  
 ուրախութիւն զգենուք: « Եւ ցնծասցեն  
 ոսկերք իմ տառապեալք»: Ո՛վ ոսկերք իմ,  
 դուք թէպէտ և կենդանի հիմա մարմնոյս  
 մէջ, բայց ևս ձեզի այսօր տառապեալ  
 կրնեմ կրկանչեմ, որովհետև արդէն մե-  
 ռածի պէս կը տեսնամ ձեզի գերեզմանիս  
 մէջը, ինչպէս որ ալ տեսեր եմ. ահա աչ-  
 քիս առջին դաշտին մէջ հոս հոն ցիրու-  
 ցան մնացեր էք, լեզու խօսք ճայն ու  
 շարժում մը չկայ, անզգայ կոծղ մը կըտ-  
 րեր էք. քիչ մը առաջ հողին ձեզի հետ  
 ըլլալուն՝ աննման շէնք մըն էիք փառա-  
 տը. հիմա հողին ձեզմէ հեռանալուն՝  
 չեմ գիտեր ինչ եղաւ ձեզի, ինչ շուտ աւ-  
 վիճակը բռներ էք, որ ամենեին չէք ճանչ-  
 ցուիր, ոչ ալ իմիններս իզմէն: Բայց ո՛վ  
 տառապեալ ոսկրներս, թէ որ իմինս էք  
 նէ, լսեցէք ու ցնծացէք, լսեցէք հողիին՝  
 որ երկինքէն ձեզի յարութիւն աւետիս կը  
 բերէ. իրաւ հիմա հոս աս մութ փոսիս  
 մէջ ձեզի թողուց զնաց, թռաւ երկին-  
 քը, բայց շատ չանցնիր կու դայ նորէն  
 ձեզի առնելու. անիկայ առաջուրնէ զնաց  
 որ ձեզի ալ տանելու ճամբայ բանայ, տեղ  
 պատրաստէ. մի վախճար, աս ձեր հիմա-  
 կու օտարութիւնը երկան չքշեր, օր մը

ևտրը վաղը ան յախտենական կեանքին  
 դարունին նորէն հողիին գալով մտնելով  
 ձեր մէջ, մէյմէկ նոր փունիկի պէս ձեր  
 մոխիրէն ծնած, թռչունի պէս փոշինիդ  
 թևերնէդ թռթուելով, նոր նոր կելլար կը  
 թռչիք. ահա ասիկայ ձեզի քսողը Ս.ս.  
 տուած մըն է, ան Ս.ստուածը՝ որ ձեր հող-  
 ւոյն ու մարմնոյն ստեղծողը ըլլալով, ինչ-  
 սիկս որ մէկ ամենակարող խօսքովը հո-  
 զին ձեզի մտցուց ու հանեց, նոյնպէս ալ  
 հիմա խոստացեր է նորէն մտցընելու ա-  
 նոր ու յախտեան չհանելու անկէ: Անոր  
 համար «Յնձաացեն ոսկերք իմ տառա-  
 սկեալք»: ահա ասանկ անսուտ խոստմունք  
 մը Ս.ստուծոյ բերնէն, յարութեան ան-  
 մահութեան հաւատքով յուսովը իբր թէ  
 կենդանացընելով մեռած տառասկեալ ոս-  
 կերներս կրկին անգամ կըսկսին ցնծալ  
 տապանիս մէջէն ան ոսկրներս անլեզու  
 անխօս անդդայ անչարժ, ինչպէս թէ լե-  
 զու առած, ոտք ելած, թևաւորուած վեր  
 վեր կոսանուն կը խայտան կը խնտան,  
 կը սլարեն կը թնդան. ասանկ մէկ ղե-  
 դուն լեցուն չափազանց ցնծում մը կը  
 ցուցընեն, ու ինչպէս չընեն, քանի որ  
 ասանկ մէկ երջանիկ բաղդի մը հանդի-  
 սեր են, որուն մահուան ձեռքովը միայն  
 կրցան հասնիլ: որովհետև մարդուս մեռ-  
 նելուն մէջը կորսընցուցածը գտածին

քովը բան չէ . մէկ մահկանացու , ապա-  
 կանելի , անցաւոր կեանքը ձգելով , անոր  
 տեղը անմահ , անապական , յաւիտենա-  
 կան կեանք մը կառնէ . մէկ սուտ , ու-  
 նայն , խաբերայ աշխարհքը թող տալով ,  
 բուն , ճշմարիտ , հարազատ հայրենիքը  
 կը գտնայ , արքայութեան հետ կը փոխէ .  
 անոր համար ասկէց անդին ալ ինչ ու-  
 բախալի բան կրնայ ըլլալ . ուստի խմին  
 սա տառապեալ ոսկրներս որչափ իրա-  
 տունք ունին ցնծալու ուրախանալու . « Եւ  
 ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք » : Ա-  
 հա սա մտածմունքով սա ճշմարտութեան  
 լուսով , մեռնելէս ետքը զոցուած մութ  
 տխուր տապանիս մէջէն հալած մաշած  
 ցանած ցրուած ոսկրներս նորոգուելով  
 ցնծալով , ես հոս , աչքս երկինքը , մէկ  
 ոտքս դերեպմանը , միւսը անմահութեան ,  
 մարմինիս կողմէն մեռածի պէս վերջին  
 աստիճան տրամութեան մէջ , ու հողիս  
 դիէն ինչպէս անմահ ետքի աստիճան ցըն-  
 ծութեան մէջ , կըսկսիմ կանչել սրտիս  
 բորբոքով մը , իրա՛ւ խմին ամէն ունեցածս  
 տուի մահին ձեռքը , ալ բան մը չմնաց  
 տալու , բայց աւելին գտայ անոր մէջ , ո-  
 րովհետեւ հողիս անմահ գտայ , որուն հա-  
 մար ամէնէն անցեր էի , ամէնը տուեր էի  
 ու ամէնը զոհ ըրեր էի , բայց ամէնն ալ  
 նորէն գտայ , որովհետեւ հողիս անմահ



ըլլալովը՝ նոյնպէս մարմինս ալ անոր հետ  
անմահ տեսայ ու դտայ, որով մահիւ մէ-  
ջը անմահ եղայ: Հապա երբ զայ դանայ  
պիտի դիտ ան երջանիկ վայրկեանը, որ  
ատեն աս փափաքս պիտի լեցուի, աս  
բաղձանքիս հասնիմ, առաջ տառապեալ  
ոսկրներս տապանիս մէջէն թնդալով ցըն-  
ծալով, ու ետքը հոգիիս հետ մարմինս ալ  
արքայութեան մէջ ցնծալով ուրախանա-  
լով միշտ ու յաւիտեան:

Ահա ասանկ սուրբ երկնային անուշ ու  
փափուկ մտածութիւններու մէջ թափան-  
ցելով ընկղմելով Գաւիթը, միշտ կենդանի  
հաւատքի ու ամուր յոյսի մը տէր իր սըր-  
տին ու մտքին մէջ, պահ մը կենդանի մար-  
մինի մը մէջ մեռեալ տառապեալ ոսկըր-  
ներ կը տանի, պահ մը անկենդան ոսկըր-  
ներու մէջ անմահ հոգի կը ցուցընէ, ու  
ահա այսպիսի ներաշնչութիւններով նոր  
բանաստեղծական հոգի մը առած, նորա-  
զիւտ լեզուներով կը խօսի ու խօսել կու  
տայ, երբ կերդէ նուագելով, ու կը նուա-  
դէ երգելով Աստուծոյ իր անուշ սաղմո-  
սարանին ան փափուկ ու հոգելից տունը.  
« Լսելի արա ինձ տէր զցնծութիւն և զու-  
րախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տա-  
ռապեալք »:

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՍԿՑՈՒԹԻՒՆ

«Տես Աստուած և ևայես յերեսս օժերոյ քոյ» .

ՍԵՂԾ. 29. 11:

Յախտենական Աստուած՝ որ քուկին անհուն ու ահաւոր ներկայութենովդ վերէն ամէն բանը կը տեսնաս կը նայիս կը դիտես . մարդիկներուն խորհրդոցը ու սրտից քննող ու տեսողն ես ; եղածը ու ըլլալիքը , եկածը անցածը , ամէնը յայտնի են քեզի ու բան մը չէ ծածկուած սուր աչքէդ . որ ըլլալէս ստեղծուելէս առաջ դիտես դիս , տեսերես ու հիմակ ալ նոյնպէս կը տեսնաս . սրտիս ամէն յօժարութիւնը , մտքիս ամէն մտածմունքը , մարմինիս իւրաքանչիւր շարժմունքը ու ամէն մէկ ներսի դրսի տրամադրութիւնները ինչպէս որ նայեր տեսեր էիր , առանկ ալ այսօր կը նայիս կը տեսնաս : Բայց ահա հիմա ես՝ իբր թէ ինչուան այսօր չդիտցածի շտեսածի պէս , նորէն դիս տեսնալուդ կը բաղձամ , նայելու կը հրաւիրեմ՝ գրեզ , տես կրօնմ . «Տես Աստուած» :

Ո՛վ Աստուած , Աստուած ամենատես ամենազէտ՝ որ լոյսերու մէջ բնակած , ան-

մատչելի լոյս ես, քուկին լուսեղէն աթոռէդ, երկնից բարձրութենէդ, ամենասուրբ ու ամենամաքուր աչքդ դէպ 'ի մեր աս վարը մութ աշխարհքը, մթուն մէջը եղողներուն դարձուր նայելու, նայէ տես. բայց ո՞ր բաները արդեօք, ինչ կը զանուի տեսնալու բան մը մեր աս աշխարհքը խաւարին իշխանութեան տակը, որ քեզմէ արժանի ըլլայ նայուելու, քու աստուածութեանդ աչքը հանդչելու վայել առարկայ ըլլայ. ահա իմին մէկ շատ տղեղ ու զարշելի մեղքերու հետ մէկ տեղ՝ ուրիշներուն բիւրաւոր անթիւ անհամար մեղքերը ամալարչտութիւնները՝ որ հեղեղի պէս կը վազէ կերթայ, ծովի նման թաթղեր բոլոր աշխրբիս երեսը բռներ զոցեր է. չկայ արդար մը սուրբ մը զրեթէ՝ որուն վրայ նայիս, հաճիս, ախորժես. վասն զի հողածնածներէն ո՞ր է, ո՞վ է ան մարդը՝ որ երկինքին առջին մեղք գործած չըլլայ, մեղաց տէր ու մեղքի հակամէտ, ու բիւր հազար տկարութիւններու, անկատարութիւններու ու մոլութիւններու ընդունակ նպատակ չըլլայ. կամ ո՞ր կը զանուի մահկանացու մը՝ որ անանկ սուրբ բարի անմահ գործքի մը տէր ըսուի, որուն մէջ պակասութիւն անկատարութիւն մը մը տած չըլլայ: Ահա ո՞վ տէր իմ, մեր խորաններուն վրայէն, քու սլատուոյդ փա-

ուայդ, ՚ի հոտանուշից քեզի ծխուած խուն  
 կերուն մէջը ամէն իժիր երկրաւոր աշ-  
 խարհային մարմնաւոր հոտեր պակաս չեն,  
 անոր համար ինչպէս արժանի կրնան ըլ-  
 լալ աստուածութեանդ աթոռին ելլալու,  
 բարձրանալու. իրաւցընէ ան մեր մեղա-  
 ւոր սրտին պիղծ սեղաններուն վրայ աս-  
 տուածային արգարութեանդ հաշտարար  
 ու մեր մեղացը քաւչարար՝ եղան զոհ մը,  
 ողջակէզ մը՝ որ մինակ քեզի համար ծա-  
 խուած այրած ըլլալով, հրաւիրէ քեզի ա-  
 նուշ բուրմունքին: Ահա անոնց մէջ որ-  
 պիտի զգայական անբանական հոտեր չեն  
 խառնուած, որոնցմէ չես ախորժեր ամե-  
 նեին, երես կը դարձընես, կը զգուիս, կը  
 դարչիս, զուցէ կը վշտանաս, կանպա-  
 տուիս, կը զրգուիս ալ. հապա թէ մեղ-  
 քերնուս քաւութեանը եզած զոհերը պա-  
 տարագները ասանկ են նէ՛ ատելի զգուե-  
 լի աչքիդ, մեղքերնուս համար ինչ ընե-  
 լու ենք: Արդեօք մերին քեզի ըրած բա-  
 րեզործութենէն ո՞րը զուտ ամբողջ կա-  
 տարեալ է. ո՞ր առաքինութիւննիս մոլու-  
 թենէն ազատ, ո՞ր ջերմեռանդութիւննիս  
 առանց պաղութեան: Ահա առաջադրու-  
 թիւններնուս մէջը ծուռ դիտմունքներ,  
 բարեպաշտութիւններնուս մէջը խարէու-  
 թիւններ, պատուիրանապահութիւններ-  
 նուս մէջը զանցառութիւններ, աղօթքնիս



անարդիւն , արցունքնիս խառն , զոհեր-  
 նիս կիսկտուր , որով ամէնը անարժան  
 անվայել զգուելի անհաճելի աչքիդ : Ուստի  
 ահա ու՛մ Աստուած իմ՝ մեր աս աշխար-  
 քիս վրայ եղած բաներէն որը աչքիդ առ-  
 ջին դնեմ՝ որ նայիս , ինչ ցուցընեմ որ  
 հաւնիս , ինչպիսի՞ բան մատուցանեմ որ  
 ընդունիս , հաճիս զմայլիս . իմին որ բա-  
 նիս համար համարձակիմ , ինչ աղէկու-  
 թիւնս առջևդ քշելով ու ես ետեէն կայ-  
 նելով ըսեմ քեզի « Տես Աստուած » տես  
 նայէ , զմայլէ հոռհոռիր , ընդունէ ասի-  
 կայ՝ որ քեզի կու տամ կը մատուցանեմ .  
 վասն զի ահա դուն ամենեկին զոհի պա-  
 տարագի մը հաճութիւն չես ցուցըներ .  
 « Ընդ ողջակէզս և ընդ զոհս ոչ հաճեցար » ,  
 մէկու մը համար չես կանչեր վերէն : « Գա-  
 է իմ սիրելի , դմա հաճեցայ » , ասիկայ ի-  
 մին սիրելիս է , որուն հետ սրտէ՛ի սիրտ  
 կապուած եմ , որ սիրոյս նպատակ ու սըր-  
 տիս ուրախութիւնն է , որուն նայելով կը  
 զուարճանամ , զոհ կըլլամ , կը վայելեմ :  
 Ուստի աս ամենուն , ինչպէս որ ինձի հա-  
 մար ալ չեմ ըսեր ամենեկին որ նայէ տես ,  
 հապա անանկ մէկուն համար այսօր կը-  
 սեմ ու կը հրաւիրեմ քեզի նայելու , որուն  
 միշտ կը յօժարիս , կը բաղձաս , պատ-  
 րաստական ես նայելու , հակմունք , մի-  
 տունն ու տրամադրութիւն ունիս նայե-

լու, որ չես կրնար նայիլ չընել, չես դադրիր նայելէն, չես կրնար առանց նայելու կենալ, ինչպէս որ չես կրնար կշտանալ նայելով բոլոր յաւիտենականութեան մէջ. վասն զի անիկայ է բոլոր բաղձանքիդ ըսկիդքը ու լրումը, սիրոյդ առջին վերջին նպատակը, հաճութեանդ մէկ հատիկ առարկայ. անիկայ է ճշմարիտ ճաճանչ ու ճիշտ սլատկեր մը, հարազատ նկարագիր մը աստուածութեանդ, ինչպէս որ սրտիդ ալ ուրախութիւն, աչքիդ լոյս ու գլխոյդ պսակը:

«Տես Աստուած և նայեա յերեսս օծելոյ քոյ»: Աստուած իմ, տես ու նայէ քու օծեալիդ երեսը. ան օծեալիդ կըսեմ, որ է յաւիտենական բանդ, ծոցածին որդիդ, միածին անդրանիկդ, Յիսուս Քրիստոս, օծեալ մեսիան, օրհնեալ տէր, խորայէլին թագաւորը, զեղեցիկ քան զամենայն որդիս մարդկան: Ահա տեսնալով զանիկայ, գտնելով ընտրելով բիւրերուն մէջը անարատ անմեղ, կատարեալ մէկ հատիկ ազանի մը, ինչուան երկինքը վեր ելած բարձրացած, երեսիդ զիմացը աջ դի նըստած, լոյս ՚ի լուսոյ, սրբութիւն սրբոց, նայէ: «Նայեա». այսինքն՝ նայուածքդ, հայեցուածքդ մինակ անոր տուր, անոր բանեցուր, պտըտցուր, միշտ նայելներդ կրկնէ անոր, նայուածքներդ նորոգէ դէպ

ի անոր, միշտ մի գաղբիր ետ կենար նայելէն, ամէն իժիր երեսդ երեսին, աչքդ աչքին ու սիրտդ սրտին դէմադէմ դան, դիմաւորեն, պատասխան տան: Ասան զի անիկայ է քեզի միայն արժանի նայելութան, որուն նայելուդ կը զուարճանաս ու աւելի նայելուդ աւելի կը զուարճանաս, ինչպէս որ ՚ի յաւիտենից զուարճացար ու յաւիտեան պիտոր զուարճանաս, բոլոր յաւիտենականութեան մէջ անոր անուշ երեսին նայելու դրաղելով քուկին յաւիտենական ուրախութեանդ, երանութեանդ սիրոյդ նիւթ, առարկայ նպատակ ընելով, անոր նայելը, ու նայելով տեսնալը ու տեսնալով զմայլիլ զուարճանալը: « Տես Աստուած և նայեա յերեսս օծելոյ քոյ ». ինչպէս աղանի մը երկինքէն ինձիր թևատարած փարելով անոր զլիսուն վրայ, ինտոր որ երբեմն Յորդանանը լուսաւոր ամպերովդ պատելով զանիկայ, կանչէ՛ աս է իմին մէկ հատիկ սիրելի որդիս, սրտիս հաճութիւնը, ինտոր որ անգամ մը թափոր լեւը. ինձիր հանգիր անուշ հոտերուն բուրմունքներուն մէջը զմայլելու, ծաղկազարդ պսակելու անոր լոպչին զոհը. ահա անիկայ ինչպէս որ Գողգոթային զլուխը ատեն մը, անանկ ալ միշտ ինչուան աշխարհիս վերջը ամենասուրբ հաղորդութեան խորհուրդին մէջ աշխար-

քիս մեղքը բեռնաորում անմեղ դասն  
 Աստուծոյ մըն է, Աբրահամին որդիին  
 պէս խաչին սեղանին վրայ կապած կաշ-  
 կանդած, հիմա նայէ անոր. « Նայեա յե-  
 բեա սօճեւոյ քոյ ». նայէ ան թաղաորա-  
 կան դահ խաչին՝ որուն վրայ ելեր է, ան  
 զեղեցիկ երեսին՝ որ արունով թաթխած օ-  
 ճած է, ան փափուկ մարմինին՝ որ վեր-  
 քով ծածկուած ու ծիրանազոյն ներկած  
 է, ան ձեռքին ոտքին՝ որ դամբրով ծակ-  
 ծկած է, ան նազելի կողին՝ որ նետին  
 բանալովը ջուր ու արխն կը կաթեցընէ :  
 Նայէ ահա աս զոհին՝ որ միշտ քու փա-  
 ռացդ համար ծախուելով հաւանելով ու  
 միշտ կենդանի նորէն մեռնելու կացու-  
 թեան մէջ, անդադար անուշ հոտեր բուր-  
 մունքներ կը հանէ աստուածութեանդ ա-  
 թուին դէպ ՚ի երկինքը, չէ թէ անմեղ Ա-  
 բելին արունին պէս բարկութիւն վրէժ-  
 խնդրութիւն արդարութիւն բողոքելով,  
 հապա սէր, ողորմութիւն, հաշտութիւն  
 ու թողութիւն աղաչելով. չէ թէ ատելու-  
 թեան քինախնդրութեան, հապա հեղու-  
 թեան, խոնարհութեան, համբերութեան,  
 անոխակալութեան օրինակ տալով զինքը  
 մեզի : Ահա իրացընէ Աստուծոյ մը ար-  
 ժանի նայելու բան, զմայելու բուրմունք,  
 հոտհոտալու անուշութիւն, դուարձանա-  
 լու տեսութիւն : Անոր համար « Տես Աս-



տուած և նայեա յերեսս օծելոյ քոյ» : Ո՛վ  
 հայր յախտենական , մի նայիր ալ ինծի՛  
 որ խեղճ ողորմելի մեղաւոր մըն եմ , հա-  
 պա նայէ քու որդիդ ինծի համար խաչին  
 վրայ դամուած . կամ թէ որ նայելու ալ  
 ըլլաս , նայէ անոր վէրքերուն՝ որուն մէջ  
 ապաւիններ եմ , որոնք մեղքերուս ձայնէն  
 աւելի սաստիկ կը հնչեն կը հասնին քեզի ,  
 աւելի ազդու ու զօրաւոր են շնորհքիդ ար-  
 ժանի ընելու , քան թէ մեղքերս վրէժիդ  
 նպատակ ընելու : Ահա իմին մեղքերուս  
 համար քուկին արդարութեանդ կը մա-  
 տուցանեմ անոր արժանիքները վճար-  
 մունքները՝ որ անհուն արդիւնքի տէր ըլ-  
 լալով , բաւական ու չափէն աւելի գոհ կը-  
 նեն կը հատուցանեն , ան չարչարանքե-  
 ըր որ ինծի համար բարեխօս միջնորդ են  
 ատեանիդ առջին , ան խաչին մահը՝ որ  
 դատաստանին կը վճարեն մեղքերուս հա-  
 մար , ան արունք գոհը՝ որ քու երեսդ հաչտ  
 կընեն , ու ինծի անուշ նայելու կը պատ-  
 րաստեն կը հրաւիրեն , ան ազօթքը որ եր-  
 կինքը ելլալով բարձրանալով՝ ինծի հա-  
 մար կը մաղթեն , կազաչեն , կընդունին  
 շնորհք ու փրկութիւն : Ահա ասոնք կը մա-  
 տուցանեմ , կը ցուցընեմ քեզի , որ նայիս ,  
 ասոր կը հրաւիրեմ քեզի նայելու՝ ինծի  
 նայելուդ մէջ . « Նայեա յերեսս օծելոյ քոյ » .  
 կամ ալ իմիններս անոր հետ ու անով կը

մատուցանեմ ամէն աղօթքս, աղաչանքս, ապաշխարութիւնս, արցունքս, զոհս, Յիսուս Քրիստոսին ներուն հետ մէկտեղ, ան թափուած ու թափուելու անդին արունին արժանաւորութեամբը, ան սուրբ վերքերուն միջնորդութեամբը, ան անմեղ մահին արդիւնքովը, ան կատարեալ անմահ զոհին զինովը. Աստուծմէ խնդրելով մեղքերուս թողութիւնը, հոգիիս փրկութիւնը ու յաւիտենական արքայութիւնը:

Ահա ասանկ սուրբ երկնային բարձր մտածութիւններուն թեկն վրայ թռչելով Գառիթ իր մարդարէական տեսանող հոգովը զալիք մեսիան Յիսուս Քրիստոսը արդէն եկած տեսածի պէս, Գողգոթային տեսարանը աչքին առջևը բացուած ու խաչին ներքևը Քրիստոսին արունին կաթիլները ժողվելով, ու աչքին արցունքին հետ խառնելով, հօր Աստուծոյ կը նուիրէ կը մատուցանէ իր մեղքերուն համար, երբ իր ներքին սրբութիւն սրբոցը մտած ու իր մեղաւոր սրտին պատարադին հետ անմեղ Աստուծոյ զառին յիշատակը ընելով, երգով քնարով կերդէ Աստուծոյ իր սաղմոսին ան փափուկ ու անուշ տունը. «Տես Աստուած և նայեա յերեսս օծելոյ քոյ»:

ԵՏՔԻ ԶՐՅՈՒԱԾ ՄԸՆ Ա.Ն.

ՍԱԳՄՈՍԵՐԳՈՒԻՆ

« Որ արարեր զօրոշրիւնս վեճամեճս Աստուած  
 ո՞ն եմանէ քեզ » .

ՍԱԳՄ. Է. 19 :

Սաղմոսերգոյը հողեանս հողոյն զու-  
 չակութեամբը բանին Աստուծոյ մարմնա-  
 լորութեան ու մարդէզութեան խորին խոր-  
 հուրդին վերին յայտնութեանը կանչուած  
 երբ իր ներքին ներաշնչութեամբը անոր  
 վրան իր սուր աչքին մանր բարակ մտա-  
 լորական խորհրդածութիւնները ու հայե-  
 ցողական քննութիւնները զննութիւննե-  
 րը ընելու դբադած ընկզմած , յաւիտենա-  
 կան ստեղծողին դէպ ՚ի մարդուս ձեռքը  
 առած իր անհուն ու անսահման սիրոյն  
 ու բարութեանը հրաշալիքներուն մէջէն  
 չելլալու խորհուրդին անել պտոյտին մէջ  
 վեր վար յափշտակիչ թևերուն մտածու-  
 թեամբը զմայլելու վրայ , պահ մը հայրա-  
 կան անձին անժամանակ յաւիտենական  
 ծնունդը՝ ժամանակաւոր մարմնական կու-  
 սական մայրենի ծնունդին հետ համեմա-

տելով, պահ մը անմահ անչարչարելի Աստուծոյ մը՝ մահկանացու կեանքին շարչարելի ու մեռանելի մարմինին երկու ներհակ ծայրերը մի և նոյն անձին վրայ քովէ քով բերելով բաղդատելով, մէյմը երկինքը ահեղ աստուածութեան երեքսրբեան սրբաբանութիւններուն մէջ քրովբէական աթոռը ելած, մէյմը երկրիս վըրայ նոյն մարդացեալ Աստուծոյ բիւր անարդութիւններուն մէջ շարչարանաց խաշին մահին փայտը ինջած, երբ ասանկ բնութենէ վեր խելքի մաքի անհաս անքննին խորունկին մէջ ընկղմած յափըշտակած, հիացմամբ դողդղալով խորհրդածելուն՝ ահա նայիս ասոնցմէ վեր մէկ ուրիշ նոր կնճիռ մը դէմը հանդիպելուն, նորէն աւելի խոր անյատակ անդունդի մը բռնուելուն, ամենասուրբ հաղորդութեան խորհուրդին ներքին սուրբ քօղը աչքին առջին մէկէն բացուելովը՝ նոր նոր մտածութիւններուն ու անլուծանելի խնդիրներուն մէջը կը դտնուի. ու կարծես թէ նոյն կայծակնամաքուր լոյսին ճաճանչը աչքին շողալուն՝ յանկարծ մէկ ուրիշ նոր Պօղոսի մը պէս յերկրէ երրորդ երկինքը մէկէն սլացած յափշտակելով, իր ետքի աստիճան դարմացմունքէն ապշութենէն բոլորովին ինքիրմէ դուրս ելած թռած, զինքը կորսընցուցածի պէս, ինչ ըսելիքը



չգիտնալով, ու սրտին մէջ զգացածը բեր-  
նին մէջ չսղմեցընելով ու լեզուովը գրեթէ  
չբաւելով բացատրել իմացընել, Աստու-  
ծոյ մարդուս վրայ 'ի գործ գրած անչափ  
ու անեզր սիրոյն ու բարութեանը՝ որ փըր-  
կագործութեան խորհուրդին մէջ, մէյ մըն  
ալ անոր իմաստութեանը ու ամենակարո-  
ղութեանը վերջին ճիգը ետքի լրումը վրայ  
գալովը, որ ամենասուրբ հաղորդութեան  
խորհուրդին յայանութենովը, ուրիշ կեր-  
պով իր ներքին զգացմունքը զարմանքը  
ապշութիւնը չկրնար բացատրել երեան ը-  
նել, բայց եթէ հիացմամբ ու յափշտակու-  
թեամբ մը առ բարձրեալն Աստուած գառ-  
նալով, ահիւ և գողութեամբ սրտին խո-  
րոցէն ասանկ կանչել աղաղակելով մը .  
« Ար արարելը գորութիւնս մեծամեծս Աս-  
տուած, ո՞ նմանէ քեզ » :

Ինչպէս թէ ասանկ մը ըսել գիտէր Աս-  
տուծոյ . ո՞վ Աստուած, մեծամեծ հրաշք-  
ներու սրանչելիքներու, գորութիւններու  
տէր՝ որ ասանկ չտեսնուած չլսուած բնու-  
թենէն վեր մեծ մեծ գործքեր կելլէ ձեռ-  
քէդ, իրաւցընէ ուրիշէ մը չէ, քեզմէ ու  
քեզի միայն կարելի կըլլան առ կերպ հը-  
րաշքները, քու ամենակարողութիւնդ մի-  
նակ կընէ ու կը բաւէ ասոնց ամենուն .  
ահա երկրիս մէջ ու երկինքին վրայ որ  
զին աչքս նեւեմ, ուր պտրախմ, որ բանը

ձեռքս առնեմ, քուկին մէյմէկ զարմա-  
նալի արարուածներդ զործքերդ մէկմէկէ  
վեր աչքիս կը դպչին: « Որ արարեր զօ-  
րութիւնս մեծամեծս Աստուած » . որն որ  
նայելովս չեմ կշտանար, ու չկշտանալովս  
միշտ մտքիս մէջ կորոծամ քննելու ու սըր-  
տիս մէջ կապչիմ զմայլելու, երբէք ա-  
նոնց ծայրը չզտնալով, վերջին յատակին  
չհասնելով, որոնց ամէնը առանձին ա-  
ռանձին մէյմէկ զարմանազան կերպով ու  
սքանչելի եղանակաւ քուկին ահաւորու-  
թիւնդ, վեհափառութիւնդ, խմաստու-  
թիւնդ ու ամբաւ ամենակարողութիւնդ  
լիարերան կը սլատմեն կը քարոզեն ու իբր  
թէ մատով ցոյց կու տան՝ անանկ մենծ,  
հօր, կարող, աննման Աստուած մը ըլ-  
լալուդ՝ որուն նմանը չըլլայ. « Աստուած,  
ո՞ նմանէ քեզ » . որ դադափար չունի, օ-  
րինակ չմօտենար, նմանութիւն չառներ,  
բաղդատութեան չիզար, հաւասարութիւն  
չունենար, ամէն տեսն, ամէն տեղ ու  
ամենուն վրայ մէկ հատիկ միայն է. որ  
ստեղծական բնութիւն մը չկրնար հասնիլ  
անոր, ափիբերան զարմանալէն հիանա-  
լէն իզատ՝ մարդկային կարողութիւն մը  
չբաւեր խմանալ խելք հասցընել անոր ի-  
մաստութեան կարողութեանը, զովելէն,  
երկրազաղութիւն ընելէն, խոստովանելէն  
դուրս: « Որ արարեր զօրութիւնս մեծա-

մեծս Աստուած, ո՞ նմանէ քեզ » : Վասն  
 զի իրաւ աշխարհք մը ոչնչէ ստեղծեալ իր  
 բիր ստեղծուածովը անհամար մանրու-  
 քովը, զարմանալի զարդով կարդով ու  
 կատարելութենովը՝ ամենակատար գործք  
 մըն է արարչագործ ճարտար ձեռքիդ ու  
 զեղեցիկ մատանցդ . Աստուած մը անմար-  
 մին անձնունդ մարմնացեալ կուսական  
 յարգանդէ, անլուր անօրինակ նոր զիւտ  
 մըն է անհուն սիրոյդ . Աստուած մը ան-  
 մահ յաւիտենական, մեռեալ մարդուս սի-  
 րոյն մեղքին համար, վերջին ճիգ մըն է  
 անսահման բարութեանդ : Ահա ասանկ  
 մենձ մենձ գորութեանց հրաշալիքներ ին-  
 չուան հիմայ տեսած դննածներս վրադ, 'ի  
 յաւիտենից մտքիդ մէջը մտածեալ վրճ-  
 ուեալ ու ներսը սրտիդ մէջ պահուած ծած-  
 կեալ զանձեալ մարդեղութեան խորհուր-  
 զին յաւիտենական զարմանալի զազտ-  
 նիքներ են, իրենց ժամանակին յայտնե-  
 լով լրանալովը, որով մարդուս համար յա-  
 վիտենական Աստուածդ մահկանացու  
 մարմնով 'ի նմանութիւն ծառայի կը տես-  
 նուիս, ու անժամանակ հօր ծնունդդ ժա-  
 մանակով կուսական մօր ծնունդ մըն ալ  
 վրայ կառնես . 'ի սրովբէս բազմեալ և 'ի  
 հրեշտակաց երկրարագեալդ, իբր անկա-  
 րող տկար կապեալ կաշկանդիս խաչին  
 վրայ, անմահ սուրբդ Աստուած՝ երանու-

Թեան հաճութեան նպատակ, արեամբ  
 թաթաւելով վէրքի խոցի մէջ կը մեռա-  
 նիս: Ահա աս ամէն դարմանալի հրաշք-  
 ներուն զիդուածքը կըսեմ, արդէն տեսած  
 զննած ըլլալովս, զուցէ ըսեմ նոր չէին  
 ինծի այսօր. որովհետեւ առաջուրնէ դէպ'ի  
 մարդուս սկսած արծարծած վառվառն  
 սէրդ բարութիւնդ ձգեր բերեր հասցու-  
 ցին քեզի աս սահմանին, աս հրաշալի  
 զիտերը գտնալուն, սիրոյդ միջոցով մար-  
 դը ստեղծելովդ ոչնչէ, ու բարութեանդ  
 ձեռքովը նորաստեղծելով վերանորոգե-  
 լով մեզքէն: Բայց հիմա ասչափէն ետքը,  
 ասոնց ամենուն վրայ մէյմըն ալ ամենա-  
 սուրբ հաղորդութեան խորհուրդին զիւ-  
 տին աս նորահրաշ տեսիլքին կանչուած  
 հրաւիրուելուս, որ վերջին ճիգ ու ետքի  
 լրումն կու տայ ամենակարողութեանդ,  
 խորհուրդ մը՝ կըսեմ այնպիսի ամենա-  
 բարձր ամենափափուկ նուրբ սուրբ, ո-  
 թով առջի արարչագործութեան ու փրկա-  
 գործութեան խորհուրդները մէկ գերա-  
 զանց գերօրինակ ու տևական եղանակաւ  
 ու անճառելի կերպով մը կը նորոգես, կը  
 հաստատես, կը միացընես, կը բովանդա-  
 կես ու ինչուան աշխարհիս վերջը կը շա-  
 րունակես. որով ինչպէս թէ, թէ որ ին-  
 չուան հիմա քու սիրոյդ ու բարութեանդ  
 անհնութենով ու անչափութենովը չէ նէ,



դոնէ անոր ամենակարողութենովը ու զօ-  
 րութենովը նոյնը գերազանցապէս մը յա-  
 րատեւելովդ, յաղթես վերջապէս մարդու  
 անզղայութեանը յամառութեանը ու ա-  
 պերախտութեանը, հաւատացեալի աչքին  
 յայտնելով զքեզ անոր մէջ ու ցուցնելով  
 քեզի անոր մօտեցողին ճշմարտապէս Աս-  
 տուած և մարդ մը՝ որ միշտ անմահ ու ժա-  
 մանակով մահկանացու, միշտ երկինքը  
 կենդանի հօրը համար, ու մինչև ՚ի կա-  
 տարած աշխարհի զոհ եղած մարդուն հա-  
 մար, միշտ տուեալ մեզ առանց պակսե-  
 լու, շատ անգամ բաշխեալ ՚ի մէջ մեր ա-  
 սանց հատնելու, օր ըստ օրէ ՚ի սէր ան-  
 մահին պատարազեալ խորաններուն վրայ,  
 կենդանի ըլլալով նորէն մեռնելու զոհի  
 կացութեան մէջ ՚ի քառութիւն մեղաց :  
 Մարմին մը առանց տարածութեան՝ որ  
 մի և նոյն ժամանակ անչափ տեղեր ըլլայ,  
 որչափ սրբազործեալ նշխարքներ ու անոր  
 փշրանքներ կան, զոյացութիւն մը հացի  
 ու ջուրի փոխադրեալ ՚ի մարմին և յարիւն  
 Քրիստոսի, առանց ենթակայի սլաւահ-  
 մունքները սլահելով, նոյն զոյացութեան  
 զործքերը արտադրելովը : Աստուծոյ մը  
 անհնութիւնը՝ որուն քիչ է աշխարհքը,  
 չբառեր երկինք մը, աչքի տակ չլինալու  
 չափ միջոցին մէջ՝ ամփոփած սղմուած .  
 վեհափառութիւն մը նուաստ տեսահնե-

րուն մէջ ծածկուած պահուած, հաւատքի արժանի նիւթ ըլլալու. աստուածութիւն մը մարմինի մը ներքեւ դրած, հացին ու գինիին տեսակին տակը, կերակուր ու ըմպելի ըլլալու յարմար. կարողութիւն մը աստուածային տկար մարդուն կարողութեան ձեռքը յանձնուած, վայրկենի մը մէջ ու մէկ խորհրդական բառի ուժով մը երկնքէն երկիր կանչուելով, ասչափ հըրաշքներու լրումն տալու:

Ահա Աստուած իմ՝ ասանկ մենձ մենձ գործադրութիւններ գորութիւններ մը բընութեան ամէն օրէնքներէ վեր, յաղթած ու դերադանցած ամենուն, որ ամենասուրբ հաղորդութեան խորհուրդին մէջ կը դաւանիմ կը հաւատամ, կերկրպագեմ, քուկին ամենամեծ գորութեանդ զիդուածքը են, որ ասկից անդին չըլլայ ու չկրնայ ըլլալ, անհաս անպատում, որ չկրնար իմացուիլ բացատրուիլ, ամենակարողութեանդ վերջին լրումը ըլլալով. իրաւքնէ անբաւ հրաշքներու զումար մը, զիդուած մը, կոյտ մը, մանաւանդ՝ թէ սքանչելիքներու սքանչելիք, շնորհքներու հրաշք ըսուելու արժանի, անոր համար ալ հոս հիմա չափազանց հիացմամբ ու ներքին դմայլմամբս ինձի ալ կանչելու տեղ. « Որ արարեր գորութիւնս մեծամեծս, Աստուած, ո՞ նմանէ քեզ »: Բայց ինչուան

Հոս տեղ քեզի երգածներս Աստուած իմ՝  
 սաղմոսերգու մարգարէիս իր յափշտա-  
 կութեանը մէջ տեսանող հոգւոյն սրատես  
 մտածութեանը թռոյցին խորախորհուրդ  
 իմաստները ու զեղեցիկ զիւտերն են, ի-  
 րաւցընէ անոր պէս փափուկ ազնուական  
 սիրալիր սրտի ու կատարեալ ճշմարիտ  
 հաւատացողի մը Աստուծոյ, արժանի ու  
 վայել խորհրդածութիւններ. բայց Հոս  
 տեղ անկէ ինծի ալ յարմար կտոր մը մաս  
 մը հանելու նկատմունքով դիտելուս, ին-  
 ծի պէս անհաւատ անզգայ յամառ ապե-  
 րախտի մը բերնին վայել խորհրդածու-  
 թիւններ մըն ալ ձեռք կառնեմ ընելու,  
 ահա նոյնը նորէն կանչելովս քեզի. « Որ  
 արարեր զօրութիւնս մեծամեծս, Աս-  
 տուած, ո՞նմանէ քեզ » :

Իրաւ Աստուած իմ՝ քուկին զօրութիւն-  
 ներդ ասանկ մենձ մենձ բաներ են՝ որուն  
 որչափ սքանչանայ ապշի յափշտակի մարդ  
 իրաւունք ունի, վասն զի ահա ասանկ մէկ  
 հատիկ բլլալովդ, չունիս քեզի ուրիշ հա-  
 ւասար ու նմանող մը: Բայց միթէ անկէ  
 քիչ դարմանալի է, քիչ արմննալու նիւթ  
 մըն է իմին անզգայութիւնս կամակորու-  
 թիւնս ալ, որ ասչափ հրաշքներուդ լոյ-  
 սին մէջ որուն հաւատքիս աչքովը ամէն  
 օր ամէն ատեն ականատես, աս քանի  
 անգամ երկնային հացիդ աստուածամար-

մին պատարը ճաշակած , կայծակնամա-  
քոր կրակի սրտիս մէջ առնելով , ու որ-  
չափ հեղ անապակ արեան բաժակիդ բե-  
րանս դրած , ասանկ կոյր , ցուրտ ու ծա-  
րաւի մնացեր եմ քու սիրոյդ , որ մըտ-  
քովս հաւտալէն ետքը քուկին աստուա-  
ծային ներկայութեանդ աս սուրբ խոր-  
հուրդին մէջ , սրտովս այսպէս անշարժ  
անդդայ եղեր կեցեր եմ դիմացդ ասչափ  
մեծամեծ դօրութիւններուդ ուժին : Հա-  
պա ո՛վ Աստուած իմ՝ այսբան հրաշքնե-  
րէդ ետքը , նոր հրաշք մըն ալ պէտք կըլ-  
լայ քեզի ընել այսօր , յաղթելով շնորհք-  
ներդուդ ուժովը իմին անդգայութեանս ու  
ստուոցեալ քարացեալ սիրտս աստուած-  
սիրութեան բոցովդ հալեցընելով կակուղ-  
ցընելով , իմին կամքիս հակառակ վերցը-  
նելով մէջ տեղաց ան ամէն արդելքները ,  
որ աս կերպ հրաշքներուդ դիտմունքները  
դրդմունքները անդգալի կընեն ինձի :

Տուր ինձի ո՛վ տէր՝ սաղմոսերգոյ մար-  
դարէիս նոյն հաւատքը , նոյն սէրը , նոյն  
յարդը երկրպագութիւնը , զղջմամբ ար-  
ցունքով խորին խոնարհութեամբ սրտի ,  
որ սքանչելի ճարտարութեամբ քեզի վայ-  
ել հրաշաւոր տաճար մը շինեմ սրտիս մէջ  
ու երգով պարով սաղմոսերգութեամբս ,  
ինչպէս որ ահիւ և դողութեամբ առնեմ  
դնեմ հանդէսընեմ աս թաղուցեալ մա-



նանայիդ , երկնային հացիդ , ծածկեալ  
 դանձիդ տապանակը սրտիս խորանին վը-  
 րայ , առաքինութեանց բարեգործութեանց  
 ծաղիկներուն , ու մահացուցմունքներուս  
 զոհներուս բուրմունքներուն անուշ դուար-  
 թարար ու հաճոյական հոտերուն մէջ , որ  
 ինչպէս հիմակու արսորի ճորիս վրայ հա-  
 նապազօրեայ կերակուր ու ըմպելիքս կըլ-  
 լաս , սնուցանելու ինձի հոգևորապէս ու  
 չարչարանացդ արդիւնքովը աճեցընելու  
 ՚ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի ,  
 անանկ ալ օր մը մահիս ատեն յերկրէ եր-  
 կինք ճամբորդութեանս՝ թոշակ ու առաջ-  
 նորդ ըլլաս արքայութեան , ինչպէս որ  
 անկից անդին ալ դէմ՝ յանդիման տեսու-  
 թեամբդ ու վայելմամբ , լիութի հատուց-  
 մունք ու երանութիւն յափտեանս՝ յափ-  
 տենից :

Ե Օ Թ Ը Օ Ր Ս Կ Ա Ն

ՍՍՏՈՒՍԾՍՅԻՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

« Եօրև անգամ յառաջ օրհնեցից զքեզ փասե իրաւանց և արդարութեան քո » .

ՍԱՂԹ. ԾԺԸ. 164 :

Դաւիթը՝ որուն ամէն օր զիշեր ցորեկ օրհնութեամբ ու գոհութեամբ առ Աստուած լիք է բերանը ու բերնին հետ միտքը ու սիրտը, Աստուծմէ ամէն իժիր տեսած ու ընդունած անթիւ ու անհամար բարերարութեանցը փոխարէն, մանաւանդ իրեն անհուն անսահման արդարութեանը համար, որ անանկ ամենասուրբ ու ամենակարող ու ամենասիրելի ստեղծող տէր մը, Աստուած մը ըլլալովը, ամէն ատեն ամէն տեղ ու ամենուն սիրոյն ու պատուոյն իրաւամբ ու արդարութեամբ արժանի է ու միշտ իրաւունք ունի ու ունեցեր է մարդիկներէն պահանջելու փոխադարձ շնորհակալութիւններ ու գոհութիւններ : Աս ամէն կողմանէ մարդարէն թէպէտ բոլոր օր բոլոր զիշեր բնաւ պակաս չընել առ Աստուած իր ներքին սրտին մահացուցմունքներուն

նուէրները ու արտաքին բերնին մաղթանք-  
 ները աչքին արցունքին ու բազկատարած  
 համբարձմունքներուն հետ, օրուան մէջ  
 ամէն ըսածը ըրածը, ներսի դրսի տրա-  
 մադրութիւնները, բնական ու դերբնա-  
 կան ներգործութիւնները, մի միայն Աս-  
 տուծոյ իրաւանցը ու արդարութեան պատ-  
 տոյն ու փառացը դիտելով ու մատուցա-  
 նելով. բայց ՚ի վերայ այսր ամենայնի դեռ  
 ըստ բաւականին սիրտը չհանդէսելով, ինչ-  
 պէս թէ իր առ Աստուած պարտաւորու-  
 թիւններուն մէջը ինտոր որ պէտք է նէ՛  
 չըրածի պէս, միշտ աւելին ու աղէկը ընե-  
 լու փափաքով եռալով եփելով սրտին  
 մէջ, օրուան մէջ կանոնաւոր ժամ, ատեն  
 սահմաներ է, որ ուրիշ ամէն զբաղմունք-  
 ներէն ձեռքը քաշած, Աստուծոյ մինակ  
 պարապի, խելքը միտքը բոլորովին անոր  
 տայ, անոր հետ կենցաղավարի, զանի-  
 կայ մտածէ, սիրէ, օրհնէ, գովէ ու փա-  
 ռարանէ: Ահա աս մտքով օրուան մէջ  
 մասնաւորապէս եօթը ժամանակ ինչպէս  
 անփոփոխելի կանոն մը զրած է իրեն, ո-  
 րուն մէջ գեղեցիկ կարգով մը ետեւէ ետեւ,  
 ինչպէս անուշից խունկ մը, իր սրտին սե-  
 ղանէն վեր երկինքը կը թռցընէ կը հաս-  
 ցընէ աղօթքի ու մտածութեան բուրմունք-  
 ները, արշալոյսին իր շնորհակալութիւ-  
 նը, առտուան դէմ իր հաւատքին, ա-

րեադալին իր յոյսին , կէս օրը իր սիրոյն ,  
 իրիկուան դէմ իրեն զղջմանը , խաղաղա-  
 կան ժամուն՝ նուէրին , ու հանդստեան ա-  
 տեն՝ իրեն յանձնարարութեանը մատուց-  
 մունքները , սրով բոլոր օրը , ինչպէս Ս.ս-  
 տուած պարզներ է իրեն , նոյնպէս լրու-  
 թեամբ սրտին ամբողջապէս Ս.ստուծոյ կը  
 դարձցրնէ , անով սկսելով օրը ու անով  
 վերջացրնելով : Ու ահա աս է իրեն օրուան  
 մէջ եօթը հեղ օրհները զՍ.ստուած , իրեն  
 իրաւանցը ու արդարութեանը համար .  
 բայց թէ որպիսի օրհնութիւններ են իրեն  
 երգածները , ահա հոս տեղ հիմա՝ ինչ-  
 պէս թէ ես ալ անոր ետեւէն իր առանձ-  
 նութեան սենեակը մտած , քովը կայնա-  
 ծի պէս , լեզուս լեզուին , բերանս բերնին ,  
 սիրտս սրտին յարմարցրնելով , կը լսեմ  
 անկէ ու կերպեմ անոր հետ ան եօթը օրհ-  
 նութիւնները , ըստ այնմ . « Եօթն անգամ  
 յաւուր օրհներցից դքեղ վասն իրաւանց և  
 արդարութեան քո » :

## ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Շ Ն Ո Ր Հ Ս . Կ Ս . Լ Ո Ւ Թ Ե Ա Ն

Առջի անգամ արչալոյսի ժամուն կօրհ-  
 նեմ դքեղ Ս.ստուած իմ , խմին շնորհակա-  
 լութեանս մատուցմունքովը : Շնորհակալ



կըլլամք քեզի ինչուան հիմա աս օրուան  
 օրս ինծի ըրած անթիւ անհամար երախ-  
 տեացդ ու բարերարութիւններուդ՝ մէկ-  
 մէկ միտքս բերելով զանոնք, ու անոնց  
 մենծութեանը ու շատութեանը հետ յի-  
 շելով միանգամայն իմին անոնց անարժա-  
 նութիւնս ու ասլերախտութիւնս ալ: Ար-  
 խոստովանիմ որ ամէնը քուկդ է, քենէ  
 եկած են ինծի, որոնք ամէն ատեն առա-  
 տութենով անձրեւեցիր վրաս, աստուա-  
 ծային նախախնամութեամբ ու անհուն ո-  
 զորմութեամբդ ամէն իժիր հոգալով, խը-  
 նամելով, ու կառավարելով զիս. վասն  
 զի քուկին ձրի պարզեղ է, ան ստեղծ-  
 ման պարզեղ որով մարմինս հողէն առած  
 կենդանարար հողիդ մէջը խառնած երե-  
 սիդ պատկերքին բանաւոր ու անմահ ըս-  
 տեղծեցիր: Քու առանձին պարզեղ է,  
 շատերուն չըրած, որ աս ճշմարիտ սուրբ  
 հաւատքին ծոցը ծնար զիս քրիստոնեայ  
 ծնողքներէն, Յիսուս Քրիստոսի աս-  
 տուածորդուոյդ արունով ու խաչի մա-  
 հուամբը սատանային գերութենէ առած,  
 որդիական ազատութեան մտցընելով, ե-  
 կեղեցուց եօթը խորհուրդները ինչպէս աղ-  
 բիւր մը սահմանելով ինծի՝ մեղաց լուաց-  
 ման ու շնորհքի նորոգութեան: Քուկին  
 մասնաւոր պարզեղ է՝ որ քանիներուն չը-  
 բիր, որ մեղքերովս շատ անգամ դժոխ-

քին արժանի ըլլալով, ինչպէս թէ ձեռքդ  
երկրնցուցած դուրս հանեցիր անկէ, ան-  
հուն ողորմութենովդ ապաշխարութեան  
ատեն տալով յորդորելով ու կրկին ար-  
քայութեան որդի ընելով: Ա՛րջապէս քու  
կին մենձ պարզեներուդ մէկն ալ ասի-  
կայ է, որ նոր բարերարութենով մը դի-  
չերուան յանկարծական մահուանէ, ու  
անով գուցէ յաւիտենական մահէն ալ պա-  
հելով դիտ, առտուան լոյսը նորէն աչքիս  
կը ծագես, ինչպէս որ ուրիշ անգամ, ա-  
նանկ ալ այսօր ամէն ճրի նախախնամու-  
թեանդ պարզեները, օգնութիւնները,  
չնորհքները նորէն խոստանալով ինձի,  
որոնցմով ամէն ատեն, ինտոր որ աս օրս  
ալ կը պարտաւորես դիտ լեցուն բերան  
օրհնութիւններ, գոհացողական ողջակէզ-  
ներ մատուցանելու խրկելու վեր երկինքը  
աստուածութեանդ աթոռին, ստեղծողիդ  
ասօր նոր ստեղծմանը պարզեին, նոր շը-  
նորհակալութեան ու նախապատուու-  
թեան պաշտամունքովս:

Ա՛հա Աստուած իմ ասոնց ամէնուն հա-  
մար շնորհակալ կըլլամ, բայց շնորհակալ  
կըլլամ բոլոր սրտով ու բերնովս, անանկ  
որ գոհութեանս օրհնութիւնները սկսելուս  
սիրտս բերնիս օգնութեան կու դայ, ճըշ-  
մարիտ ու անկեղծ երախտադիտութիւնս  
ցուցընելու. վասն զի առաջ սրտիս մըտ-

քիս մէջ կիսհանամ քու պարզեաներուդ յար-  
 գը մենծութիւնը ու խմին անարժանու-  
 թիւնս անոր, ու ետքը բերանս քեզի փառք  
 կու տայ ու օրհնութիւններ կը բղխէ, ա-  
 նոր համար առաջ սրտով ու ետքը բեր-  
 նովս շնորհակալ կըլլամ որ երբոր ես քե-  
 ղի չէի յիշեր, չէի սիրեր, անտարբեր էի  
 քու սիրոյդ, դուցէ դքեզ մուցեր էի, կա-  
 տէի, դուն զիս յիշեցիր, սիրեցիր, չմո-  
 ցար ամենեին, բարութիւնը միշտ առաջ  
 քեզմէ սկսաւ ինծի, ու իզմէ շնորհակա-  
 լութիւնը քեզի միշտ ետքը մնաց, ապե-  
 րախտութիւնս քեզի ամէն բանին մէջ ա-  
 ռաջին եղաւ ու երախտագիտութիւնս ա-  
 մենէն վերջին. որուն համար ես նորէն  
 շնորհակալութեան մատուցմունքներս կը-  
 նեմ կը կրկնեմ կը նորոգեմ, ու բոլոր  
 կենացս մէջ չեմ զազրիր դքեզ օրհնե-  
 լէն, դովելէն ու փառաբանելէն, ինչպէս  
 որ հիմա այսօր, անանկ ալ միշտ, յաւի-  
 տեանս :

### ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀՍ.ԻՍՏՈՅ

Երկրորդ անգամ առտուան ժամուն  
 կօրհնեմ քեզի, ով Աստուած իմ, հաւատ-  
 քիս մատուցմունքովը: Կը հաւատամ մէկ-  
 հատիկ ամենակարող ամենակատարեալ  
 արդար ճշմարիտ Աստուծոյ մը՝ որ երկին-

քը ու երկիրը ոչնչէն ստեղծեց . ինչպէս  
 որ զիս ալ , որ սկիզբս վերջս , ծնածս , ու  
 մեռածս զիսէ , բոլոր կեանքս շունչս , ա-  
 մէն ըլլալս իր ձեռքն է , մտքիս ամէն ծա-  
 ծուկը , ու սրտիս ամէն զիտմունքը . ըրա-  
 ծըս ընելիքս տեսեր է զիսէ : անանկ որ  
 բնաւ երբէք մէկ ատեն , մէկ տեղ , մէկ  
 կերպով մը իր աչքէն չեմ կրնար պահուիլ  
 հեռանալ , միշտ անոր ներկայութեանը  
 առջեր կեցեր եմ կը պաշտիմ . որուն ար-  
 դարութեանը հետ ողորմութիւնն ալ ան-  
 հուն անսահման է , որ իմին աղէկ կամ  
 զէջ գործքերուս համաձայն կամ արքայ-  
 ութեան մէջ երջանկութիւն , կամ դժոխ-  
 քին մէջ ապերջանկութիւն պիտի ըլլայ :  
 Ահա ասանկ ամենակարող ստեղծող մը ,  
 արդար դատաւոր մը ու մէկհատիկ Աս-  
 տուած մը ունիմ : Ար հաւատամ Յիսուս  
 Քրիստոսի ճշմարիտ Աստուած և մարդ ,  
 բաղումողորմ , հեզ . խոնարհ , համբերող  
 երկայնամիտ , մարդիկները սիրող ու մար-  
 դիկներուն համար մեռած . որ ինծի հա-  
 մար մարդ եղաւ ծնաւ ու մեռաւ , իմ փր-  
 կութեանս համար արունին ինչուան ետ-  
 քի կաթիլը թափեց , խաչին մահը յանձը  
 առաւ . որ իմ անուշ հայրս , բարի հո-  
 վիւս , զթած փրկիչս միջնորդս բարեխօսս ,  
 մէկհատիկ Քրիստոսս է : Ար հաւատամ  
 մէկ սուրբ ընդհանրական ու առաքելա-



կան եկեղեցին՝ որ շխաբեր ու շխարտիր ,  
 ճշմարիտ ուղիղ հաւատք է , գլուխը միշտ  
 մէկ , վարդապետութիւնը սուրբ , աշխար-  
 քիս ամէն տեղ ու ամէն ազգին մէջ կը  
 պահուի կը դաւանուի . որ Քրիստոսէն կը-  
 տակ եղած , առաքեալներէն քարոզուած ,  
 մարդարէներէն պատմուած , հայրապետ-  
 ներէն կնքած ու մարտիրոսներուն արու-  
 նովը հաստատուած է : Ահա ասոնց ամե-  
 նուն կը հաւտամ , բայց կը հաւատամ մէկ  
 կատարեալ մտքով առողջ խորհրդով ,  
 հաստատ սրտով ու կենդանի հաւատքով .  
 բնաւ մէկուն վրայ երկրայութեան տարա-  
 կոյս չունենալով , ամենուն գլուխ ծռելով ,  
 ամէնը ամբողջ դաւանելով , բոլոր խօսքս ,  
 մտածմունքս , դատմունքս անոր ներքե  
 դնելով , ամէն գործքս վարմունքս անոր հա-  
 մաձայնեցընելով , ընթացակցելով , պատ-  
 բաստ ըլլալով հաւատքիս վրայ բոլոր ուժս ,  
 կարողութիւնս , շունչս , կեանքս դնելու ,  
 արունս թափելու , մեռնելու , գոհ ըլլա-  
 լու , աս մտքի վրայ միշտ ապրելով , ասանկ  
 ալ օր մը մեռնելով :

## ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՅՈՒՍՈՅ

Երբորդ անգամ արեւազալին ժամուն  
 կօրհնեմ . քեզի , Աստուած իմ , իմին յոյսիս  
 մատուցմունքովը , կը յուսամ ամէն բա-

բութեան ողորմութեան շնորհաց աղբիւ-  
րին ստեղծող Աստուծոյ մը, խոստմունքին  
մէջը հաւատարիմ, ողորմութեան մէջ ա-  
ռատ, նախախնամութեան մէջ խմաստուն.  
միշտ բարերար, օգնիչ, խնամող. որ իր ձեռ-  
քին ստեղծուածը երբէք չմոռնար, երեսի  
վրայ չձգեր, խնամքէն դուրս չթողուր. կը  
հոգայ, կը մտմըտայ, կը լեցընէ կը լիա-  
ցընէ, միշտ կը ներէ, կողորմի, կը քաւէ,  
շնորհքէն դուրկ չձգեր, օգնութենէն դուրս  
չընէր, աղօթքին կը լսէ, ամէն խնդիրքը  
կուտայ: Կը յուսամ Յիսուս Քրիստոսին՝  
որ բոլորովին անուշութիւն, ողորմութիւն,  
գութ է, որ մարդկանց փրկութեան հա-  
մար բոլոր արիւնը թափեց, որ խմին մեղ-  
քերուս պատճառաւ ձեռքին ոտքին սրբ-  
տին վրայ վէրքեր առաւ, զինքը ինծի փո-  
խարէն ըրաւ Աստուծոյ արդարութիւնը,  
որ ամէն օր անմահ պատարագներուն զո-  
հովը ու անդին արունին արդիւնքովը դար-  
ձեալ կը քաւէ, կը ներէ, թողութիւն ու  
շնորհք կընդունի ինծի համար երկնաւոր  
հօրէն: Ահա ասոնց ամենուն կը յուսամ,  
բայց կը յուսամ մէկ կենդանի ամուր հաս-  
տատ յուսով մը, մէկ խաղաղ անհող ա-  
պահով վիճակի մէջ. ամէն իժիր ու ամե-  
նուն մէջ իր աստուածային նախախնա-  
մութեանը յանձնուած, անոր տէրութեան  
կառավարութեան ներքե դրած ես զիս,

անանկ որ ամենևին վախ մը չկրնար զիս  
 ետ ընել անկէց, ուժ մը անկէց փրցընել,  
 մեղք մը անոր սղորմութենէն յոյսս կըտ-  
 րել, միշտ անոր բեռուած կապուած կաշ-  
 կանդած. ամէն նեղութեանս կարօտու-  
 թեանս, տկարութեանս հիւանդութեանս,  
 անոր դիմելով, անիկայ օգնութիւն կան-  
 չելով, անկէց ճար դտնելով, հիմա ու ետ-  
 քը կեանքիս ու մահիս ատեն անհող ա-  
 պահով ըլլալով զիս չձգելուն:

### ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ

Չորրորդ անգամ օրհարսակին ժամուն  
 կօրհնեմ քեզի, ով Աստուած իմ, իմին սի-  
 րոյս մատուցմունքովը: Աը սիրեմ քեզի  
 ամէն բարութեան, կատարելութեան, գե-  
 ղեցկութեան, երանութեան պատճառը.  
 որ վեհափառութենովդ, լուսովդ երկինքը  
 կը լեցընես, հրեշտակները, սուրբերը ըզ-  
 մայլեցընես կը յափշտակես, որ սիրտս  
 մինակ գոհ կընես կը կշտացընես. անանկ  
 մը որ անկէ իզատ մէկ սիրելի մը չունիմ,  
 չեմ կրնար ունենալ, անով ամէն ցան-  
 կութիւնս բաղձանքս կը լեցուի, ուրախու-  
 թիւնս խնտումս կը կատարի, կը լրանայ.  
 որ սրտիս մէկհատիկ նշանածը, սիրոյս  
 մի միայն նախատակը, անուշ բարեկամս,  
 փափուկ փեսաս, սիրելի Յիսուս, Աս-

տուածս է : Ահաւասիկ կը սիրեմ անիկայ ,  
բայց կը սիրեմ յամենայն օրտէ , յամե-  
նայն մտաց , յամենայն դօրութենէ . ամէն  
բանէն վեր , մէկ կատարեալ , ամբողջ ,  
վառուն , սաստիկ սիրոյն բոցովը . անանկ  
որ , ամենեկին մէկ գեղեցկութիւն մը ան-  
կէց զիս չպագեցընէ , մէկ բռնութիւն չխը-  
լէ չզատէ զիս անկէց . Յիսուսին սէրէն  
դուրս ամէն անուշութիւնը՝ լեզիութիւն , ա-  
մէն ուրախութիւնը՝ տրտմութիւն կը դառ-  
նան ինծի . ու անոր հետ ամէն դժուարու-  
թիւնը վիշտը տառապանքը՝ խնտում ու  
վայելմունք կու գան , անոր սիրուն համար  
խոնարհիլը՝ բարձրանալ , անարգուիլը՝  
սրատի , խաչ . քաշելը՝ փառք կը համարիմ  
ինծի , ասանկ ամէն օր , ամէն ատեն կեան-  
քիս ամէն վայրկեանը անոր սիրուն ամ-  
բողջ դոհ մը երելով վառուելով :

## ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂԶՄԱՆ

Հինգերորդ անգամ իրիկուան ժամուն  
կօրհնեմ քեզի , ով Աստուած իմ , իմին  
զղջումիս մատուցմունքովը : Ար զղջամ կը  
ցաւիմ կեանքիս բոլոր մեղքերուն վրայ՝  
անոնց ծանրութիւնը , մենծութիւնը , շա-  
տութիւնը միտքս զալուն . կը խոտիմ  
կը սասանիմ , որ ինչ լրբութենով երկըն-  
քին առջին յանդդնեցայ դործելու դա-



նոնք, ինչ երեսով ստեղծող Աստուածս  
 քամահեցի սրղողցուցի, ինտոր սիրելի  
 Յիսուսս վշտացուցի, անարգեցի չճանչ-  
 ցայ, ուրացայ, հաղար անգամ մեռցրնել  
 ուղեցի: Ար գղջամ կը ցաւիմ, կը կըս-  
 կծամ, կուլամ ան անհնադանդութիւննե-  
 րը, ստահակութիւնները, ասերախտու-  
 թիւնները՝ որ ըրի, ան գէշ բաղձանքները  
 մտածմունքները՝ որ բանեցուցի, ան հը-  
 պարտութիւնները, ամբարտաւանութիւն-  
 ները, քինախնդրութիւնները, ատելու-  
 թիւնները՝ որ սրահեցի, ան անվայել խօս-  
 քերը ըսուածները, հայհոյանքները՝ որ  
 բերնէս հանեցի, ան դայթակղութիւննե-  
 րը, չար օրինակները՝ որ ուրիշին տուի,  
 ան մեղանշական կամքերը, գործքերը՝ որ  
 սովորութիւն ըրի, ան սուրբ պատուի-  
 րանքները, շնորհքները, խորհուրդները՝  
 որ գէշին գործածեցի, կոխկռտեցի, ան  
 վիճակիս կոչմունքիս պարտաւորութիւն-  
 ները, բարի գործքերը՝ որ գէշ վախճանով  
 մարդկային նկատմունքով ծուլութենով,  
 դանցառութենով, գաղջութենով կիսկը-  
 տուր ըրի, ասանկ կեանքիս ամէն ատեն  
 ամէն օր մէկ ստահակ, անհնազանդ ան-  
 առակ որդի մը եղայ երկնաւոր հօրս, ու  
 Յիսուսիս սրտին կսկիծներ տալով վէր-  
 քերը նորոգելով, կրկին կրկին խաչ հա-  
 նեցի մեռցուցի: Ահա ասոնց ամենուն վը-

բայ կը զղջամ. բայց կը զղջամ, մէկ վի-  
րաւորած, ցաւած, տրտում սրտով, լեզի  
աչքի արցունքով մը, մէկ ետքի աստիճան  
ներսէ ներս սիրտբանուկ սիրտմաշուք  
կակիծով մը երելով, հատնելով ներսէս,  
ամէն ապաշխարանքին պատիժին արժա-  
նի տեսնալով զիս, ամէն արհամարհու-  
թեան, խոնարհութեան, վշտակրութեան  
նպատակ դնելով ինծի: Կը զղջամ հաս-  
տատ ամուր, ամբողջ անկեղծ առաջա-  
դրութենով մը՝ մեղքէն ետ կենալու, ալ  
չգործելու, անանկ որ աւելի յօժար սրտով  
յանձն առեր եմ բիւր անդամ մեռնելը,  
քան թէ զանոնք մէյմըն ալ գործելը: Կը  
զղջամ չէ թէ արքայութեան որդիութենէն  
զրկուելով, զժոխքին գերութեանը արժա-  
նի ըլլալուս, հասլա մի միայն բացարձա-  
կապէս ու պինտ առաջ զՍատուած վշտա-  
ցընելուս սրդողցընելուս կորսնցընելուս  
ցաւէն:

### ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐՄԱՆ

Վեցերորդ անգամ խաղաղական ժա-  
մուն կօրհնեմ քեզի, ով Սատուած իմ, ի-  
մին նուիրմունքիս մատուցմունքովը: Կը  
նուիրեմ, կը մատուցանեմ Սատուծոյս  
չէ թէ իմին բարեգործութիւններս՝ որ պա-  
կասաւոր են, աչքիս արցունքները՝ որ

խառնած են, զոհերս որ կիսկատուր են, աղօթքներս որ անարդիւն են, առաջադրութիւններս որ անհաստատ են, բաղձանքներս որ շատ անգամ աշխարհային, մարմնաւոր են, որոնք իրենք իրենց բնաւ չեն կարող սրդողած զԱստուածս հաշտեցընել ինծի հետ, անոր վրէժխնդրութիւնը զիմաւորել, արդարութիւնը լեցընել, անոր արժանի ողջակէզ ըլլալ. հասկա կը նուիրեմ Յիսուս Քրիստոսին արժանիները՝ որ մինակ կատարեալ ըլլալով, աստուածային ու Աստուծոյ վայել է. ան չարչարանքները վէրքերը՝ որ Աստուծոյ ատեանը ինծի համար միջնորդ բարեխօս են, ան խաչը մահը՝ որ մեղքերուս համար կը հատուցանեն Աստուծոյ, ան արունը զոհը՝ որ Աստուծոյ երեսը հաշտ կընէ կանուշցընէ կը խնտացընէ կը զուարճացընէ, ան աղօթքը՝ որ երկինք կելլայ, հաճոյ ու ընդունելի կըլլայ ինծի համար: Ահա ասոնց ամէնը կը նուիրեմ. բայց կը նուիրեմ իմիններուս հետ միատեղ, ամէն աղօթքս հառաչանքս արցունքս, զոհերս Յիսուսիններուն հետ, ան վաղած անգին արունին միջնորդութենովը, ան սուրբ վէրքերուն բարեխօսութենովը, ան անմեղ մահին արժանիքովը, ամէն իժիր խընդրելով Աստուծմէ մեղքերուս թողութիւնը, հողիիս փրկութիւնը ու երկնից արքայութիւնը:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Յ Ա Ն Ձ Ն Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Եօթներորդ անգամ հանգստեան ժամուն կօրհնեմ զքեզ, Աստուած իմ, իմին յանձնարարութեանս մատուցմունքով: Ար յանձնեմ ես զիս ու ինձի հետ ամէն մտածմունքս, հոգս, ըրածս ընելիքս, ամէն ներսի դրսի կառավարութիւնս, գործողութիւնս, վիճակս, բաղդս քու ձեռքդ կը դնեմ, ամէն զժուարութիւններս, ձայնորդութիւններս, կարօտութիւններս քեզի յայանելով իմացընելով. քու կին աստուածային նախախնամութեանդ, ամենակարողութեանդ, ողորմութեանդ, շքանորհքիդ կը ձգեմ կը թողում: Ար յանձնեմ սիրանս, միտքս, հոգիս ու անոր համարմինս, անդամներս, զգայարանքներս, ինչպէս որ ամէնը քեզմէ առի զիս ստեղծելովդ, անանկ ալ ամբողջ քեզի կու տամ, կը դարձընեմ, որ պահես միշտ նոր ստեղծելովդ. ինչպէս որ քու ձեռքէդ կեանքս առի, ատանկ ալ մահս քու ձեռքդ կու տամ: Ահա ասոնց ամէնը կը յանձնեմ քեզի. բայց կը յանձնեմ մէկ անհոգ, անվախ խաղաղ կենօք մը, արթուն դուարթուն, ուրախ ցնձալից. տկարութիւնն



րուս մէջ քեզի ապաւինած , փորձութեան  
ատեն քեզի կոթընած , փտանգներէն ան-  
երկիւղ , զժուարութիւններուն մէջ քաջա-  
սիրտ , անանկ մը որ ինչպէս թէ արթնու-  
թեանս ատեն՝ արդէն հանգիստ քնով մը  
խաղաղութեամբ ննջէի , կամ թէ քունիս  
մէջ մտադրութենով զործքիս տէր կայնած  
հսկէի , զիշերային մթուն ժամանակ ցո-  
րեկուան լուսովը զուարճացած վայելէի :

Ահա աս ամէն բոլորանուէր մատուց-  
մունքներուս ներգործութենով ինչպէս որ  
օրուանս մէջ եօթն անգամ կօրհնեմ ու  
օրհնեցի դքեզ , Աստուած իմ , անանկ ալ  
կեանքիս բոլոր օրերը , տարիները բիւր  
հաղարիցս , չէ թէ միայն եօթն , հասկա  
եօթանասնեկին եօթն անգամ կօրհնեմ  
դքեզ ու պիտի օրհնեմ , ու չեմ դադարիք  
զոհութիւն փառք տալէն զովելէն ու փա-  
ռաւորելէն . վասն զի քեզի միայն վայել  
է ամէն փառքը պատիւը զոհութիւնը ,  
վասն իրաւանց և արդարութեան քո . ինչ-  
պէս որ երկինքը , անանկ ալ երկրիս վը-  
րայ , հոս ու հոն , հիմա ու ետքը , միշտ և  
յաւիտեան :



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

Ա. ԳՐԳԻՆ

6 0 1 0 1 0 1 0 8

3 1 9 9 4 . 0



## ՅԱԻԵԼՈՒԱԾ

Դաւիթ մարգարէին սաղմոսարանը  
ինչպէս ծածկեալ զանձարան մը սրբազան  
խմաստութեան վեր վար աչքէ անցընե-  
լուս, ուրիշ անգին կտոր մը ու անգիւս  
մարգարիտ մըն ալ ձեռք անցուցի՝ անոր  
« Ողորմեա ինձ Աստուած » յիաներորդ  
սաղմոսին երգուածը . որուն ամէն մէկ  
տունը մէյմէկ մէկզմէկէ ընտիր սուրբ ու  
հոգեւից խմաստներով լիբ, սքանչելի ճար-  
տարութեամբ հիւսած և իրարու ազուցած  
իրեւաստուածային սիրոյն ոսկի շղթայ մը  
որ կը գերեն զմիտս մարգոյ՝ ի սէր Քրիս-  
տոսի: Հիմա հոս տեղ նոյն զլխէն եօ-  
թը տուն միայն ընտրելով ինձի, ինչպէս  
թէ մէկ նորագիւտ եօթը զլուխ ապաշխա-  
րութեան սաղմոսներ մը՝ կը ձեացընեմ  
մէյմէկ յարմար խորհրդածութեամբ մը  
անոնց վրայով: Եւ որովհետև նոյն սլարե-  
րութիւններուն մէջը խօսուածները զլխա-

ւորապէս ապաշխարութեան վերաբերեալ  
նիւթեր են , ուստի ընելիք խորհրդածու-  
թիւններու մէջն ալ տկար զրջիս ներե-  
լուն չափ կը նկարագրեմ ապաշխարող հո-  
գիին զանազան կացութիւնները մեղաց  
վիճակէն շնորհաց վիճակը անցնելուն . ո-  
րուն մէջ դնելով աչքիս առջին Դաւիթը՝  
իրացընէ կատարեալ օրինակ ճշմարիտ  
ապաշխարողաց , կը զմայլում կը սքանչա-  
նամ իմին փափկասիրտ դիւցազն ապաշ-  
խարողիս կենդանի հաւատով աստուածա-  
պաշտ յուսով և վառեալ աստուածսիրու-  
թեամբ խոնարհ սրտին պատարագին : Եւ  
քննելովս ան հոգելից իմաստները՝ թէ  
ինչ սրտէ ու որպիսի հոգիէ բղխեր են ,  
միանգամայն կը փափագիմ ևս նոյն զղաց-  
մունքները տպաւորութիւնները շարժել  
արթընցընել սրտիս մէջ , քանի որ ան-  
ցեալ կեանքիս մեղաւոր օրերը միտքս դա-  
լուն , այսպէս ՚ի խոր խոցեալ ու ցաւազ-  
նեալ անձամբ թագադիր մարդարէին քա-  
ջալերական Ողորմեային ողբաձայն սաղ-  
մոսերգութիւնը կսկսիմ երգել , սրգողած  
Աստուծոյս սիրտը ճմլելու ու քաղցրա-  
ցընելու երեսը , խնայելու հոգիիս իր ան-  
հուն ողորմութեամբը :

ԴԱԻԹ ՄԱՐԳԱՐԷԻՆ

ԵՕԹԸ ԳԼՈՒԽ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

ՈՂՈՐՄԵԱ ՍԱՂՄՈՍԻՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ԽՅՍՈՒՍԾ

Մէջա դիմացս մէկ ուրիշ նոր տխուր տե-  
սարան մը, որուն մէջ թագադիր մարգա-  
րէիս Գաւիթին սքանչելի Ողորմեային սաղ-  
մոսը երգելու հրաւիրեք եմ. ասիկայ ա-  
նոր մեղքէն ետքը կատարեալ ասպաշխա-  
րութեամբ առ Աստուած դարձին սգալի  
հանդէսն է՝ որուն հոս տեղ ողբերգակա-  
նը կը ձևացընեմ: Գաւիթը նոյն օրը ան  
սոսկալի անօրէնութեան կատարեալ մեղ-  
քը արդէն ՚ի գործ դնելէն վերջը, իր չար  
կամքին լիուլի յազուրդ տուած, կիրքերը  
գոհ ըրած, խնդալից և ուրախ կը քաշուի  
իր սլալատին ներքին առանձնութեան սե-

նեակը , ծանրացած աչքերուն անոյշ քուն  
 տալու : Արդէն թագաւորական սրահին  
 լապտերները ինջած՝ ճրագները մարած՝  
 կէս զիշերին ժամերը մօտիկ են , բնու-  
 թեան ընդհանուր լուսթեանը ու սգաւոր  
 մթուն հետ թանձր մառախուղ մըն ալ ա-  
 նոր մտքին աչքը կապած ու հոգւոյն տե-  
 սութիւնը բռնած ունի : Ինքը թագաւորա-  
 կան մահճակալի մէջ ոսկեթել բազմոցի  
 վրայ ծիրանի վերմակին տակը ընկողմա-  
 ցած անոյշ քունի կը սպասէ առաջուան  
 անմեղութեան օրերուն պէս : Բայց ահա  
 խարուած է , աս զիշերը շատ սուղ պիտի  
 նստի իրեն . վասն զի ահա վերէն Աս-  
 տուած իր մեղքին վրայ բարկանալով ե-  
 րեսը դարձուցած է , ալ երեկու պէս բա-  
 րեկամ չէ անոր հետ , ու անիկայ կը կար-  
 ծէ խաղաղ հանդիստ քուն ըլլալ . ամալա-  
 րիշտներուն սիրտը ընտոր կրնայ խաղա-  
 դութիւնը տեղ ունենալ : Ահա նոյն օրուան  
 մէջ ան զործած մեղքին տգեղութիւնը  
 ինչպէս մէկ սոսկալի հրէշ զարհուրանայ  
 պատկեր մը մէկէն հոն աչքին առջևը  
 տնկուեցաւ , երթալիք չունի . ո՞վ կրնայ  
 աս տեսիլքին դիմանալ , ևս առաւել Դա-  
 լիթի պէս փափկասիրտ հոգի մը : Թէ-  
 պէտ անիկայ նոյն միջոցին իր խռովեալ  
 խղճմտանքին խայթէն ու սրտին անհան-  
 դարտութենէն ազատելու համար մէկ շատ

Հաճոյականն ու ուրախալի մտայմուռնքներ  
 իրենն կանչելու ճիգ կընէ , ինչպէս մէկ  
 ինքնիշխան տէր և միահեծան թագաւոր  
 մը՝ որուն ամէն աշխարհային մենծութիւ-  
 նը ու փառաւորութիւնը ձեռքն է՝ ուղա-  
 ծին պէս հրամայելու ընելու ու երջանիկ  
 կեանք մը քչելու աշխրբիս վրայ , բայց  
 միթէ այնպիսի երևակայեալ անցաւոր խա-  
 բերայ մշտիթարութիւններով անանկ նե-  
 ղեալ խիղճ մը ու ալետանջեալ սիրտ մը՝  
 որ Աստուած ապաշխարութեան խթանով  
 կը մշտէ , կրնայ մի պարզութիւն ու հան-  
 դարտութիւն ունենալ : Ահա Գառիթին  
 մեղքին ցաւալի յիշմուռքը երթալով աւե-  
 լի կը սաստկանայ կը զայրանայ սրտին  
 մէջ , աչք գոցելու ատեն շիտար անոր ,  
 թող քունը մոռնայ բոլորովին : այնպէս  
 որ իր ներքին ծփանքէն ու նեղացուցիչ  
 խորհուրդներէն ան կակուղ նրբաթել ան-  
 կողինը կարծես թէ փշերու ղիզուած մը  
 եղեր է ներքեր , որուն մէջ ասդիս ան-  
 դին թաալլաբկելուն ամէն կողմէն կը խայ-  
 թենն վեր վեր կը նետեն զինքը . ան փա-  
 փուկ բարձր՝ որուն վրայ իր թագադիր զը-  
 լուխը դրեր է հանդչելու , ապառաժ մը  
 կտրեր է զլխուն տակը . ու վրան առած  
 ծիրանի վերմակը ահագին ծանրութեամբ  
 կը կոխէ կը ճզմէ զանի ինչպէս հնձանի  
 մէջ խաղողը . ալ Գառիթը ննջէ մի : Ա-



Հա բնութիւնը չկրցաւ բաւել աս բուն  
 սասաիկ կիրքերուն՝ որ անոր սրտին մէջ  
 իրարու դէմ՝ ասպարէզ ելեր են . արդէն  
 աչքերը սկսեր են արցունքի աղբիւրները  
 վազցընել , դսպելը կարելի չէ , սրբելով  
 չեն հատնիր . ահա թրջած թաթղած է մա-  
 հիճը մահճակալը , բոլոր անկողինը ար-  
 ցունքի աւազան մը կարեր է , որուն մէջ  
 ընկզմեր մնացեր է : Ահա աս եղանակ  
 տխուր մտածմունքներով ու ցաւալի խոր-  
 հրրդածութիւններով յուսարեկ լեղասլա-  
 տառ դիչերային ժամերը կանցնին , ու ա-  
 նիկայ նոյն ծփանաց ու ալետանջութեան  
 մէջ՝ յուսոյ և երկիրդի , ինչպէս նաւ մը ծո-  
 վուն մէջ տեղը հոսանքներուն պտոյտքին  
 մէջ բռնուած , երկու հակառակ հովերէն  
 դարնուած , ու կատաղի ալիքներէն ծե-  
 ծուած , մէյմը հոս մէյմը հոն կերթայ կու-  
 գայ , վեր վար կելլայ կիջնայ անդունդնե-  
 րուն վրայ : ինչուան որ Աստուած վերէն  
 իր ողորմութենովը այցելութիւն ընէ՝ իր  
 ասպաշխարող ծառային ու արշալոյսին ա-  
 զօտ լուսին հետ , Գաւթին ալ մտքին յու-  
 սահատութեան թանճր մութը փարատէ ,  
 անոր դիչերային լեղի արցունքը առտուան  
 անուշ ցօղի փոխուելով աչքերուն վրայ :  
 Աս ատենն է որ Գաւթը իր անկողինէն ,  
 ուր բոլոր դիչերը արցունքով լուացուեր  
 էր , կը ցաթկէ կելլայ , ինչպէս աղաւնի

մը՝ որ աւազանը ինճած լուացուած թևե-  
րուն փողին թոթուելով, կելլայ կը թռչի  
դէպ ՚ի բարձրերը, կամ մենաւոր նստած  
լռիկ մնջիկ անուշ անուշ կերգէ իր առա-  
ւօտեանը: Բայց ո՞վ կրնայ հոն տեղ անոր  
ապաշխարութեան տեսարանը նկարա-  
զրել, կամ որի՞ն ձեռքէն կու գայ իր ներսը  
սրտին պահարանը ինճած՝ ան դիւցազն  
ապաշխարողին կիրքերը երևան ընել. տես  
նայէ մէյ մը անոր. ահա ներքնատանը  
պատուհանին դիմացը, ուրկէց առաջին  
անգամ լոյսը աչքին զարկեր, երկնային  
այցելութեանը աւետաբեր եղեր էր իրեն, ծո-  
նկի վրայ բազկատարած համբարձ-  
մամբ ձեռացը աչքը դէպ ՚ի երկինքը արև-  
դական ստեղծողին, իր ան սքանչելի սրբ-  
տառուչ Պղորմեային ողբաձայն սաղմոս-  
երգութիւնը կըսկսի. որուն հեզիկ կամա-  
յուկ մրմունջը մենաւոր ճնճղուկի պէս կը  
խօսին հոն տեղ, ճնչելով մորմոքելով եր-  
կնաւորին լսելիքը, կամ մանաւանդ թէ  
իրբև առաւօտեան նշուլից բուրում մը  
Գաւիթին սրտին սեղանէն կը ծաւալեն կը  
ծառանան յաթոռ բարձրելոյն, անուշը-  
նելով ու հաշտ ընելով աստուածային երև-  
սը, խոնարհ ու զղջացեալ ապաշխարողին  
դիւցազն պատարագին անուշ բուրմանը:

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ Ա.

« Տէր, երբ գշրբունս իմ բանաս, բերաս իմ  
կրկնացի գորհնոչիւնս քո » .

ՍԵՂՄ. Ծ. 16 :

Ապաշխարողին զՉման հոգիին տրամագրութեւ :

Ահա Աստուած իմ, յայտնապէս կը խոս-  
տովանիմ ու չեմ ծածկեր, որ միանգամ  
մեղանչելով շնորհքը ինձմէ հեռացաւ, ա-  
մէն կարողութիւնը ուժը պակսեցաւ գնաց  
ինձմէ, ամէն հոգևորական զէնքերը խը-  
լուեցաւ ձեռքէս, բոլոր երկնաւոր պար-  
զներէն զուրկ մթուն մէջը մնացի, հո-  
ղևոր ցամաքութիւն, սրտի չորութիւն մը  
առաւ տիրեց ներսս, բոլորովին անհոգի  
մարմին մը կտրուեցայ. անանկ որ աչքս  
կապուած, լեզուս բռնուած, շրթունքներս  
կպած ու բերանս կղալուած՝ այլ չեմ կա-  
րող աչքս վեր վերցընելով, լեզուս շար-  
ժելով մեղայ մը կանչել քեզի, Աստուծոյ  
անունը բերանս առնել, ասանկ սառ ու  
քար մը կտրուեցաւ սիրտս, ապառած մը  
դարձայ եղայ : Ասան զի ահա ո՞վ չզիտեր  
որ առջի կոչմունքը հրաւէրը որ կընես մե-  
ղաւոր հոգիին առ Աստուած դառնալու

ապաշխարութեամբ՝ քեզմէ է միայն, դուն  
 ես՝ որ քուկին ազգու շարժիչ ու հրաւի-  
 րող շնորհքներովդ անոր անհոգութեամբ  
 թմրեալ խիղճը կը խթես ու մահացուցիչ  
 քունէն կարթնցընես իր խեղճութիւնը ու  
 արտասուելի վիճակը ճանչնալու ու լալու.  
 քու աստուածային լոյսդ է՝ որով անոր  
 յախտենական մահի ննջեալ աչքը կը բա-  
 նաս ու դժոխքին բերանը մօտեցած ըլլալը  
 կը ցուցընես իրեն, որպէս զի իր չար ճամ-  
 բաներէն ետ դառնայ. քուկին երկնային  
 այցելութեանդ պարզին է՝ որով մոլորեալ  
 ոչխարդ փնտուելու կելլաս իր կորստեան  
 անապատներուն մէջ, ու համբերութեամբ  
 ու անուշութեամբ քեզի կը կանչես ու  
 դառնալուն կը սպասես: Ահա ան ամէն  
 բարութիւնը սէրը տուրքը քենէ է, այս-  
 պէս առջի քայլը ռոմաիոսը շարժումը դէպ  
 ՚ի մեղաւորը միշտ քեզմէ կըսկսի: Աւստի  
 ասիկայ ասանկ ըլլալով, ես իզմէ ամէն  
 յոյսը կտրած, ահա մէկէն աչքս բացած  
 չբացած, ձեռքս բանի մը չերկրնցուցած,  
 առտուան լոյսին առջի շառաւիղը զլխուս  
 ծաթելուն, մեկէն քեզի կու գամ կիցնամ,  
 քեզ կը կանչեմ, քու հզօր ու ահաւոր ա-  
 նունդ բերանս կառնեմ. «Տէր, եթէ զչըր-  
 թունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ  
 զօրհնութիւնս քո »:

Ով Աստուած իմ, ստեղծող երկնի և

երկրի, ծովուն ու ցամաքին տէր, որոյ ձեռքն է ամէն դորութիւնը կարողութիւնը, ինչուան որ դուն ան դորաւոր ու հրաշագործ մատովդ, որով համբերուն լեզուն բացիր, աս մեղաւոր պիղծ շրթունքներու չի դպցընես ճշմարիտ քեզի մեղայ բառին շարժմունքովը, ինչուան որ աստուածային հրաշալի ձեռքովդ լեզուս բռնած կապէն շարձըկես մեղացս անկեղծ խոստովանութեամբը առ քեզ, ինչուան որ հայրական հզօր բազուկդ բերնիս չմօտեցընես հաստատ առաջադրութեամբ մը մեղքերէս, ինչուան որ բժշկական ասիովդ չօծես չծեփես աչքերս ու քարացեալ սիրտըս չչփես՝ ապաշխարութեան արցունքի ջուր բխեցընելու մեղացս լուսցմունքէն, մէկ խօսք՝ քանի որ դուն չես շարժեր, չես կանչեր, չես խթեր, ես չեմ կրնար արթննալ յառնել կենդանանալ: « Տէր, եթէ զշրթունս իմ բանաս »: Բայց մէյ մը որ քու անհուն պարզեարաշխ ողորմութենէդ ասիկայ ինձի ընելու կամենաս, ըստ որում տէրս, ստեղծողս, առաջին և վերջին յոյսս, ահա ան ատեն անմիջապէս « Բերան իմ երգեսցէ դօրհնութիւնս քո »: ահա նոյն ժամանակը ես ան առջի մարդը չեմ, ուրիշ այր մը փոխուած եմ, քիչ մը առաջ կոյր յամառ անդեղջ մեղաւոր մը, քիչ մը ետքը ճշմարիտ փափ-



կատիրտ ապաշխարող մը եղեր եմ, ասանկ  
 մէկ փոփոխութիւն մը, ուժ գորութիւն մը  
 կու գայ վրաս: Ասան զի ահա նոյն միջո-  
 ցին փակեալ շրթունքներս կը բացուին  
 քաղցր օրհնութիւններդ երգելու, խփեալ  
 բերանս կընդարձակի բարերարութիւն-  
 ներդ մեծացուցանելու, կապեալ լեզուս  
 կը սլարզի սքանչելիքներդ պատմելու, ու  
 կառեալ յամբութիւնս կարծրկի քուկին  
 անհուն ողորմութիւնդ մարդասիրութիւնդ  
 աշխարհ ամենայն քարոզելու. որ իմին  
 Աստուածս իմին բարի բարերար տէրս է,  
 մէկ հատիկ իրեն նման չունի. որ իր բուն  
 բարութենէն ունի բարի կամիլը ու ընելը,  
 իր զթով գորովովը անուշ հայր հասարա-  
 կաց է. որուն իր յատուկ բնութենէն սո-  
 վորական է ներել անյիշաչար ըլլալը. որ  
 մեղաւորին մեռնիլը չուղեր, հապա դառ-  
 նալ և կեալը. որ մէկ աչքով կը նայի ա-  
 մենուն վրայ ու մէկը իր խնամքէն իր ո-  
 ղորմութենէն դուրս չիձգեր, զամէնքը կը  
 տնտեսէ կը հոգայ կը խնամէ, ու արդար  
 մեղաւոր չնայելով միօրինակ ամենուն  
 զլխուն վրայ իր արեւը կը ծաթէ ու անձրևը  
 կու տայ. որուն ամէն շնորհք իրմէ է, ա-  
 մէնը ձրի սլարգե մըն է վերուստ ինջած,  
 որ կը շարժէ մարդուս սիրտը ու բերանը  
 միշտ գոհութիւններ օրհնութիւններ եր-  
 գելու իր աստուածպետական մեծ վայելչու-

Թեանը, ևս առաւել կը շարժեն ինձի պէս  
 մեղաւորին սիրտը, որ աւելի մեղքի տէր  
 ըլլալով աւելի ևս շնորհքի արժանի կըլ-  
 լամ իրմէ. որով կը պարտաւորիմ հիմակ  
 ու ետքը միշտ ասանկ զղջական սաղմոս-  
 երգութիւններ մը լիաբերան երգելու իր  
 բարութեանը ողորմութեանը, որ այնպի-  
 սի ամենասիրելի ամենաբարերար Աստու-  
 ծոյ մը դիմացը ասանկ առգերախտութեամբ  
 անհոգութեամբ շարժեցայ մինչև հիմա,  
 ամէն օր ամէն անգամ իրեն դէմ մեղան-  
 չելը սովորութիւն ընելովս ու բոլոր կեան-  
 քիս մէջ զինքը վշտացընելէն անարդելէն  
 ևս չկենալով: Աւստի աս ամէնը աչքիս  
 առջևը դալով ու ամչնալէս ինչուան զե-  
 տինը կորած ծռած, ալ չեմ կրնար աչ-  
 քերս դսպել լալէն ու լեզուս բռնել կան-  
 չելէն անոր. « Աղորմեա ինձ Աստուած »:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Բ .

« Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմուք  
 րեան քոզմ, ըստ բազում գրութեան քոզմ քա-  
 շեա զանօրեկոչքիչես իմ » .

ՍԱՂՄ. Ծ . 1 :

Աղաչևորողի մը աստուածային ողորմութեանը  
 ասպա ինու թիւնը :

Ահա առջի բերան աս տխուր ողբական  
 սղորմեային ճայնը՝ որ 'ի խորոց սրտէս 'ի  
 բարձունս առ բարձրեալն Աստուած թող  
 կու տամ, կարդալով յախտենական ստեղ-  
 ծողս . որուն առջին մեղուցեալ եմ, անոր  
 ողորմութիւնը միայն կը կանչեմ՝ ինծի,  
 զանց ընելով յիշել անոր ուրիշ ամէն կա-  
 տարելութիւնները ու անբաւ գերազան-  
 ցութիւնները . մանաւանդ գրեթէ մոռցա-  
 ծի պէս բոլորովին զուրսը կը թողում ա-  
 նոր անաչառ արդարութիւնը, ուրկէց  
 փախչելու ճամբայ կը փնտրու եմ: Ասան զի  
 հոգիիս ներկայ խեղճ ողորմելի վիճակը,  
 մի միայն ետքի աստիճան կարօտ ողոր-  
 մութեան, ուրիշ ամէն բանը մոռցրնել կու  
 տայ ինծի, իբր թէ զԱստուած կանչելովս,  
 սլարդ ողորմութեան անհուն էակ մը իմա-

նայի, կամ թէ Աստուած ուրիշ բանի համար մենձ չըլլար, բայց եթէ իր անսահման ողորմութեանը նկատմունքով միայն, վասն զի մեղքերուս լեզի յիշմունքը ու ահռելի տեսքը, այնպիսի յուսահատութեան խորհուրդներով առեր պաշարեր է աստ և այժմ՝ երեակայութիւնս ու բոլոր խելապատակս կապեր բռներ է հոգւոյս յաւիտենական փրկութեանը վըրայով, որ երկան բարակ խոստովանութեան նստելու ժամանակ չտալով՝ ուրիշ մէկ բառ մը չղներ բերանս, բայց եթէ ողորմեայով մը մենձ Աստուծոյ մը մենձ ողորմութիւնը ու անբաւ զթութիւնը կանչելէն պաղատելէն՝ ՚ի դատ: Արովհետև մեղքերուս ծանրութեանը ու շատութեանը նայելով չափելով, կրնամ ըսել՝ թէ հազիւ Աստուծոյ մը մենձ ողորմութիւնը բաւական ու կարող կըլլայ բռնելու կեցընելու զիս դժոխքին անգունդին բերանը, որուն մեղքերովս քաչքշուած հազիւ քայլ մը հեռու կը գտնամ զիս անկէց, որ՝ թէ որ Աստուած իրեն առանձին օգնութենովը ու կարգէ դուրս կարողութենովը ձեռքէս չբռնէր ետ չքաշէր, ես արդէն զըժոխքը ընկեր դացեր էի, ու հոն կը դրանուէի հիմա. « Եթէ ոչ տեսան զօրութեանց օգնեալ էր ինձ փոքր, մի ևս բնակեալ էր անձն իմ՝ ՚ի դժոխս »: Ահա այսպիսի

վտանգաւոր նեղ ժամանակ մը յուսարեկ  
 ահարեկ, հոգւոյս նաւարեկութիւնը աչ-  
 քիս դիմացը, որուն մէջ ինչպէս նաւ մը  
 ծովուն մէջ տեղը յուսահատութեան մըր-  
 րիկներով կը ծփիմ ու փորձութեան ա-  
 վիքներով հրուած աստ և անդ կը տատա-  
 նիմ, որին ալ աչքս դարձընեմ, որին ձեռք  
 երկընցընեմ, զով կանչեմ ինծի, ուրկից  
 է իմին օգնութիւնս փրկութիւնս, բայց  
 եթէ քեզմէ ու քեզմով միայն, քու ան-  
 հուն ողորմութիւնդ է բոլոր յոյսս ապա-  
 ւինութիւնս, որուն ՚ի բոլոր սրտէ կը դառ-  
 նամ, ու ինչպէս հոգի փրկող երկաթ ու  
 հաստատուն խարխալ մը երկու ձեռքս  
 ամուր կը բռնեմ, կը փաթթուիմ ու չեմ  
 ուզեր թողուլ ամենեին իբրև մի միայն  
 վերջին ապաստանս, որով աս կատաղի  
 ծովերէն աս խռոված ալիքներէն կը խա-  
 լըսիմ: Անոր համար ով Աստուած իմ,  
 դեռ մեղքերս մէկմէկ չխոստովանած առ-  
 ջիդ, յանցանքներուս պատմութիւնը չը-  
 րած, անօրէնութիւններուս որքանութիւ-  
 նը չափը դումարը չհաշուած, զատ զատ ա-  
 մէն մէկ տկարութիւններս կարօտութիւն-  
 ներս աչքիդ առջևը չհանած չդրած, մէ-  
 կէն ողորմեայէ մը սկսուած կրնեմ ապաչ-  
 խարութեան սաղմոսերգութիւնս, ու ո-  
 ղորմեա խօսքերով դիմացդ կելլամ, ար-  
 դարութիւնդ կը դիմաւորեմ, աղէկէն հա-



մողուած մաքիս մէջ, որ հիմակու հիմա  
անկէ դուրս ալ բան չկրնար ինծի օգտա-  
կար ու փրկաւէտ ըլլալ. հապա տեղն է  
կանչելու ինծի, « Ողորմեա ինձ Աստուած  
ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բա-  
զում գթութեան քում քաւեա դանօրէ-  
նութիւնս իմ » : Իրաւ, Աստուած իմ, չեմ  
ժխտեր չեմ ուրանար՝ մենձ մեղաւոր մը  
ըլլալս դիմացդ ու մեծամեծ պատիժնե-  
րուն արժանի, բայց կըսեմ որ՝ թէ և մեղ-  
քերս չատ ըլլան, յանցանքներս բազմա-  
թիւ ու ամենածանր, որով արդար վրէժ-  
խնդրութիւնդ գրգռեցի վրաս, բայց ար-  
դարութիւնդ դանց ընելով ողորմութիւնդ  
ձեռքդ առ, մի չափեր իմին արժանաւո-  
րութեանս ընելիքդ, հապա քու գթու-  
թեանդ ու բազում մարդասիրութեանդ  
վայլածը ըրէ. թոյլ մի տար որ արդար  
բարկութեան աղեղէդ թռած կապարձ-  
ներդ գան գտնան զիս, թէպէտ ես ամէն  
կողմանէ նպատակ գրած ըլլամ զինքս,  
դատաւոր ըլլալդ մոռնալով՝ իբրև հայր  
մը վարուէ ստահակ անատակ որդւոյդ  
հետ, որ ահա ոտքիդ տակը « Ողորմեա  
ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան  
քում » խօսքերովը ողորմութիւնդ կը ժտէ,  
ու ասիկայ ըրէ « Ըստ մեծի ողորմութեան  
քում », ինչպէս ինչչափ կը վայլէ մենձ  
անհուն ամենակարող Աստուծոյ մը, ու

րոյ սղորմութիւնը եւ իրեն պէս ամենա-  
մեծ ու ամենակարող է, միշտ անբաժանե-  
լի իրմէ ու միշտ իրեն պէս անչափ ու ան-  
սահման, որով անգամ մը զթութիւնն ալ՝  
որ սղորմութեանը հետ ընթացակից կըլ-  
լայ մեզքին ներելուն մեղաւորին անյիշա-  
չար ըլլալու, սկսի գործել՝ թող տալով  
պարտերը, դանց ընելով պատիժները .  
« Ըստ բազում զթութեան քում քաւեա  
դանօրէնութիւնս իմ » :

Ահա Աստուած իմ, ես ինքն բերնովս կը  
խոստովանիմ յանցաւորութիւնս ու զխտեմ  
ինչին արժանի ըլլալս. այս կըսեմ որ յաւի-  
տենական դժոխք մը իր անշէջ կրակովը ու  
անմեռ որդովը՝ արդարապէս արժանի պա-  
տիժներ մըն են համաձայն ու համաչափ  
խմին անզգամութիւններուս . բայց ես ալ  
ան աւետարանական ծառային պէս բիւ-  
րաւոր քանքարներու պարտաւորութեան  
մը տակը ճնշած՝ ու չունիմ բաւական բան  
ձեռքս հատուցանելու, ու միշտ բանտը  
չզթան աչքիս առջեր, ուրկէց փախչելու  
ճար չունիմ : Բայց այսու ամենայնիւ զիտ-  
նալով՝ որ բարի առատաձեռն հարուստ  
ու զթած տիրոջ մը հանդիպեր եմ, որոյ  
առջին ընկած ազաչեմ ու երկայնմտու-  
թիւնը պաղատիմ, ուրկէց անտարակոյս  
կը յուսամ որ կարող է ու կը կամի ամէ-  
նը մէկանց թողուլ ինձի : Ինչպէս որ ար-

դէն բնածին բնութենէն « ըստ բազում  
 գթութեան քում », հաճութիւն ու միտումն  
 ունի այսպէս ընելու, ըստ որում սովո-  
 ղական է իրեն խեղճերուն գթալ, կարօ-  
 տեալներուն շնորհելը, որ աւելի տալովը  
 աւելի կունենայ տալու, ու աւելի գթալու-  
 վը առաւելագատիկ նս կը փառաւորի, որ  
 աւելի կախորժէ հայր կանչուիլը՝ քան  
 թէ դատաւոր, աւելօք մենծ պատիւ կը սե-  
 պէ իրեն հայր գթութեան ըլլալը՝ որչափ  
 որ Աստուած արդարութեան, ուստի աս  
 ամէն կողմանէ մենծ յուսով կու գամ կից-  
 նամ իր ողորմութեան գիրկը ու կը պա-  
 տըսպարիմ իր գթալից բազուկին հովա-  
 նաւորութեան ներքեւ, անտարակոյս ըլ-  
 լալով որ ողորմութեամբ պիտոյ փարոսի  
 ինծի հետ ու գթութեամբը անտես ընէ  
 բազում մեղացս :

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ, Գ.

« Չափօրէնութիւնս իմ եւ ինձեկե գիտեմ, և մեղք իմ առաջի իմ եւ յամենայն ժամ » .

ՍԱՂՄ. Ծ. 3 :

Ապաշխարողն անկեղծ խոստովանութիւնը  
առ Աստուած :

Ահա սրտագիտին Աստուծոյ յանդիման մատուցեալ եմ, և ուր կրնամ փախչել կամ թաղչել ու մեղքերս ինծի հետ թաղուցանել . ուստի բանի որ այսպէս բոլոր երկնքին զիմացը մեղանշեցի, ու այնքան ահանատես վկաներ ունիմ անոնց, ահա ես ալ նոյն հանդէսին ներկայութեան առջևը հրապարակական ու ընդհանուր խոստովանութիւն մը կրնեմ անոնց վրայ, և ամենուն առջին պարզմտութեամբ ու անկեղծութեամբ ետ չեմ կենար մեղքերուս սրտամութիւնը ընելէն մէկմէկ զլիսէ զլուխ, առանց և ոչ մէկը ծածկելու պահելու . և ինչպէս պահեմ առանկ բան մը որն որ յանդգներ եմ ահամօթարար ու անպատկառ գործելու կենդանի Աստուծոյ մը ներկայութեանը ու աչքերուն դէմ յանդիման . որ ուր ըլլամ ուր

երթամ, ամէն տեղ ամէն ժամանակ ներկայ առաջիկայ է ինծի, ու չկայ տեղ մը որ չդանայ զիս. որուն սուր աչքերը կը թափանցէ կանցնի մինչև ցորոշումն շնչոյս ու սրտիս ներքին խորշը, ու չկայ ծածուկ մը պահած անոր աչքէն. ասանկ կենդանի Աստուած վկայ մըն է հիմա մեզքերուս, ընտոր որ օր մըն ալ ծայրագոյն արդար Աստուած դատաւորս պիտոր ըլլայ դանոնք գատելու ու պատժելու: Աւտի ահա ես ալ հիմակուց դեռ անոր ահաւոր ու դարհուրելի դատաստանին ատեանը չեւած, ժամանակ գտնալով ու ողորմած հայր մը տեսնալով դանիկայ զլիսուս վերեր՝ պատրաստական թողութիւն տալու ու ներումն ընելու յանցաւորութեանս, ան սարաափելի օրը կը փութամ թեթեկեկ ու զիւրազին մը ըմնցընելով, համառօտ կարգըս անցնելու. « Ասացի՛ թէ ես ինձէն պաամեցից դմեղս իմ և հողացայց վասն մեղաց իմոց », ես ինքն անձինս վրայ մէկ խիստ դատաւոր ու միանգամայն ռխերիմ ու անկաշառ դատախաղ մը կենալով լսելու ու վճռելու, միտքս մէկ կողմէն դրած քննելու ու երեան ընելու խիղճս, միւս կողմանէ արդար կշատք ձեռքը՝ գատելու ու վճիռ տալու, մէկ ձեռքս առնելով Աստուծոյ օրինաց զիւրքը ու սուրբ սրատուրանաց տախտակը, ու միւս ձեռքովս բըն-



նսած անօրէնութիւններու գիրքը ու պատուիրանագանցութիւններու տեսարակը, մէկ աչքս մէկին ու միւս աչքս մէկալին վրայ. և ահա ասանկ մէկ բարակ քննութեան մը ձեռքով ու միշտ կշառքի թաթով ես ինծի նստած կեանքս վերէն վար աչքէ անցընելու, մանկութենէս ինչուան աս անցեալ հասակս ամէն մէկ տարիքներու կացութեան մէջ, մէկիկ մէկիկ հինը ու նորը մէջտեղ բերելով, անցածք ու ներկան արթընցընելով ու դուրս հանելով ծածուկը ու յայտնին, որն որ մթուն ու չորս պատին մէջ, ու որոնք որ բաց տեղ աս լուսաւոր արեուն գիմացը, մէկէն կարգէ դուրս անհամաձայնութիւն ու անհաստալի տարբերութիւն մը կը տեսնամ՝ զիս կշռող ու դատող արդարութեան մը կշառքին երկու թաթին հաստարութեանը մէջ, անանկ որ դեռ խղճիս քննութեանը կէսին չհասած՝ մէկէն առջի բերան կը սրբաւորիմ՝ խոստովանելու՝ որ մեղքերուս զիգուածքը կոյտը ինչպէս մէկ ահագին լեռմը ելեր բարձրացեր են զլսուս վերեր, ու մէկ անտանելի բեռան պէս թիկունքիս վրայ կոխեր ծանրացեր են, որուն ներքե հողիս բերանս ճնշած կը հեծեմ. « Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զզլուխ իմ ». և թէ անոնք զլսուս մաղէն աւելի կը թուին, ծովուն աւազը կը համրուի ու

մեղքերուս հատը չի համարուիր . « Մեղք  
իմ բազում են քան զհեր գլխոյ իմոյ » .  
« Ծանր են քան զառազ ծովու » :

Իրաւցընէ ասոր ասանկ ըլլալուն , հի-  
մա ես ինքն բերնովս վկայութիւն կու տամ ,  
ձեռօքս կը զրեմ ու մատովս կը զմուեմ ,  
իրր թէ յանցանքիս պատիժը ու մահուան  
դատակնիքս ես անձամբս վճռած հրատա-  
րակէի . « Զանօրէնութիւնս իմ ես ինձէն  
զիտեմ , և մեղք իմ առաջի իմ են յամե-  
նայն ժամ » : Հարկ մը չկայ որ մէկը դա-  
նոնք միտքս ձգէ , աչքիս առջին շարած  
դնէ , երեսս տայ , յիշեցընէ . « Ես ինձէն  
զիտեմ » : Արդէն ես ինքն Աստուծոյ պար-  
զե ըրած լուսովը ինձի խղճմտանքիս սը-  
ւած արդար վկայութենէն , սրտիս անդա-  
դար խայթմունքով ու ներքին համոզմամ  
բըս կը ստիպուիմ խոստովանելու՝ որ ար-  
դէն ծնած օրէս սկզբիկ ատենէս մեղքի  
զիրասահ հակամէտ բնութեամբս ու Աս-  
տուծոյ օրինացը թշնամի ու ապստամբ  
զղայութիւններովս մեղանչելը զրեթէ սո-  
վորութեան պէս բան մը երկրորդ բնու-  
թիւն մը ըրի ինձի , ու հասակիս օր օրուան  
վրայ տձելով տարիքս առնելով՝ մեղքերս  
վրայէ վրայ դիզեցի աւելցուցի : Արչափ որ  
Աստուծոյ երախտիքը շնորհքը պարզկնե-  
րը շատ եղան նէ , նոյնչափ ալ անոնց  
դէմ իմին ապերախտութիւններս , անհո-

գութիւնս, գաղջութիւնս շատ եղան, շը-  
նորհքներուն առատութեանը առաւելու-  
թեանը հետ ջանք ըրի մեղքերս հաւասարեցընելու.  
Ինչպէս Աստուած չյողնեցաւ եւ չկեցաւ ինծի ողորմութիւն ընելէն,  
նոյնպէս ալ ես չյողնեցայ եւ չկեցայ ա-  
նոր դէմ մեղանշելէն, միշտ շարաշար  
դեղձանելովս անոր համբերութեամբը.  
այնպէս որ Աստուած ու ես իբր թէ մէկ  
տեսակ կռուի աստարէզ մը մտեր էինք  
մէկմէկու դէմ ու զիրար յաղթելու կը ջա-  
նայինք, Աստուած բարութեամբը ինծի,  
ու ես շարութեամբս անոր: Իրացընէ  
մենձ մենձ տետրակներ զլխէ զլուխ լեց-  
ւեցան անօրէնութիւններով ու խոշոր հա-  
սոր դրքեր չբաւեցան յանցանքներուս  
նշանագրութենովը, ու ես դեռ եւ չկե-  
ցայ չկասեցայ իմին գէշ ճամբաներէս,  
դեռ զլուխս առեր կերթայի իմին անդգա-  
մութիւններուս մէջ, Աստուծոյ փախը սրբ-  
տէս մէկդի ըրած, ու մարդկային ամօթը  
երեսէս վերցուցած չափ մը չէի գիտեր,  
սահման մը չէի ճանչնար անդուսպ կիր-  
քերուս հաճոյքը գոհ ընելու ու չար կամ-  
քերուս յօժարմունքին մէջ: Այսպէս ա-  
մէն օրինաց կապը՝ կանոնաց սանձը կռա-  
րելով կը խղէի կանցնէի. ասոր ասանկ  
ըլլալը ահաւասիկ ինձմէ լսէ. « Զանօրէ-  
նութիւնս իմ ես ինձէն դիտեմ »:

Վասն զի որչափ աւելի խղճմտանքս  
 քննութեան կանչեմ, նոյնքան աւելի յան-  
 ցաւորութիւններս երեսս կը դարձուի ու  
 նոյնչափ առաւել ևս կը հարկադրիմ խոս-  
 տովանելու զանոնք իրենց ամէն մէկ սլա-  
 րապայովը, մենծութեամբը, չարութեամ-  
 բը, որով մէկ կարգէ դուրս տարասլայ-  
 ման ծանրութեան մը կելլան կը հասնին,  
 ու իրաւունք կունենան ըսելու՝ որ այսչափ  
 մեղքերու սպեղութեան մէջ հոգիս իրաւ-  
 ցընէ ահռելի հրէշ ու սոսկալի ցուցանք  
 մը դարձեր է. այնպէս որ ինձի ևս որ աս  
 հոգին ներսս կը կրեմ, դարհուրանք ու  
 սոսկումն կը պատճառէ. ասանկով կեան-  
 քիս ամէն մէկ օրը մէյմէկ օդ մը ըլլալով  
 մեղքերուս շղթային կապելով զիս դժոխ-  
 քին հետ, քիչ քիչ առանց խմանալու  
 հոն կը քաշեն կը տանին: Ահա տէր իմ,  
 ասանկ ախոր սպասմութիւններ մը են  
 անձիս վրայով տուած վկայութիւններս:  
 Բայց միթէ այսօր ասանկ մը ըսելով կանց-  
 նիմ կերթամ, վաղուան օրը մտնալով  
 ու մէյմըն ալ չյիշելով, առիկայ ինչպէս  
 կրնայ ըլլալ, ահա միշտ մտքիս մէջ ու աչ-  
 քիս առջին են. «Այ մեղք իմ առաջի իմ  
 են յամենայն ժամ». միշտ ամէն օր առ-  
 ջիս շարած կեցեր են, զխմտցէս չեն եր-  
 թար, ուր երթամ ետե՛ս կը ձգեմ, ինձի  
 հետ մէկտնդ կը նստին կելլան ժուս կու



դան, բնաւ աղատելիք չունիմ անոնց լե-  
 դի մտածմունքներէն, որ ինչպէս ձէթ մը  
 անցած են մարմնոյս ծակախիքներուն մէջ,  
 ու վերք մը եղած կը բանին ներսի դիւ-  
 ահա մէկ պարզ մազաղաթի վրայ գրած  
 դիմացս գրած միշտ կը կարգամ դանոնք  
 մէկմէկ իրենց տեղովը տեսքովը, ժամա-  
 նակով թուով ու որքանութեամբը. ան  
 գէշ մտքերը դիտմունքները՝ որ բանեցու-  
 ցեր եմ, ան ամբարտաւան ամբարիշտ  
 խորհուրդները՝ որ անցուցեր եմ, ան նա-  
 խանձու քսութեան ատելութեան քինա-  
 խնդրութեան կիրքերը՝ որ գրգռեր եմ,  
 ան որկրամոլութեան մարմնապաշտու-  
 թեան ունայնասիրութեան ախտերը՝ որ  
 զգուեր գրկեր եմ. ալ ո՞ր մէկը ըսեմ, ա-  
 սանկ մէկ շատ ու անթիւ խորհրդոյ բանի և  
 գործոյ մեղքերս, շնորհքներուն անհաւա-  
 տարիմ, պարտաւորութիւններուս զանց-  
 առու, Աստուծոյ ծառայութեան մէջ  
 թոյլ գաղջ, պատուիրանապահութեանց  
 մէջ պակասաւոր, ըստ այսմ ամէն օր ա-  
 մէն ժամանակ ամէն հասակիս վիճակին  
 մէջ՝ ի՞ժերու կարիճներու բոյն մը ու գա-  
 դաններու վիշապներու բնակարան ընե-  
 լով ծոցս. «Նշ մեղք իմ առաջի իմ են յա-  
 մենայն ժամ»: Բայց աս ամէն ցաւալի  
 պատմութիւններէս ետքը, մխիթարու-  
 թիւն մըն ալ ունիմ, որն որ չեմ կրնար



մոռնալ, ու մէկ աս յոյսն է՝ որ խմին ասանկ  
 հրատարակական խոստովանութիւննե-  
 րուս մէջ երկնքին դիմացը ծանրութիւն-  
 ներէս թեթեութիւն, ու լեղիութիւններուս  
 մէջ անուշութիւն մը խմանալ կու տայ,  
 որով ալ մը երկնքի երես տեսած ու լոյսի  
 սղօտիկ ծագ մը գտած կը մխիթարուիմ:  
 Վասն զի աղէկէն համոզուած եմ մտքիս  
 մէջ, որ որչափ սրտիս անկեղծութեամ-  
 քը բերնիս խոստովանութիւնը ստօյգ են  
 նէ, նոյնչափ ալ աստուածային ողորմու-  
 թեան յոյսը կենդանի է սրտիս մէջ, որ  
 Աստուած աս խոնարհ խոստովանութիւնս  
 ընդունելով, « Զհոգի խոնարհ Աստուած  
 ոչ արհամարհէ », թողու ներէ պիտի դա-  
 նոնք, ու ջնջէ անյայտ ընէ մէջ տեղաց  
 մեղքերուս ձեռագիրը իր անյիշաչար ու-  
 ղորմութեամբը. ես միշտ վարէն յիշելով  
 սերտելով մեղքերս առանց մոռնալու որ  
 մը ժամ մը, ու Աստուած վերէն մոռնա-  
 լով լռելով զանոնք առանց յիշելու յալի-  
 տեան:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Գ.

« Դարձն զերևաւ քո 'ի մեղաց խնոց . . . Մի ընկենուշր զիս տէր յերևասց քոց » .

ՍՅՂԾ. Ծ. 10. 12 :

Ապաշխարողին խոնարհ ալօթքը առ Աստուած :

Ահա Աստուած իմ, ճանչնալով զիս աւսանկ մեղաւոր մը զխմացդ, չեմ կրնար համարձակիլ աչքս վեր վերցընել ու երկընքի երես տեսնալ . հասպա ինչպէս մէկ մարսաւոր մը տաճարին մէկդին քաշուած, աչքս գետինը, երեսս հողին տուած ու ճակատս քարերուն քսելով, հազիւ թէ սրտիս խորունկէն մեղաներ մը ու դողդոջուն շրթունքներս քովէ քով բերելով, « Աստուած քաւեա զիս զմեղաւորս » խօսքեր մը կը թոթովեմ, չհամարձակելով ամենեին և ոչ աչքս վեր վերցընելու ու երեսդ տեսնալ . անանկ մէկ երես մը՝ որ լուսերու ազրիւր արեէն բիւր անզամ աւելի լուսաւոր ըլլալով չուզեր մութը տեսնալ, չկրնար նայիլ մեղքին մթուն ու բուրովին կը դարչի կը դզուի ետ կը փախչի . այնպէս որ հրեշտակներուն վրայ անկէ մէկ հատը միայն տեսնելուն, չիկրցաւ

նայիլ , չուզեց տեսնալ մէյմըն ալ , յախտեան դարձընելով երեսը անոնցմէ , նոյն ակնթարթի մէջ արքայութենէն դժոխքին անդունդը ձգելով . ան Աստուածը՝ որ մարդուս մեղաց երևոյթը նմանութիւնը միայն տեսնալով իր միածին անդրանիկ Յիսուս Քրիստոսին վրայ՝ որ իր երանական սիրոյն ու հաճութեանը նպատակն էր , որուն նայելուն կը դուարձանար , թէպէտ և յախտենական հայր մը՝ պարտաւորեցաւ թողուլ խաչին վրայ , հապա ընտոր կրնայ հանդուրժել տեսնալու ասչափ մեղքերու աղմի մէջ թաղուած հոգիս , որ իրաւքնէ սոսկալի հրէշ մըն է , որուն վըրայ ամբողջ դժոխք մը նկարուած կերևայ ու դատապարտեալի սև կնիք մը ճակատը դրոշմած է , որկէց ևս իսկ որ աս հոգիին տէրն եմ , երեսկայելուս կը սոսկամ կը սարսափիմ , ու աչքս չերթար տեսնալու . հապա դուն Աստուած իմ , ան սլայծաւ արեուն ճառագայթներէն ճաճանչաւոր երեսով ու փարփլուն աստղերէն փայլուն աչքերուդ բիրօքը դիմանամ մի տեսնալու , ու երեսդ յախտեան չգարձնելու անկէ : Այո Աստուած իմ , իրաւունք ունիս այսպէս ընելու . բայց որովհետեւ բուն մեղքը եղաւ սկզբնապատճառը՝ որ իր գարշելի ազեղութեամբը ասանկ դժոխային մթուն մէջ առաւ պատեց հոգիս՝ որ

ատեն մը դրախտին մէջ լուսերու մէջ  
կը ծփար, որ ստեղծելուդ բարի տեսնա-  
լով ինչպէս անբուկ շունչիդ կայծ մը ու  
զեղեցիկ երեսացդ վարպետ քաշուած մը՝  
հաճեր էիր դէմ յանդիման դնելով աչքիդ  
ու լուսով երեսացդ յաւիտեան երջանիկ  
ընելու զանիկայ, որ հիմա առաջուան պէս  
բարիչտեսնալով կը ստիպուիս երեսդ դար-  
ձընելու, բայց չէ թէ հոգիէս, հապա ան  
մեղքէն դարձուր, որ զանիկայ աս ողոր-  
մելի խեղճ վիճակը դրին, բոլորովին ան-  
նման գուրկ իր ատջի փառաւորութենէն  
հին վայելչութենէն, կապուտ կողոպուտ  
չէնքէն շուքէն. « Գարձս գերեսս քո 'ի  
մեղաց իմոց . . . Մի ընկենուր զիս տէր յե-  
րեսաց քոց » :

Գարձուր երեսդ մեղքերէս, որպէս զի  
չտեսնաս զանոնք հոգւոյս վրայ ու տես-  
նալովդ զրգոտիս մերժելու ձգելու երե-  
սէդ միանգամայն հոգիս այ մեղքերուս  
հետ միատեղ, յաւիտեան չնայելով անոր:  
Գարձուր երեսդ մեղքերէս՝ աչքդ շրջելով  
անկէ անտես ընելով, ջնջելով հոգիէս ա-  
նոր մութը, ու ասիկայ ըրէ՝ տալով աչքե-  
րուս ճշմարիտ ապաշխարութեան արցուն-  
քը ու սրտիս կատարեալ պղծման հոգին,  
որուն ձեռքով անհետ կըլլան կը ջնջին ան  
կեղտերը բիծերը, հին ապակաճութենէ  
մնացած աղտը կերթայ կը սրբուի անկէ,

ու առջի գեղը շէնքը շնորհքը կու գայ վըրան, որով հոգիս դարձեալ հաճոյ աչացդ և սիրելի՛ կը խալըսի անգամ մը յաւիտեանական փառաւորեալ երեսիդ գրկումին մենձ պատիժէն, որուն ներկայիս արժանացեր է: « Գարձո գերեսս քո՛ ի մեղաց իմոց » . դարձուր կըսեմ, բայց ո՞ր կու գէի որ դարձընէիր, որպէս զի չտեսնէիր մեղքերս . ահա դարձուր Գողգոթային գըլուխը խաչելեալ Յիսուս որդւոյդ վրայ, որ մեղքերուս համար մեռնելով զոհուելով աստուածային արդարութեանը՝ ջնջեր նետեր է՝ անոնց ձեռագիրը . դարձուր ան անմեղ արիւններուն՝ որ Աստուած միաւորեալ մարմինին ամէն կողմէն ինձի համար վաղցուցեր է ու օր ըստ օրէ կը վաղցընէ սուրբ սեղաններուն վրայ անմահ բաժակներուն մէջ, որով սրբեալ կարդարանայ հոգիս . դարձուր ան սուրբ վերքերուն ձեռքին ոտքին վրայ, ան կողին պատառուածքին վրայ, որուն մէջ մտած կը պահուըտիմ, որպէս զի հոն նայելուդ տեսնաս զիս առանց մեղքերս տեսնելու, կամ թէ տեսնաս ալ նէ՛ ի պատիւ սրբութեան տեղւոյն և սրբազան սեղանին, ուր կը պատսպարիմ . ու եղջիւրէն ամուր բըռնած եմ, և ՚ի նշան արեան անմեղ գառին Աստուծոյ՝ բնակած տանս գրանը բարաւորին վրայ գանց ընես խնայես սատա-



կիչ սուրէդ : Ահա ես հիմա ասանկ ապաստանի մը մէջ պահուած , ալ կը համարձակիմ ըսելու՝ դարձուր աչքդ , հոս նայէ տես զիս , ու քանի որ հոս եմ , երեսդ մի դարձրներ , մի ձգեր , մի մոռնար զիս .

« Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց » :

Իրաւ Սատուած իմ , այսքան մենձ մենձ ինձի պարզև ըրած բարերարութիւններուդ փոխարէն՝ ըստ արժանւոյն քեզի սիրելու ծառայելու պատուելու տեղ , այսչափ ապերախտութեամբ շարժեցայ զիմացդ ծնած օրէս ինչուան ասօր . ուստի ստուգապէս արժանի եմ , որ բոլորովին երեսէ ձգես թողուս զիս , թող տալով մեզքերուս ձեռքը ինչպէս շղթայակապ գերի մը ու շղթայիս հետ միատեղ նետելով զիս դժոխքին յաւիտենական բանտը , չցուցնելով մէյմըն ալ երեսիդ լոյսը , որ իմին արքայութիւնս է : Բայց կաղաչեմ չըլլայ որ ասիկայ ընես ինձի , « Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց » , մի թողուր զիս հոն իյնալ յաւիտեան գրկելով անուշ երեսէդ . մեզքերուս մութէն նորէն ողորմութեան լուսիդ կանչէ . միւս անգամ ասցանկալի առաւօտը ցուցուր ինձի մեզքին զիշերէն ետքը . երեցուր ինձի երեսդ , որպէս զի մեզաց մահէն դարձեալ շնորհաց կենդանութիւն առնեմ . « Երեսցո գերեսս քո՛ի մեզ և կեցցուք » : Յուցուր ին-

ծի երեսից քաղցրութիւնը, ու լսելի ըրէ  
անուշ ձայնդ. « Զի ձայն քո քաղցր է և  
դէմք քո զեղեցիկ » . անկէ ու անով է մի-  
այն աչքիս լոյսը ու կայտառութիւնը. « Առ-  
տով երեսաց քոց տեսանեմք զլոյս » : Հա-  
պա, ով տէր, նորէն երեսից դիմացը ընդ-  
ունէ դիս կրկին անգամ, արժանի ըրէ  
նոյն շնորհքներուդ լոյսին, նոյն պարզե-  
ներուդ առատութեանը, նոյն հայրենի սի-  
րոյց, նոյն համբուրի շրթանցդ, ինչպէս  
հարազատ որդի մը սիրելի մէյմըն ալ չզա-  
տելով դիս հայրական գրկէդ ու աստուա-  
ձային երեսէդ,

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Ե .

« Առաւել լուս զիս յանօրեկոչքեկէ իմմէ, և  
ի մեղաց իմնց տոչրբ արս զիս » .

ՍԵՂՄ. Ծ. 2 :

Ապաշխարողին կատարեալ զզման հոգիին  
կացութիւնը :

Ահա տէր իմ, անցեալ կենացս ախտը  
մտածմունքները ու լեզի յիշատակները  
խիստ ցաւարեր եղան ինձի ու շատ դառն  
արցունքներ աչքէս ինջեցուցին. ու ասի-  
կայ չէ թէ օր մը գիշեր մը, հասպա շատ օ-

րեր շատ գիշերներ ամիաներով տարինե-  
 րով բոլոր կեանքիս հետ աչքերէս ար-  
 ցունքը շշորցուցին : Արդեօք քանի քանի  
 երկան գիշերներ աչքիս քուն չտալով, դը-  
 լուխս առանց քարձի գնելու, մահճիճիս  
 մէջ նստած երեսս ծունկիս գրած կուլայի,  
 դողս արցունքով լեցընելէս ետքը անկո-  
 ղինս ալ կը թրջէի լուանալու չափ . « Առա-  
 ցի դամենայն գիշեր դմահճիճս իմ, և ար-  
 տասուօք իմովք դանկողինս իմ թացի » :  
 Քանի քանի հեղ սեղան նստած կերակու-  
 րի հացի տեղ մոխիր սկսայ ուտել, ու օր  
 ըստ օրէ խմելիքս աչքիս արցունքովք  
 խառնած կուլ տուի, լեզի արցունքէ ծով  
 մը շինելով սրտիս մէջ, անանկ որ մէկ  
 կողմանէ երկու աչքէս վազած աղբիւրի  
 պէս արցունքը ձեռքիս գաւաթին մէջ կը  
 քամէր, ու միւս կողմանէ վիրաւոր խոց  
 սրտիս կրակը այրուածքը ու չմարելիք  
 պապակը նոյնը շրթունքներուս մօտեցու-  
 ցած բերանս առած խմել կու տային ին-  
 ծի . « Զմոխիր որպէս հաց կերի և դըմպե-  
 լին իմ արտասուօք խառնեցի » : Աւ առ-  
 չափ միայն չէ, հապա ասկից ալ աւելի .  
 վասն զի երթալով աչքիս արցունքները  
 ան աստիճան սաստկացան առատացան,  
 որ հազած թաղաւորական ծիրանիս թըր-  
 ջած թաթխած խըխում կտրուելով սկսաւ  
 պաղ պաղ մարմնոյս փակչիլ մինչև պար-

տաւորեցայ հանել նետել ինձմէ ու անոր տեղը քուրճ հագնել , որ օր ըստ օրէ արցունքիս զիմանան . « Փոխանակ ծիրանոյ զգեցոյց ինձ քուրճ » : Թող որ երբ աչքերս ասանկ երկու գետի արցունքներ մը կին ջեցընէին , դեռ արցունքի ծով մը պահած էր սրտիս մէջ՝ պատրաստուած ներսս աչքերուս տալու ետքէն . ահա ասանկ լալ մը լացի ես , լուանալ մը լուացուեցայ , ու մկրտութիւն մը մկրտուեցայ : Բայց տէր իմ , այսպիսի և այսքան ջերմաջերմ արցունք մը , որչափ առատ , որչափ ներքին ցաւադին , թէ և անկեղծ ու ճշմարիտ , Աստուծոյ զիմացը լալու ու մեղքերս լուանալու միայն պահուած , դեռ մարմնաւոր աչքերէ , ապականեալ մեղաւոր սրտէ մը բղխած ըլլալով , անկատար պակասաւոր արցունք մը կը սեպուին , որ գուցէ խառնուրդ բաներ ունի իր մէջը , ու գրեթէ պղտորութիւն մը կերկնայ վրան՝ առաջ եկած մեղքին բնական տգեղութենէն զարհուրանքէն ստիպուած , խղճմտանքին խայթմունքէն դրդուած , ու պատճառած դժոխքին վախէն ու արքայութեան զրկումէն , քան թէ Աստուծոյ սիրոյն . ուստի և իրենք իրենց անբաւական սրբելու արդարացընելու զիս , որ չեն կարող հաշտարար քաւչարար պատարագ մը ըլլալ աստուածային արդարութեանը մեղաւոր

րին համար : Վասն զի հոգոյս ներկայ կացութիւնը ապաշխարութեան հոգիին դեռ սկզբնաւորութիւն մը ու առաջին շարժմունք մը սեպելու եմ, մեղաւորի ու ապաշխարողի մէջ տեղը վիճակ մը, տրտում մտածութիւններու ու լեզի արցունքներու տեսարան, որուն մեղաւոր մը համտես կըլլայ ապաշխարութեամբ առ Աստուած դառնալուն, մինչև որ ան լեզի ու պղտոր ջուրերը աչքէն դուրս տայ մեղքին դառնութեանը հետ մէկտեղ, որ առջի բերան շատ անգամ աւելի անձնական քան թէ աստուածային սէրէն կը սպառճառին մահին սոսկումով, դատաստանին խստութենով ու դժոխքին տեսքովը. որ աւելի կը ցաւցընէ քան թէ կը մխիթարէ, աւելի սիրտը կը սպղտորէ քան թէ հոգին կը պարզէ, աւելի մեղքին վէրքը կը յայտնէ անոր ցաւալի յիշմունքովը, որչափ որ լուացմունքովը կը մաքրէ :

Աստի ասոնց ամէնը հերիք չեն ինծի. հապա դուն, ով տէր իմ, « Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ, և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս ». դուն կրկին և կըրկին նորէն դարձեալ մէկ ուրիշ անգամ մըն ալ լուա զիս կըսեմ, լուա անանկ արցունքով մը, որ միայն աստուածային սիրով վիրաւորած սրտէ մը բղխի՝ մեղքով ամենասիրելի Աստուածս վշտացընելուս



համար, որ մինակ ինձի համար մեռեալ  
 Յիսուսին սիրոյն թախուի, որն որ մեղօքս  
 վիրաւորեցի, որ միայն ՚ի սէր խաչակցելոյն  
 վասն իմ կաթի, զոր անօրէնութեամբս  
 ՚ի մահ մատնեցի: Ահա ասանկ արցունք-  
 ներ մը աչքերէս աղբիւր եղած, ճշմար-  
 տապէս զուտ մաքուր անխառն արցունք  
 մըն է, սուրբ և ՚ի մեղաց սրբիչ հողիս,  
 Ատուծոյ հաճոյական ընդունողական  
 սրբարար և արդարացուցիչ, երկնաւորին  
 արժանի սպտարագ մը սեղանի վրայ վար-  
 դելով ծաղիկներով պսակած, սրբոց և  
 կատարելոց արցունք մը, պարզ և մը աս-  
 տուածային արդար ու առաքինի հողինն-  
 րուն աչքին տրուած, որ մաքրութեամբ  
 հողոյ և լուսաւորութեամբ մտաց կը սփռ-  
 փեն կը մխիթարեն կը դարդարեն կը պա-  
 րարտացընեն մտաց հողեր անդաստանը  
 հողին սուրբին պարզեներովը, խաչա-  
 բարձ մեռեալ Յիսուսին խաչակից մահա-  
 կից ընելով: Աս տեսակ արցունքի վրայ  
 էր խօսքս, ըսելուս՝ որ Ատուծոյ քաղ-  
 քին տեսքը զուարճալի կընեն ու բոլոր  
 Միոն լեռը կը թաթախեն կընկղմեն. «Ղը-  
 նացք դետոց ուրախ առնեն դքաղաքն Աս-  
 տուծոյ»: Աս անուշ ու զուարճալի ջուրն-  
 րուն դրօսանքներն են՝ Գողգոթայի բար-  
 ձունքներէն ինչւո՞ր դարիս դարիս ինչպէս  
 Յորդանանի գետ մը, ու Գեթսեմանի պար-

տէղներուն դաշտերէն խաղալով անցած  
 Քրիստոսին արցունքին ու արեան կաթիլ-  
 ներուն հետ, ինչպէս մէկ հարսանեաց օ-  
 ժիտ մը պարզեւ եղած հողին սուրբէն  
 Քրիստոսին հարս եղող հողիներուն, ո-  
 րուն օրինակ եղաւ Վաբանին իր դստերը  
 տուած հարսանեաց օժիտը. « Եւ ետ նմա  
 դրօսանս լերանց և դրօսանս դաշտաց », ,  
 այսինքն լեռներուն ու դաշտերուն ջուրե-  
 րուն զուարճութիւնները : Ահա տէր իմ,  
 աս ջուրերով լուա դիւ ու շատ անգամ ա-  
 մէն օր ամէն դիշեր լուա . աս քաղցր գե-  
 տերը յստակառուակները առատութեամբ  
 տուր աչքերուս, դի'ի մահ չննջէ : այս-  
 պիտի Սելովամիսն ջուրը խրկէ զիս, ասանկ  
 Պրոպատիկէ աւազան մը ցուցուր, որպէս  
 զի ստէպ հոն ինչպէս լուացուելովս սովա-  
 րական մեղքերուս ու ստէպ վերանկումնե-  
 րուն հողուոյս վրայ մնացուկ հին ու նոր  
 կեդտերէն բորտութենէն սրբեալ մաք-  
 րուիմ . աս արցունքները կուղեմ որ ամէն  
 բաժակիս մէջը ինչպէս խմելիքիս հետ խառ-  
 նուին, որով Աստուծոյ տեսոյն կարօտ ծա-  
 րախ հողիս զովացեալ լցեալ լիացեալ,  
 կենդանութեանս ատեն չզաղրիմ կանչե-  
 լէն . « Եղեն ինձ արտասուք իմ 'ի տուէ  
 և 'ի դիշերի, և այն զի ասէին ցիս՝ թէ ո՛ր  
 է Աստուած քո » : Բայց ասոնց ամենուն  
 վրայ « Առաւել լուա դիւ » կըսեմ . վասն

զի կուզեմ կը փափաքիմ կրկին և կրկին լուացուիլ ան սիրուն անուշ աչքերուդ ար-  
ցունքին կաթիլներէն ու բոլոր սրբասնեալ  
մարմնոյդ արեան քրտինքի զետակնե-  
րէն, որ պարտէզիս մէջը աշխրբիս մեղաց  
հետ և իմին մեղքերովս ալ բեռնաւորած  
անմեղ դառն Աստուծոյդ ամէն կողմէդ  
վազցուցիր ու մէջը թաթխեցար մնացիր  
լուանալու դանոնք . լուա անսուրբ ու ան-  
զին արունիդ զետակներէն, որ Ղողզո-  
թային գլուխը խաչին վրայ վէրքերուդ խո-  
ցուածներէն վազցուցիր ուռղելով անթիւ  
հոգիները՝ փրկելով մեղաւորները նոյն ա-  
րունին արդեամբը . լուա զիս ան տաքուկ  
արիւնախառն ջրով, որ այն ինչ մե-  
ռեալ խաչին վրայ, տէզին հարուածովը  
կողիդ պատառուածէն խաղացուցիր՝ նոյն  
ջուրին արժանիքովը կենդանացընելով  
մեղքով մեռեալ հոգիները ու անոր կա-  
թիլներուն ցայտմունքով բանալով ՚ի մահ  
նեղեալ աչքերը ՚ի լոյս շնորհաց :

Ահա Աստուած իմ, այսպիսի մէկ սուրբ  
լուացմունքի մը ձեռքով ու միջնորդու-  
թեամբը սրբելով հոգիս մեղքերէն, սուրբ  
բէ զիս ալ . « Եւ ՚ի մեղաց իմոց սուրբ  
արա զիս » : Վասն զի ասանկ երկուքը մէկ  
զիս լուանալէդ ետքը, հոգիս բոլորովին  
մարմնաւոր ու աշխարհային սէրերէն զը-  
տած մաքրուած, ձիւնի պէս կը ճերմըկ-

նայ կը փալփւայ կը պայծառանայ, մանա-  
ւանդ որ անկէ աւելի « Լուս, և քան զձիւն  
սպիտակ եղէց » . կը փայլի ինչպէս դրախ-  
տին մէջ առջի անգամ նորաստեղծուե-  
լուն աստուածային երեսիդ պայծառ գե-  
ղեցիկ պատկերքին նման, ու ինտոր որ  
ետքի անգամ մկրտութեան խորհրդաւոր  
աւազանին մէջ վերաստեղծելու ճիւնա-  
փայլ սպիտակ պատմութեանով, ու ինչպէս  
որ Յիսուս Քրիստոս Յորդանանը ապաշ-  
խարութեան մկրտութիւնը լուսցուելուն  
հոգին սուրբին աղանակերպ տեսեամբ  
թեատարած հոլանելովը գլխուն վրայ :

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ 2 .

« Միրտ տոչրք հաստատուեալիս Սատուած, և  
հոգի ուղիղ ետրոգեալ ՚ի փորի խնում » .

ՍԱՂՄ. Ծ. 11 .

Ապաշխարողին բարի սովորութեան մէջ  
յարատեութիւնը :

Թէպէտ մեղքին չար ու վնասակար բը-  
լալը ճանչցեր եմ, գիտեմ ինչ կորուսա-  
ներ ինչ վնասներ կը պատրաստէ հոգիիս  
ժամանակին ու յաւիտենականութեան



մէջ, վերջապէս զրկելով արքայութենէն զիս ու յախտենական գժոխքի արժանի ընելով, բայց ահա որչափ անցեալ կեանքիս մէջ գործածներուս վրայ ցաւերս սաստիկ ու ներկայիս ու ապագային վրայ առաջադրութիւններս հաստատ ըլլան, այսու ամենայնիւ տեսնելով զիս արդէն ՚ի մանկութենէ այսպիսի ապականեալ բնութեան մը ձեռքը զերի, մեղքին հակամէտ, անգուսպ կիրքերու ու ապստամբ զգայութիւններու մը տէր, ու ալ մէկ շատ վըտանդներու փորձութիւններու մէջ մնացած, որ ամէն անգամուն նոյն խեղճութիւններուն նշաւակ նպատակ կրննն զիս, որով և վերջս ալ անստոյգ: Ասան զի հիմա աստ և այժմ մտքիս որոշմունքը ու կամքիս զիտաւորութիւնը մեղքէն ետ կենալու երաշխաւորութիւն մը չեն կրնար ընել ինձի ու կատարեալ ապահովութիւն մը տալ, որ ինչուան ետքը ամուր հաստատ կարենամ պիտոր մնալ բարի առաջադրութիւններուս մէջ: Ուստի զեռ նոր ապաշխարութեան հոգի ստանալով՝ քայլ մը չըրած ասկէ անդին, հիմակուցմէ չափելով հաշիւ ընելով թշնամիներուս ուժը ու անձիս տկարութիւնը, փորձութիւններուն սաստկութիւնը ու իմին փոփոխական ու անհաստատ բարքս, բոլորովին յոյսս կտրած ինձմէ, ահա Աս-



առաձ իմ, նորէն քեզի կը դառնամ կիյ-  
նամ, քեզմէ կարողութիւն ճար կը փնտը-  
ռեմ ներկայիս հետ ապագային համար  
ես: Վասն զի ինչպէս որ առջի շնորհ-  
քը քենէ եղեր էր, որով մեղքէն ուժով  
մը խլեցիր փրցուցիր զիս, նոյնպէս ալ  
աս երկրորդ շնորհքը քու ձեռքովդ կու  
դայ ինձի, ինչուան ետքի շունչս ամուր  
կեցընելու զիս, մեղքը ատելու վերջին ա-  
տելութեամբ մը ու մենձ սոսկումով մը ետ  
կենալու անկէ, ինչպէս մէկ խիստ մենձ  
չարէ ու հոգոյ փրկութեանս մահուչափ  
թշնամիէ մը: Հապա ընտոր որ անգամ մը  
ետ կանչեցիր զիս անկէ սրբարար շնորհ-  
քով յարդարութիւն, նոյնպէս ալ միշտ  
կանչէ յարատեական շնորհքովդ 'ի սրբ-  
ութիւն, սուրբ սիրտ մը դնելով կուրծ-  
քիս մէջ, ուղիղ հոգի մը նորոգելով ծո-  
ցիս վրայ. « Սիրտ սուրբ հաստատեա  
լիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա 'ի  
փորի իմում »:

Իրաւ Աստուած իմ, ստեղծելուդ ատեն  
աս սիրտս սուրբ ու մաքուր ստեղծեր էիր  
զքեզ սիրելու համար մինակ ստեղծած  
կուրծքիս մէջ դնելով զանի, իրաւցընէ  
սուրբ էր անիկայ անանկ մէկ ամենասուրբ  
մը սիրելուն նկատմամբը. բայց ահա ա-  
նիկայ զժբաղդութեամբ մը քեզ սիրելը  
թող տալով, պատահմամբ մեղքը սիրել

սկսելուն , առջի սրբութիւնը մէկէն գնաց  
 իրմէ , երթալով միանգամայն անոր հետ  
 ամէն գեղեցկութիւնը լոյսը փառքը ու բո-  
 լոր բարեմասնութիւնները , ու այնպէս  
 զուրկ ամէն գերազանցութիւններէն ու  
 բարութենէն՝ եղաւ մեղաւոր անմարուր  
 անսուրբ սիրտ մը , մթուն խաւարին մէջ  
 զգուելի ատելի սուրբ աչքերուդ : Բայց ու-  
 բովհետեւ հիմա անհուն ողորմած կամքդ  
 շարժեցաւ միայն աս սիրտը սրբարար շը-  
 նորհքիդ առատութեամբ ու ասպաշխարու-  
 թեան սուրբ արցունքին խորհրդական  
 լուացմամբ նորէն իրեն առաջուան սրբու-  
 թեան վիճակը կանչելու , նոյն սուրբ սիր-  
 տը դարձեալ հաստատէ , նորէն դիր կուրծ-  
 քիս մէջ , տալով անոր իր կորսընցուցած  
 սրբութիւնը ու անոր հետ առջի ամէն ձիր-  
 քերը , պարզեները , առաքինութիւնները ,  
 ուրկից թալլըուեր էր մեղքին ծառայ ու  
 սատանային գերի ըլլալովը : Եւ այնպէս  
 սրբած մարբած պայծառ փառաւոր , այն-  
 պէս մը ամրցուր հաստատէ տեղաւորէ  
 բենուէ ներսս , որ կարող չըլլայ ալ մէկ մը  
 իր տեղէն շարժել կամ արմատէն խլել  
 հանել զանի , ստեղծողէդ դուրս նորէն սի-  
 բելով անսուրբ ստեղծուած մը , և ըստ ու-  
 բում սրտին կեանքը սիրել միայն է , ու  
 մահը՝ զաղրիլ սիրելէն , ուստի միշտ առ-  
 տուածային սիրովդ բոցավառած զանի՝

գրեց սիրելով կենդանի ըրէ, ու սիրելով  
 ան որ սիրելի է քեզի ու չխտրելով որն  
 որ ատելի է քեզի. « Սիրտ սուրբ հաս-  
 տատեա յիս Աստուած » : Բայց որպէս զի  
 աս սիրտը միշտ նոյն կենդանութեանը  
 մէջ հաստատուն քաջառողջ յարատե  
 ապրի մնայ, դուրս ըրէ հանէ իզմէ աս մե-  
 ղաւոր տղեղ ախտացեալ զաղջ ցուրտ ան-  
 սուրբ սիրտս, ու զիր անոր տեղը քուկին  
 անմեղ մաքուր գեղեցիկ վառուն սիրուն  
 սուրբ սիրտդ, նոյն սրտէն հաղորդելով  
 հոգիիս ամէն բարութիւնդ. ինչպէս մէկ  
 յԱստուած միաւորեալ կենդանի սուրբ  
 սրտի արունէ մը, կամ թէ ինչպէս աս-  
 տուածսիրութեան աղբիւրէ մը գետօրէն  
 խաղացուցանելով հոգիիս ամէն մասունք-  
 ներուն սրբութիւնը, որպէս զի իւրաքան-  
 չիւրը անով սուրբ ըլլալու սկսին, սրտիս  
 ամէն մէկ շարժմունքը անկէ կենդանու-  
 թիւն առած սկսուած ընեն, անոր զիմա-  
 ղրութեանցը ընթացակից ըլլալով ու հա-  
 մաձայնելով. և ահա ան ատեն սիրտս ճըշ-  
 մարտապէս սուրբ եղած կը նորոգի: Եւ երբ  
 անիկայ այսպէս սուրբ է, նոյն ատեն հո-  
 զիս որ անոր անբաժանելի ընկեր կը հաս-  
 տատուի իր ուղղութեան արդարութեան  
 ճամբուն մէջ, սրտին սրբութենէն ուղ-  
 ղութիւն մը տալով հոգիիս, որով երկուքն  
 ալ միանգամայն փոփոխակի կը հաստա-

տունն կը նորոգին . « Եւ հողի ուղիղ նորոգեա 'ի փոքի խմում » : Ան հողիս կըսեմ՝ որ աստուածային բերանոյդ ճշմարիտ շիտակ շունչ մը ու պայծառ երեսից նշոյլն էր իր ստեղծուելուն՝ ուղղութեան ճշմարտութեան լուսաւոր կետին մէջ , սկզբնական մեղքով անկէց շեղելովը , նոյն բնական լոյսին հետքն ալ կորսընցուցած , մէկէն սխալ ծուռ ճամբաներուն մէջ մտլորեալ մնաց . անկից ետքը ամէն մէկ բանը ապականեալ բնութեանը առաջնորդութենով տեսնալով և դատելով , և որ բոլոր մարմնոյն աչքը ու լուսատու ճրագը պիտի ըլլար , սկսաւ միջուն մէջ դանդաշել կոյր մարմինի մը առաջնորդութեան ներքե՛ ըստ մարմնոյ դատելով և գործելով , որով 'ի սկզբան արդար ուղիղ հողիս դարձաւ եղաւ մեղաւոր ու ապականեալ մարմին մը :

Բայց դուն , ով Աստուած իմ , որ վերէն քուկին անհատնում ողորմութեանդ այցելութենով մեղքին մոլորեալ ճամբաներուն մէջ եկար գտար , ապաշխարութեամբ նորէն կանչելով դանի յուղղութեան ճանապարհը , դարձեալ կրկին անգամ նորոգէ անոր մէջ , պարզեցնելով հողիս ան կորսընցուցած ուղիղ դատմունքը , լուսաւոր հետքը , որպէս զի ասկից ետքը միշտ ուղիղը ճշմարիտը արդարը և ըստ

Աստուծոյն մտածելով ընելովը , մարմինը  
 ևս իր ետեէն Աստուծոյ ճամբուն մէջ ա-  
 ռաջնորդէ տանի , աստուածային պատուի-  
 րանաց շաւիղը մտցընելով և 'ի սուրբ յօ-  
 րէնս նորա զտիւ և զգիշեր խորհել և առ-  
 նել տալով , և ըլլալով ճշմարտապէս լոյս  
 աչաց և ճրագ մարմնոյ . « Եւ հոգի ուղիղ  
 նորոգեա 'ի փորի իմում » : Ահա Աստուած  
 իմ , ասանկ ուղիղ հոգի մը հիմա նորէն  
 նորաստեղծելով զիր կուրծքիս մէջ , հին  
 մարդը մեղաց ուղղութեամբ արդարու-  
 թեամբ նորցընելով վրաս , ու աս նախա-  
 ժաման շնորհքներէդ ետքը՝ մեղքէն ապաշ-  
 խարութիւն նորոգելուդ , յարատեական  
 շնորհքով մըն ալ նորոգէ զիս , ապաշխա-  
 րութենէ սրբութեան ուղղութեան վի-  
 ճակին մէջ միշտ հաստատուն անաստան  
 պահելով ինչուան վերջը կեանքիս ետի-  
 շունչը :



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ Է .

« Յայնժամ հաձեցիս ընդ պատարագս ար-  
դարուքեան, յորժամ ուշադից պատարագս  
հանցեն 'ի սեղան քո զուարակս » .

ՍՅՂԾ. Ծ. 20 :

Ապաշխարողին Աստուծոյ արդարութեանը  
վճարմունքը :

Ահա Աստուած իմ, ինչուան հոս տեղ  
աս ամէն ապաշխարութեան սաղմոսեր-  
գութիւններու մէջ որ 'ի խորոց սրտէս  
ողբաձայն երգեցի քեզի, ու այսքան լե-  
ղի արցունքներու՝ որ ցաւաղնեալ ան-  
ձամբս կաթեցուցի դիմացդ մեղքերու  
վրայ ապաշխարութիւն ընելուն, յուսով  
աստուածային անհուն ողորմութեանդ,  
անկեղծ խոստովանութեամբ բերանոյս,  
ներքին սրտցաւով հաստատ առաջադրու-  
թեամբ մը ու խոնարհ աղօթքներու հա-  
ռաչալից թաղծութեամբս, աս ամէն թէո-  
թիւնները՝ որ ճշմարտապէս ապաշխարող  
ըլլալու կը պահանջէին, թէ որ պէտք ե-  
ղածին պէս ու կրցածին չափ ըրի, ալ կը  
մնայ ինձի ընելիք բան մը իմ կողմանէս  
հաշտուելու քեզի հետ իբրև հայր որդի

Համբուրիս սիրոյ և գրկախառնմամբ: Ահա հոս տեղ գեռ պակաս բան մը կը գըրտնամ, հարկաւոր դաշինք ու զլխաւոր թէութիւն մըն ալ կայ ինծի 'ի գործ դնելու, առանց որոյ քեզի հետ կատարեալ հաշտութիւն ու հաստատուն խաղաղութիւն չեմ կրնար ապահովութեամբ ունենալ. իրաւորմութեամբ լմնցած է ամէն բանը քու կողմանէդ ինծի ներելուդ մէջ, բայց իմին կողմանէս ալ ընելիքներ ունիմ քուկին արդարութեանդ, մեղքերուս համար քեզի վճարելուն մէջ. որովհետեւ նոյն ատեանը չէ գոցուած, բաց է ինծի համար հոս կամ հոն, գեռ արդար կշառքին թաթերը մեղքերուս ծանրութեան զիմացը վճարմունքներ արդիւնքներ բարի գործքեր կուզեն հաւասարաչափ ըլլալու համար, վասն զի թէ և որոշմունքները արիական ու կամքերը պատրաստական ըլլան, բայց քանի որ ան բարի առաջադրութիւններուն ուղիգ զիսաւորութիւններուն գործադրութիւնները չէ եղած, որչափ որ ան չար յօժարութիւնները մեղանշական կամքերը մահացումունքին հողիին վճարողական կրակներէն անցած սրբուած չէ, չէ արդար ապաշխարողին պատարազը, պէտք է նախ առաջ գոհընել մեղաւոր սիրտը, ուսկից մեղքը սկըսաւ երել մտքին խորհուրդները, որ մեղ-

քին գործակից եղաւ . պէտք է աղամային հին մարդը մեղաց ցանկութեամբ խարէութեանն խաչ հանել , և նոր մարդը որ ըստ Աստուծոյն է՝ դգենուլ սրբութեամբ և արդարութեամբ . պէտք է սպաննել զերկրաւոր անդամները , խլել կտրել նետել ձեռքը ոտքը , որ յաւիտենական կեանքին խոչընդոտն կըլլան . պէտք է ուխտ դնել աչքին չնայելու աշխարհի ունայնութիւններուն , ամուր սանձեր ու արթուն սափազապաններ կայնեցընել շրթունքներուն ունայնախօսութիւններուն բամբասանքին հայհոյանքին , սանձել զսպել կոկորդը ճընջմունքով պահքով ժամով : Ասանկ բաներ են աստուածային արդարութեան ուխտից պատարագները , որ դոհելու զուարակը լաւ մը կապած կաշկանդած , իր արեան գետերուն մէջ նախ առաջ թապլարկելով քամելէն վերջը , ծաղկապսակ սեղանը կը հանեն , պատրաստական այրելու մոխրելու ինչպէս մէկ ողջակէզ պատարագ մը արդարութեան , ուսկից բան մը չաւելնար : Ահա ան ատեն ևս ալ ուրախ ու զուարթամիտ պատարագիս վրայ , տեղը կու դայ ինձի ալ ըսելու . « Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան , յորժամ ուխտից պատարագս հանցեն՝ ի սեղան քո զուարակս » :

Ահա Աստուած իմ , ինչուան հոս տեղ

քեզի ըրած պատարագս սոսկ ապաշխա-  
 րութեան պատարագ մըն էր առանց ա-  
 րեան առանց կրակի, միայն ներքին ցառու  
 զղջում մը անցած մեղքերու համար, ու  
 բարի առաջադրութիւն մը ապագային հա-  
 մար ալ չգործելու դանձնք, որ չէին կըր-  
 նար լիովի դոհ ընել քեզի, դեռ անոնց  
 համար հատուցանելու պարտաւորութիւ-  
 նը մնալով վրաս: Բայց ասկից ետքը քե-  
 ղի ընելիք պատարագս արդարութեան  
 պատարագ մը կըլլան արեամբ և հրով,  
 քեզի դէմ ըրած անիրաւութիւններու  
 համար վճարելով աստուածային արդա-  
 րութեանց որչափ որ կարելի է, հաւասա-  
 րաչափ Աստուծոյ մենծութեան վեհափա-  
 ռութեանը, որ անարգուեցաւ, սրբութեա-  
 նը արդարութեանը որով անիրաւեցաւ ի-  
 րեն, համաչափ ընելու ջանալով հատուց-  
 մունքը ապաշխարանքը մեղքին ծանրու-  
 թեանը շատութեանը ու տեղութեանը  
 նկատմամբ, ըստ պարագային թուոյն և  
 տեսակին, չափելով վճարմունքը, աւել-  
 ցընելով կամ նուազելով պատիժը: Աւս-  
 տի ինչուան որ բարի առաջադրութիւննե-  
 րուս գործադրութիւնը չեմ ըրած, այս-  
 ինքն քանի որ բամբասած եղբօրս անու-  
 նը չեմ շտկած, զողցած յափշտակածս  
 ետ չեմ դարձուցած, տուած դայթակղու-  
 թիւնս մէջ տեղաց չեմ վերցուցած, ին-



չուան որ համբուրիւ հաշտութեան խաղա-  
 դութիւն և սիրոյ քինախնդրութիւնը նա-  
 խանձը ասելութիւնը սրտէս դուրս չեմ  
 ընել, հպարտութեան բարկութեան ազա-  
 հութեան կուռքերը սրտիս սեղանէն վար  
 չեմ առնել չեմ փշրել, անմաքրութեան  
 սրականութեան տաճարը չեմ քակել, չեմ  
 կրնար զոհ ընել զքեզ պատարագիս վրայ  
 ու հաճեցրնել: Յայց երբոր ասոնց ամէնը  
 կրնեմ, ահա ան ատեն պատարագս իրօք  
 ու արդեամբ ըլլալով արդարութեան սա-  
 տարագ մը՝ կը սկսի վերէն հաճութիւն ցու-  
 ցանել անոր, « Յայնժամ հաճեցիս ընդ  
 պատարագս արդարութեան »: Ահա ան  
 ատեն ամէն օրէնքը լեցուելով, արդարու-  
 թիւնը տեղը երթալով, սիրտդ զոհ երեւոյ  
 ուրախ, կատարելապէս հաշտուած մեղա-  
 ւորին հետ մէկէն կիջնաս կը հոտոտիս  
 անոր անուշ բուրմունքին՝ որ առաջուրնէ  
 իր ծխով բոցովը ետեէ ետե բարդելով  
 ելլալովը ծաւալեր էր աստուածութեանդ  
 աթոռին, զմայլելով զուարճանալով վրան  
 իրրե խաղաղական երեկոյի ողջակէզ մը,  
 ու վերին աստուածային սիրոյդ կրակով  
 լափելով լիզելով սեղանի վրայ զոհի կա-  
 ցութեան մէջ քեզի նուիրած զործաղիր  
 կամքերուն ու գծուար ուխտերուն սուգ  
 պատարագը. « Յորժամ ուխտից պատա-  
 րագս հանցեն ի սեղան քո զուարակս »:



Ահա Աստուած իմ, սիրաս որ սրահ մը առաջ գղջման արցունքով թաթխած էր ինչպէս սպանդ մը արունին մէջ, հիմա ինչպէս գուարակ մը սեղանիդ վրայ սկըսաւ այրել վճարման բոցերուն մէջ: Ահա ան մեղաւոր կամքը միտքը ներքին և արտաքին կենսական կեանքիս հետ միատեղ մահացուցմունքի հոդիով կասպուած կաշկանդած պատրաստական ու յանձնառու ողջակիղին ամէն պարտաւորութիւնները, առանց հակառակ շարժմունքի մը, համբերութեամբ տանելով արհամարհանքը, հեղութեամբ ներելով թշնամիին, սրահքով ու ծովով նեղելով մարմինը, խոնարհ աղօթքով ու ջերմ արցունքով մարելով ցանկութիւնը, ասոնց ամէնը ու մնացածը ասոնց նման, ներկայ ուխտերուս պատարագներն են. որոնք թէ և սուղ ծանրազին ու դժուար, բայց միանգամայն կամաւոր ու բոլորանուէր. հասլա առ ընդունէ զասոնք հաճութեամբ սրտիդ՝ի վճարումն մեղացս և հատուցումն արդարութեանդ, որ կը մատուցանեմ քեզի հիմա ու բոլոր կենացս մեջ. « Յորժամ ուխտից պատարագս հանցեն ՚ի սեղան քո գուարակս »: Ասոնց ամէնը իմ կողմանէս սեղանիդ ելած պատարագներն են, որոնց վրայ « Հաճեցիս » կըսեմ, բայց ահա կը լսեմ որ դուն վերէն հաճութիւն մը չես

ցուցըներ անոնց ու զոհ սրտով չես ընդ-  
 ունիր . « Ընդ զոհս և ընդ պատարագս ոչ  
 հաճեցար » : Եւ յիրաւի մեր խորաններուն  
 վրայ ելած պատարագներէն որք արժանի  
 պատարագ մը կրնայ սեպուիլ աստուա-  
 ծային արդարութեանդ , որոնց մէջ գրե-  
 թէ միշտ խառնած կը դառնին անբանա-  
 կան զգայական մարմնաւոր հոտեր մը ,  
 արդէն քիչ մը առաջ մեղաւոր ու ետքը  
 հաղիւ թէ ապաշխարող սրտի մը ընծայ-  
 ներ : Հասլա որն է ան պատարագը՝ որուն  
 նկատմամբ երեսից բերկրութիւնը սրտիդ  
 հաճութիւնը հրճուանքը տեսնուած ըլլա-  
 լովը , « Հաճեսցիա » ըսուեր է . ահա ես հոս  
 տեղ ուրիշ պատարագ մը այլ դուարակ մը  
 կը նշմարեմ հիմա արդարութեանդ սեղա-  
 նին վրայ , որուն արդէն ղենկին մտքած ,  
 բաժակը խառնուած է ու մատուցանող  
 մշանջնաւոր քահանան նա ինքն միածին  
 որդիդ Յիսուս Քրիստոս անմեղ դասն Աս-  
 տուծոյ բարձող մեզաց աշխարհի , որ կը  
 մատուցանէ և կը մատուցուի միանգա-  
 մայն , իրաւցընէ աստուածութեան ար-  
 ժանի պատարագ : Ուստի ահա Աստուած  
 իմ , ասանկ մէկ գերազանց անմահ ու ար-  
 դինաւոր պատարագ մը նշանացի ցուցը-  
 նելով քեզի Գողգոթային գլուխը խաչին  
 սեղանին վրայ , կը մատուցանեմ աս-  
 տուածային արդարութեանդ մեղքերուս

Համար , մատուցանելով ան արցունքն-  
 րը , արունները վէրքերը չարչարանքն-  
 րը , իր պատարագին արտաքին արարո-  
 զութիւնները՝ անոր ներքին ողջակիզին  
 կայութեանը հետ , ան համբերութիւննե-  
 րը , խոնարհութիւնները , հեղութիւնները  
 ու մահացուցմունքները . որոնք իբրև ա-  
 նուշից բուրումներ մը գունդադունդ կել-  
 լան կը ծառային Գողգոթային զլխէն աս-  
 տուածութեան ակթուիդ : Աւ ասոնց ամէ-  
 նը քեզի մատուցանելուս միջոցին , միան-  
 դամայն իմին ապաշխարող սրտիս ուխ-  
 տից պատարագները նոյն սեղանը հա-  
 նած , անմեղ գառին յիշատակը նորոզե-  
 լով քեզի , անոր միջնորդութեան արժա-  
 նիքովը ամէն օր նորէ նոր կը նուիրեմ  
 աստուածային արգարութեանը ՚ի հաշտու-  
 թիւն երեսացն և ՚ի հաճութիւն սրտիդ :



փառք հօր և որդոյ և հոգոյն սրբոյ . այժմ և  
միշտ և յաշխտեանս յաշխտենից . ամէն :

Ան որ ունի իրեն մէջ ամէն փառաւորութիւնը , միշտ փառաւորեալ է ինքը իրմէ , իրմով ու իրեն մէջ , և որ փառաւորեալ է յերկինս իր իմաստութեամբը սուրբերէն , այնպէս և երկրի վրայ փառաւորուած է ապաշխարողներէն իրեն սղորմութեամբը , ինչպէս որ իրեն արդարութեամբը կը փառաւորի 'ի դժոխս դատապարտեալներէն . որուն ամէն փառք վայել է ու կը վայլէ միշտ ամէն տեղ ու ամենէն , և փառքին հետ ամէն գովութիւնը բարեբանութիւնը պատիւը և երկրպագութիւնը : Աստի աս ամէն փառքը , որ հօրն է , է և հօրը հետ որդւոյն , որոյ է բնութենակից , և երկուքին հետ հոգւոյն սրբոյ՝ որ է 'ի նոցունց և 'ի նոսին . և ինչպէս երեք դատ անձ բայց մի Աստուած , նոյնպէս երեքին միանգամայն մի փառք . ուստի նոյն փառք հօր , նոյն փառք որդւոյ , նոյն փառք և հոգւոյն սրբոյ : Աւսիկայ ինչպէս որ 'ի սկզբանէ այսպէս էր 'ի յաշխտենից , նոյնպէս և այժմ այսպէս է 'ի ժամանակի և հոգը յաշխտեանս յաշխտենից այսպէս եղիցի միշտ . ամէն :

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՈՒՍ.Ծ

Ահա Աստուած իմ, աս ամէն ապաշխարութեան սաղմոսերգութիւններս, որ ողբաձայն Ողորմեայիս մէջ առաջ երգեցի քեզի սաղմոսերգող ապաշխարող թագադիր մարգարէիս հետ, ընդունէ 'ի դէմս իմ լսելով մեղաւոր բերնէս անոր կողմանէ, և յիշելով զԳաւթի՛ այր ըստ սրտիքո, և դամենայն հեղութիւնս նորա, զանոխակալութիւն զհամբերութիւն զխոնարհութիւն զապաշխարութիւն և զարդարութիւն նորա. հաճութեամբ զմայլէ իմին սաղմոսերգութիւններուս ձայնին ևս անոր պէս ու ընդունէ զիս ալ անոր հետ. որ թէ և յետին անարժան պաշտօնեայ խորանիդ, բայց և օծեալ անոր նման. «Աստուծոյն Գաւթի սիրելոյ քո մի դարձուցաներ զերեսս քո յօժելոյ քումսէ»:

101  
 102  
 103  
 104  
 105  
 106  
 107



## ՅԱՆԿ ԳԼԽՈՅ

	ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ . . . . .	3 . 13
Ա .	ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Ո՞՛՛՛ է մարդ , զի յի չէս գու զնա . կամ որդի մարդոյ , թէ այց ինչ արասցես գու նմա . . . . .	49
Բ .	ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխիթարու թիւն քո ուրախ առնէր զանձն իմ . . . . .	28
Գ .	ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Բարի է ինձ զի խո նարհ արարէր զիս , որպէս ուսայց զար դարու թիւնս քո . . . . .	37
Դ .	ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Դարձո զաչս իմ , զի մի տեսից զնանրու թիւն . . . . .	45
Ե .	ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Ուստ ինձ առնել զկամս քո , զի գու ես Աստուած իմ . . . . .	52
Զ .	ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Ի քեզ աէր յուսա ցայ , մի ափաչեցից յաւխտան . . . . .	60
Է .	ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Մի՛ մտանէր ՚ի դա տաստան ընդ ծառայի քու՛մ , զի ոչ ար դարանայ առաջի քո ամ կենդանի . . . . .	66
Ը .	ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Ողորմեա ինձ Աս տուած ըստ մեծի ողորմութեան քու՛մ , ըստ բազում գթութեան քու՛մ քա ւեա զանօրէնութիւնս իմ . . . . .	73

Թ . ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Քո եմ ես , և կեցո ղիս . . . . .	82
Ժ . ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Ո՛րպէս սիրելի են յարկք քո տէր զօրութեանց , ցանկայ և փափագի անձն իմ ՚ի դաւիթս քո . . . . .	89
ԺԱ . ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Աւուրք իմ որպէս հովանի անցին , և ես որպէս խոտ ցա մաքեցայ . . . . .	98
ԺԲ . ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Լսելի արա ինձ տէր զննճութիւն և զուրախութիւն , և ցրն ծասցեն ոսկերք իմ տառապեալք . . . . .	110
ՎԵՐՋԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ . Տես Աստուած , և նայեա յերեսս օծելոյ քոյ . . . . .	122
ԵՏՔԻ ԶՐՑՈՒԱԾ ՄԸՆ ԱԼ ՍԱՂՄՈՍԵՐԳՈՒՆ . Որ արարեր զօրութիւնս մեծամեծս , Աստուած , ո՞ նմանէ քեզ . . . . .	131
ԵՕԹԸ ՕՐԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՄԱՏՈՒՑ ՄՈՒՆՔՆԵՐ . Եօթնանգամ յաւուր օրհ նեցից զքեզ վասն իրաւանց և արդա րութեան քո . . . . .	142

### ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԱՌԱՋԻՆ ԽՕՍՈՒԱԾ . . . . .	163
Ա . ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Տէր եթէ զըթուես իմբանաս , բերան իմ երգեսցէ զօրհնու թիւնս քո : — Ապաշխարողին զլլծման հոգիին տրամագրութիւնը . . . . .	168
Բ . ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ . Ողորմեա ինձ Աս տուած ըստ մեծի ողորմութեան քում , ըստ բազում գթութեան քում , քաւեա զանօրէնութիւնս իմ : — Ապաշխարողի	

մը աստուածային ողորմութեանը ա-  
պաւինութիւնը . . . . . 173

Գ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Չանօրէնութիւնս  
իմ ես ինձէն գիտեմ, և մեզք իմ առա-  
ջի իմ են յամենայն ժամ: — Ապաշխարողին անկեղծ խոտտովանութիւնը  
առ Աստուած . . . . . 179

Դ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Դարձո զերեսս քո  
'ի մեղաց խնոց . . . Մի ընկենուր զիս տէր  
յերեսաց քոց: — Ապաշխարողին խո-  
նարհ աղօթքը առ Աստուած . . . . . 187

Ե. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Առաւել լուա զիս  
յանօրէնութենէ իմմէ, և 'ի մեղաց խնոց  
սուրբ արա զիս: — Ապաշխարողին կա-  
տարեալ զըջման հոգիին կացութիւնը. . . . . 192

Զ. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Սիրտ սուրբ հաւ-  
ատեա յիս Աստուած, և հոգի ուղիղ  
նորոգեա 'ի փորի իմում: — Ապաշ-  
խարողին բարի առաջադրութեան մէջ  
յարատեութիւնը . . . . . 199

Է. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ. Յայնժամ հաճես-  
ցիս ընդ սրտարագս արդարութեան,  
յորժամ ուխտից սրտարագս հանցեն  
'ի սեղան քո զուարակս: — Ապաշխա-  
րողին Աստուծոյ արդարութեանը վը-  
ճարմունքը. . . . . 206

Փառք հօր և սրբւոյ և հոգւոյն սրբոյ  
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-  
նից . ամէն . . . . . 214

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՍՈՒԱԾ . . . . . 215



